



Բ Ա Գ Ի Ն

© 1967 by A.A. OUSOU

Թ Ի Ի 8

پاكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك قزائجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԾՍՅՈՒՆ

ՎԱՐՈՋ ԽՍՐԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՍՐԱԳԻՐ  
 Դ. ՍԵԱԳԵԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆ  
 ԱՆԿԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Կ. ՇԵԱԿԱՆ  
 Ժ. ԱԹԻՍԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՆՆԵՐԵՆ  
 † ԵՂ ԳՕՑԱԶԵԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԽ

**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
- ԱՐՄԱՆՏ
- Ն. ՊԵՇԻԿՓԱՇԼԵԱՆ
- ՇԱՀՊԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Հ. ՅՈՎՍԵՓԵԱՆ
- Լ. ԳԱՐՄԷՆ
- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ
- Ռ. ԳԱԲՕՆԷ
- Ս. ԲԵԴՈՒԻՆ
- ՇԱՀԱՆԴՈՒՆՏ
- Ս. ՃԻԶՄԷՃԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԻԶԵԱՆ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- Շ. ՊԵՐՎԼՐԵԱՆ
- Ա. ՅԻՑԻԿԵԱՆ
- Ա. ՊԻՍՏՈՒՆՈՎԱ
- Հ. Ե. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ
- .....
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ձ. ՅԱՐԻ, ԹԻԻ 8

ՕՒՈՍՅԱՍ 1967

ԳԵՐԱԹԻ

### ՀՐԱԶ ԶԱՐԴԱՐԵԱՆ

### ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԻՒՐ

( Ա Ն Տ Ի Պ )

Մարդուն արժանի միակ ռսկերանալին երգանկութեան՝ իր փարումն է մոլորանդօրէն Բացայտակին: Եւ նեմե՛լ, եւ օրօրուի՛լ, եւ սաւառնի՛լ, եւ սուրա՛լ՝ դիւքանքին մէջ անոր պարտեղին առկայի: Զրնել կեանքին ո՛չ մէկ գիշում: Ռոմանարե՛լ առաքուր՝ օրերուն ազերսանքները նեմգածէտ:

... Եթէ սակա՛յն – աւա՛զ – եթէ սակա՛յն՝ կայ տեղ մը ուր հարկ է խոնարհել գլուխը, իջնել վար եւ համաձայնիլ գիշակայութեանց, բանայ վերքեր Բացարձակի սրտին վրայ, այն ա՛լ, այն ա՛լ – աւա՛զ – կեանքի՛ մէջն է, մարդո՛ց, իրենց մեղանչահար անկումներուն առջեւ, իրենց խախտած գիտակցութեանց առջեւ, յանուն կեանքին... յանուն Բացարձակին:

\*

Միա՛յն տեղծագործութեան կլանած ժամերն են որ ես երբեք չեմ ափսոսար, ինչքան ալ քուչոզ մէն մի բույլ՝ սրտիս արիւնովը ներկէ շառաւիղն, երբ դէպի անհունը կը գարնէ թւերն իր: Ափսոսա՛լ... Ափսոսալ սիրագործութի՞ւնն առասպելական, թէ՞ գիրկընդխառնումն գերիբական: Ո՛ր, ի՛նչ արկածախնդրութիւն օտարտի, յայտնութեանց սահանք-

ներուն, երանական տեսողութեանց անկրօնութեանը մէջ: Ափսոսա՛լ ժամերն այդ որ կը թեւաբախեն հեւեքում հետ յախտնութեան: Ափսոսա՛լ, երբ պատարագն է մեծահրաշ՝ մարդու սատուածօծութեան:

\*~\*

Մարդիկ, անհատաւորի ճիգերով, հնարամտութիւններ կը գործածեն, վերինները վա՛ր իջեցնելու, յանա՛ւն... հաւասարութեան:

Այդ ճիգերուն մէկ մասնիկը բաւական պիտի չըլլա՞ր՝ զիրե՛նք բշխի մը վեր բարձրացնելու, յանուն...

\*~\*

Նորէ՛ն ու նորե՛ն՝ Զիբենեաց լեռան քարոզները – մտախալածա՛նք: Ի՞նչ պիտի ըլլայ, այո՛ւ, ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրն անոնց:

Կը տեսնեմ արդէն պակասիչ դէմքեր Գիտութեան, ճակտիմ՝ տեսակներու փոփոխութեանց մեծախոռով գազտնիքը կնճուած, եւ նշդրակը ձեռնի՛մ որ կը յառաջանայ յազքա՛խալ:

Պիտի ցնդի՞ն ուրեմն անհետ՝ հիւլէակուտակ գեղեցկութիւններն անոնց եւ մշտնջենական իմաստութիւնն իրենց:

Ո՛ր, թոյլ տուէ՛ք որ դարձեալ օրերն յաջորդեն օրերուն, եւ դարձեալ, գիշերը՝ ցերեկին: Արեգակը, ինչպէս առաջ, դառնայ նորէն շուրջը աշխարհին մէն մի էակի: Թոյլ տուէ՛ք, թոյլ տուէ՛ք որ մարդիկ մեղանչեն դարձեալ, մեղանչեն ընդմիջտ, բայց չկարնչին, կոզմոսի անգունդնեխուն, շողարձակումներն *Հերպէ՛տան Հերպէ՛տին* ու իր Բանին տրիսմէկիստոս, տրտմութեան այն ֆզամիդին մէջ անկրկնելի:

\*~\*

Ինչքան կինը արեւն է՝ կեանքին, այնքան կինը՝ յաւարումն անոր:

\*~\*

— Ի՞նչ պատուէր տամ քեզի, տղա՛ս, որ բի՛ւր ու բիւր անգամ արդէն տրուած չըլլայ մարդուն անուղղայ: Ահա՛, ես պիտի ըսեմ՝ մի՛ վրդովուիլը քու նմաններէդ:

— Ի՞նչ որ ալ ըսեն:

— Ի՞նչ որ ալ ըսեն:

— Ի՞նչ որ ալ ըսեն:

— Ի՞նչ որ ալ ըսեն:

— Ո՞վ որ ալ ըլլայ ան:

— Ո՞վ որ ալ ըլլայ ան:

— Ըսել է՝ ես անգամ մըն եմ:

— Ո՛չ: Դուրս աւելի ուժեղ ես: Տառապէ եւ լո՛ւ: Յաջորդ օրը՝ եղիր դեռ առաւել սրտագեղ:

— Լո՛ւ՛, լո՛ւ՛... Կեանքը կը տարբարուծուի շուրջս, մեխամքին ջուրերը մինչեւ պոկուեմքս, եւ՛ լո՛ւ՛...

— Լուսփիւնը կ'առնէ — համդարտէ՛, տղա՛ս, հանդարտէ՛ — չարտասանուած խօսքերը սրբագան եւ, խորհրդատօր իր փորձասեմեակին մէջ անխալակամ, մշանախեցը մշանախեցին, կը պատրաստէ. բու ցասումներուդ փոխանակ ամուլ, երկունքը մեծ Պատասխաններուն:



Անշո՛ւշտ, արուեստագէտը պէ՛տք է որ պատկանի իր ժամանակաշրջանին: Ուզէ՛ ալ՝ չի՛ կրնար չպատկանիլ: Բայց իր ժամանակին եւ ժամանակին պատկանելու միակ միջոցը՝ բուզէ՛ն չպատկանին է: Իսկ կա՛ն «բուզէ՛ն» որ կրնան տասնեակ տարի տեսիլ:



Նոյնիսկ ընթացիկ յօգուած մը «եղիմակելու» ուժը կը լքէ գիւս, եւ անկարելի կը դառնայ գայն «երկնել», եթէ, այս կամ այն եզանակով, չեք-թայ չգտնէ ան ազգակցութիւնը մարդկայնականին հետ, որուն պաշտպանութիւնը կեանքին մշտարարը կիրքը եղաւ:



Կեանքի ճմեռք, տղա՛ս, վրայ կը հասնի անգործոյն արագութեամբ: Ինչպէս բազէն՝ հոգին իր որսին, ան կը սարսէ բնակարանը կեանքիդ: Եւ ահա՛, յեղակա՛րժ, աչքի՛դ առջեւ, յառնակոյտ մը բեկորներու:

Բա՛ց, մտերնկալ դալկութեամբ, բա՛ց ձեռքովդ, ինչքա՛ն ալ անբընձաբարելի, գանձարկղը Բացարձակիդ: Գանձնիկց Բացարձակին փոխան, ժամն է ալ եղերանան՝ ասպաններու հաւաքման: Հաւաքէ՛, դողդղագին, կեանքիդ կտորուանքը փռչեպատ:

Կը սարսռա՛ս, տղա՛ս: Օրէ՛նքն է այսպէս:

Ահա՛ սակայն, կեցի՛ր, կեցի՛ր, ահա՛ սակայն, հատուցում ամակընկալ՝ Յայտնութիւնդ նորասման: Խրճիթիդ դիմաց ազիտահար, բոցով հրոյ, ահա մարեմին: Տե՛ս, առանց այրելու, կը բռնկի ան աչքիդ առջեւ, ծննդական սարսուռով:

Բնակարանը կեանքիդ, — Պալատ մըն էր, կայք երաշքներու գորչտեսար: Սրբատեղի կամարակաս՝ տօնակատարութեանց անվերջ գար պզծեցիր յանախ, ուր, տունընկէ՛ց, մուտքեա՛լ, չտեսար այլ ինչ, եթէ ոչ լուսամուտ միայն լուսագիրկ: Խեղէ՛ կռչուեմքերուդ սպասարկու, պատրայգները մատնեղծ դզմեցիր, ու չտեսար Յեղեղեղեղ մէն մի աչքէն կաթաղ շիթերն արիւնի, ո՛չ ալ լսեցիր հեկեկանքն արտաբուռու լոյսերուն: Անտաքի՛ր երբեւէ պատուէրին աններող, — Լոյ՛ծ դիզելիս քո յոտից քոց, երբ կ'ասպատակէիր սենեակէ սենեակ ու բնակարանէ բնակարան:

Այժմ է՝ տղա՛ս, բա է ողբաս փուզումն այս, մակասագործա՛յ ծոկըսանձը կեանքիդ որ բու դղեակդ էր սակայն եւ ուր սպրեցար իբր գաւազանակիր սպիտակ :

Այժմ՝ որ ալ գիտես, ծո՛ւ՛ մէջքդ, շո՛ւտ, հաւա՛ք՛, սրտաւորմո՛ւք, բեկորայէր կաթողին կեանքիդ : Այժմ՝ որ ալ բիքերուդ մահալի ստուերն պատաստելն կ'արտացոլան լոյսերն յայտնութեանդ, ծո՛ւ՛, շո՛ւտ, հաւա՛ք՛ սպրանքն աւերակիդ - նուիրակա՛մ առ յաւէտ - ու ալ աղբի՛ւր Ափսոսանքին անձկահալած :

Սկսէ դնել ընդփոյթ՝ քարը սրբատա՛յ քարին վրայ, գոր Զեռք մը խալիդուար, օրերուդ երկայնքին սակայն՝ քանդակեց տարփալիւր ու անհաշիւ գեղխութեամբ :

Թող դանիթներն ընդունին այժմ Յեղնաբաններն հոգիիդ նարահարա՛յ ու յարտակուած անդատակներէն անար՝ հոսին լոյսերն հեղեղատին, երփնագունուած արցունքներուդ ալքիմիայէն : Հաստատէ հապշտայ բարձրա՛քանդակներն անոնց : Կանգնէ արձաններդ, ինչքան ալ մաքրուած, իրենց պատուանդանին : Թոյլ մի՛ տար՝ որ *բոյն դեռն մէջ վայրի հաւքեր* :

Վերահաստատէ իր բարձունքին՝ ակուքն սրբութեանց, որմէ գրկըւած, փարատնն իսկ է աւելի եղկելի ու արժանի՝ լոկ գրութեանց քան յետին ստրուկն իր ստրուկներուն անհամար :

Ի՛նչ փոյթ քէ ան ալ պիտի չըլլայ ելրեք մայիսինն անբերի, գոր չէ՛ր տեսներ արդէն : Տո՛ւր ոսկիներ գանձարկղէդ, տո՛ւր կոտոր կոտոր սրտդ պատաստած... Եւ քող Ֆաուսթն էութեանդ կատարէ Մէֆիսթոյինն հետ, ալ գետնումն, առեւտուրն իր օտարուի :

Բայց, տղա՛ս, սրբէ՛ աչքերդ, միայն քէ գտնէ կայքդ ցնցահար՝ հրաշքն իր կեանքին կորուսեալ :

Հարկ է որ գիտնաս, տղա՛ս, ո՛չ ոք անհետացած է այս արեւի աշխարհէն, անեղծ տանելով իր հետ, միայն փռոքը մարդուն, տանելով անբռնաբար ու անեղծ, սսկեմատեանն Բացարձակի օրէնքներուն :

Ինչքան ալ աղիտահար բնակութեանդ պատուարներուն, ձեզունին ճեղքերէն, եղերականօրէն - սրբէ՛ աչքերդ տղաս - եղերականօրէն մերթն ու բաւք խաժեն ներս, հո՛ն է միայն ուր ալ կրնաս մտնել, ծնրադրե՛ր, որ ալ նիւթը կեանքիդ՝ արիւնաքար պիտի սպառի : Պիտի սպառի՝ փայլատակումներուն մէջ յայտնութեանդ եւ երանութեանդ անլուր :

Կեանքի ձեռքը, տղա՛ս, տղա՛ս, վրայ կը հասնի շանթահարիչ արագութեամբ : Սկսէ շարել - բայց սրբէ՛ աչքերդ - սկսէ շարել ընդ փոյթ՝ քարն աւերուար քարին վրայ, Ապարանքին կեանքիդ :

Հ. Զ.

Նիս,

### ՓՆՏՈՆԵՑԻՆՔ ԼՈՒՍՆԻՆ

Հագճը գլորեի  
 Կտորեի էր ասես լաճաբը լուսնի,  
 Ու սպառուեի էր  
 Աստղերի անբողջ իւզն այդ գիշեր-  
 Ձկար ոչ մի ձեռք, որ մի մտ ղնէր  
 Հիւանդ գիշերուայ խոնաւ սնարին.  
 - Որքա՞ն խաւար էր գիշերն այդ գիշեր...  
 Եւ կոյր գիշերուայ ձեռքը ձեռքիս մէջ  
 Ու աչքերիս մէջ յա՛ւշն աստղերի՝  
 Լացող երկնի տակ ելանք պառլտի,  
 Ու մենք միասին՝  
 Մինչեւ լուսաբաց  
 Փնտռեցինք լուսնին:

### ՈՏՆԱԶԱՅՆԸ

Գալիս է մի ձայն փախչող ռափերի,  
 Տե՛ս՝ տերեւների վրայ գոսացած:  
 Այդ նա՞ է միքէ,  
 Թէ՞ փախչող վիթ է:  
 - Ո՞վ դու խնդաբիւմ՝  
 Իմ երկչոտ ազգիկ,  
 Ո՞ւր ես փախչում, ո՞ւր  
 Այս մութ գիշերին.  
 Տե՛ս, բաց է դուռը իմ հոգու բափուր,  
 Ե՛կ, մի պահ շոյեմ մագերիւկ ռսկին...  
 - Լսի՛ր, մտեցաւ,  
 Ա՛հ, կարծես նա է-  
 Բայց ոտնաձայնն այդ  
 Ինձ շատ է ծանօթ, -  
 Տխրութիւնն է այն՝  
 Իմ հղբայրը խորթ  
 Ու հաւատարիմ,  
 Որի իմաստուն  
 Հոգուն եմ յանձնել  
 Տխու՛ր իմ հոգին...

ԱՐՄԱՆՏ

Թեհրան

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

# ՓԱՐԻԶԱՀԱՅ ԱՆՏԻՊ ԳՐՈՂՆԵՐ

(ԵՒ ՆՄՈՑՇՆԵՐ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԵՐԵՆ)

Վերջերս, գրաւոր ու բերանացի, խօսուեցաւ փարիզահայ գրողներու մասին: Նոյնիսկ ներկայացուեցաւ գրողներու կարաւան մը, որուն մէջ կանուողներէն շատ շատերը բնուած են (կամ կը տառապին) մտային պնդութենէ, որ մասնադէտներու հեղինակաւոր կարծիքով կը համարուի անբուժելի:

Յիշեալ կարաւանին մէջ կան գրողներ, որոնք տարին կամ երկու տարին անկողնի մը քանակ մը կը գրեն. այդպէս, իրաքանչիւրը ըսել կ'ուզէ զգիտցէ որ դեռ կենդանի էմ:

Հազիւ հինգ հոգի հաշուելու է այն գրողները, որոնք իրենց ձեռքին մէջ ունին շարժուն գրիչ, որով պատին ու իշտուն վրայ են, այսինքն պատնէչին վրայ են եւ կարաւանին մէջ:

(Ըսենք նաեւ որ դուրսէն ոմանք՝ փարիզահայ գրողները կ'անուանեն «Փարիզի Տղաքը»: Ատիկա կը նմանի ութսունամեայ ծանօթ մեծ հայրիկ մը (որ իր թոռան թոռը տեսած է) յամառօրէն անուանել «Միմոնիկ»: Այդ չտղաքը կողմաձայնութիւնը անցած են, իսկ երէցները սնցած են եօթնամասունը: Եւ սակայն, յորատեւորէն կը կոչուին «Փարիզի Տղաքը», տեսակ մը հետեւողութեամբ «Փարիզի Գաղանթները» եւ «Փարիզի Գիշերները» վէպերուն, նաեւ «Փարիզի Աղքատները» թատերախաղին):

Կան, սակայն, Փարիզի միւս տղաքը, այսինքն անտիպ գրողները (որոնցմէ մէկ քանիին մասին կ'ուզենք խօսիլ),

որոնք բեկուն են: Հեղինակ են կանազան երկասիրութեանց, եւ կը սպասեն յայտնութեանը հրատարակչական մարմինի կամ մեկենասի:

Ձկն հաւատար գրական մրցանակներու ժիւրիներուն անաչառութեան, եւ առայժմ կը պահեն իրենց ձեռագիրները, սպասելով հիւշական հրաշքի:

Անոնց մէջ կան անկասկած բազմաթիւ բանաստեղծներ եւ բազմաթիւ յուշագիրներ: Կայ նոյնիսկ բառարանագիր մը:

ԿրՊՊ ԱԻԹԱԼԻԻԳԵԱՆՑ, որ մերօրեայ աշուղապետն է, եւ մեծահասակը ամբողջական արուեստագէտ մը, քանի որ թէ՛ կը բանահիւսէ, թէ՛ կ'եղանակաւորէ, թէ՛ կը նուագէ, թէ՛ կ'երգէ, թէ՛ կ'արտասանէ, թէ՛ կը պարէ (նոտակ վիճակով): Ունի հինգ հազար էջերէ բաղկացած ապագան մը, որ կը կոչուի «Կրպօնամէ»: Իւրաքանչիւր էջ կը պարունակէ մէկէն մինչեւ երեք տառ: որով ցարդ արտադրած է տասը հազար տառ: Ինչպէս կը տեսնուի, բաղմարեղուն տառասաց մըն է: Իր տաղերը թէեւ կարճահասակ, սակայն, երկայնամիտ են, եւ յեցուն իմաստներով, հեղինութեամբ, զընտրելով թիւերով, մանաւանդ փիլիսոփայութեամբ: Իր քերթողակիրքին լոյս ալիարհ զտուրն համար կը սպասէ մեծ մեկենասի: Շատեր զարմանահար են իր համբերութեան համար, քանի որ երկար տարիներէ ի վեր, ո՛չ հատար մը հրատարակած, ոչ ալ աշխատակցած է թերթի կամ հանդէսի: Պէտք է գիտնալ որ



Հանձարները Համբերող կ'ըլլան: Ահա աւելորդ ապացոյց մը եւս էր Հանձարեղ գուտան մը ըլլալուն:

Առայժմ, ապրուելու Համար, իբրև ժեկենաս ունի ֆրանսական Ընկերային Ապահովութիւնը, իբրև վաստակաւոր Հնոցական, նախ նաև եւ ապա գարծարաններու, նաև իր ազան՝ Ջումշուտը, որ որակաւոր, վարպետ արհեստաւոր է, ամուսնացած է Հայուհիի մը հետ, եւ Հայր է ութ զաւակներու (իններորդ մը ճամբայ էլած է ու կը Հասնի ի ժօտոյ): Ջումշուտ լաճորէն շահելն զատ իր սարուստը, բարձրորէն վարձատրուած է ֆրանսական կառավարութիւնէն, ութ անգամ Հայր ըլլալուն պատճառով: Ջումշուտ կը Հողայ իր Հանձարեղ Հօր ծիւղէ (օրական շորս Երար), դիւին (օրական վեց շէշ), թէյը (օրական յիսուն բաժակ) եւ վարձքը սենեակի:

Եթէ Ջումշուտ իր Հօր մասամբ մեկենասն է, իր զաւակներն ալ, Հակառակ անշահափաստ ըլլալուն, կամ ունի ճիշդը անշահափաստ ըլլալուն Համար, իրենց Հօրը մեկենասներն են, քանի որ Ընկերային Ապահովութիւնը կը վճարէ անշահափաստներուն Համար:

Իբրև նմոյշ կրպոյի զբթողական գործէն, կը ներկայացնենք իր միակ երկար տաղը, որ ներթիւն նայելով՝ դարձեալ կարճ է, քանի որ կը նկարագրէ ոգիտական մը: Ահաւաստիկ.

- Ձեկայի դուեր, վիշապ ու վամբիր, ինձ էլ քրշեցին սառնապատ Սիբիր: Ես չէի պաշտել Ստալին կուսէր, Ձե՛ի վնարել իմ գովքի տուրքը: Ինձ շարտեցին մի գամբար բանուկ, Ընկերավարութեան արպէս մի ըստրուկ: Ես աշուղ էի, հղայ փայտահատ, Էք գործն իմը չէր, դարձայ յուսահատ: Թառի փոխարէն ինձ տուին կացին, Երափի փոխարէն իշու աճացին: Տապալած ծառեր, մարդկանց մահացում...

Սոցիալիզմ էիմք այդպէս կառուցում... Ինձ կարծում էին խղճուկ մի խախտ... Չարս տարի յետոյ քամբարից փայտայ: Անցայ Ձինաստան, Բեւաջայ խնկրուկ,

Փայտրատականը եղաւ մի փայտուկ: Ձիներ իսկական խենթ կարծեցին ինձ. Ծիծաղում էին, մերք տալիս բրիճն: Գազածուծիւնը դարձել էր մի ծով, Ո՛նց կշտակայի մի ափ բրիճնով: Սոլառնում էին քէ՛ սարսափ, քէ՛ սով: Եւ ճիշդն ասելով՝ գիծ էի կիսով: Միշտ գընում էի Ես դէպի հարաւ: Գողանում էի միրգ, բանջար ու հաւ: Պարկեշտ մարդ էի, դարձայ գող գնչու. կարգին հայ էի, Բեւաջայ մանչու: Իմ կեանքն եղել էր տանջանք, Բաշխուլ. նախ կըմախք եղայ, ապա էլ մի շուք: Սայաթ նովի քոռ կրպօն էր գուսան, Բայց կամուրջովն ինձ շինեց դերասան: Ճարեցի հագուստ, եղայ պարուիզպան, Ձեւաջայ խուլ-համր. կատարեալ անբան: Երբ մարդ ծնում է ինձ պէս հայկազուն. Ո՞րտեղից գիտնայ մահչուի լեզուն: Ասի՛— «կրպօ ջան, դու հարկ է հինա, Աւելն օր խաղաս լաւ բանգումիս»: Էդպէս էլ արի երկար ժամանակ, Բայց մտնով խօսում էի շարունակ: Անցան ամիսներ, հասայ ծովեզբէ, Բերանս բաց արի, երգեցի հայ երգ: Էլ չէի խուլ-համր, ոչ էլ մանչու, չիմ... Կար մի շոգեմաւ, կանգնեցի առջին: Ուր լեզու գիտեց մի քարգման գըտայ. Նրբա հետ մէկտեղ շոգեմաւ մըտայ: Մի խաչ հանեցի ու եկայ ծունկի, Կարծես գգացի բուրմունքը խնկի: Ասացի՛— «Ո՛վ շէֆ, ես եմ Սիբիրցի, Բայց Ագատուրիւնն է որ բնորեցի: Առէ՛ք, տարէ՛ք ինձ: Դըրէ՛ք մի փորձի. Թէ հաւանեցի՛ք՝ կը լըծուեմ գործի, Ըստայտնովեան քափով կ'աշխատեմ, Որ քամբայտ իմ մորթն ընդմիշտ ազատեմ:

Շատ բան չեմ ուզում, օրն երեք պընակ Մսով կերակուր, Ընկ ու արգանակ, Պանիր ու պըտուղ, Իսկ արպէս պաճշիշ. Առատ ծխախոտ ու գինի չորս շիշ»: Շէֆը ծիծաղեց. սասց՝— «Քեզ սենեակ Ու հագուստ կը տամ, մի շիշ էլ քոնեք: Ես շատ եմ սիրում մարդկանց կանծարան: Թէ լաւ աշխատես իբրև հընցպան, Բեզ կը տանեմ հետս ինչուան Գըրմա...»

ես քրդանեցի — «վա՛յ, ի՞նչ քայտ է սա: Իմ ճիշդ ուզածն էլ հենց էք էք, ազբէք. Բայց դու մախ մի շիշ կարմիր գինի

քեր»:

Որպէս հրնոցպան, եզայ շատ չարքաշ, Բայց ես կորուսի ուղիդ քրսան քաշ: Արդէն էի շուք, ու գարձայ մանուկ, Իմ ամէն ինչն էլ եզած էք մանքուք: Բայց ուտում էի, քիտում ու կլլում, Պեխով խոհանոցն էի միշտ աւլում: Ես դարձել էի կատարեալ Շարայ Մուզի նստեցի ընկերութեան վրայ: Գինու սրբազան տակառներն տակ ծրկրպագեցի սիրով անյատուկ: Գինուն ես էնքան էի կարօտել, Որ ուզում էի գրկել, հոտաւել: Ծոցումը մնջել միշտ էի ուզում, Եւ նըրան խմել նայնիկ եքազում: Երբ ճաւն առնում էր մի ափում

հանգիստ,

Ես դիտում էի մարդկանց կաց ու ճիտ: Մի կեզմ շքեղանք, մարմար, մարգըրիտ, Մազիկ ու ծիծաղ եւ լոյս ու ժըպիտ: Քարով, գահարով հիւտում մի դըղնակ, Ոսկիով բանում մի հազար սննեակ: Ապարանքն ամբողջ տանքէլ ոսկեքել, Ուր կայ կախուել, կերտխում, կայքել: Հարիւր հարիներ, որոնց երէցը Տարիքով հասնում էր տասնըվեցը: Մի ապրող եքիաք, քէլի մի

գըրայտ...

Միւս կողմ ժողովուրդն ունէր միայն լայտ, Ամբոխն էր նըման մի անտըր հոտի... Մեռնում են քանկել, հիւանդ, անօքի: Մարդկային կեանքը մի գիրք է հըսկայ, Ուր սրբագրելիք բիւրաւոր բան կայ: Կամուրջովն ուզեց էք մէկը անել Բայց կեանքը դարձրեց գեհեմի անել: Սխալմերին վրայ սխալներ դարսեց, Նրանց վըրայ էլ առաւորը դիգեց: Վերջապէս, հասանք Մարտէլլ,

Ֆըրամսա,

Ուր մարդ լաւ բաներ տեսնել կը յուսայ, Բայց վա՛յ քէ չունես քարք

տ'իտանքիքէ,

Թուղք այլատանքի. քո բանը բուրդ է: Իմ առաջն ընկաւ մի ճարպիկ տէրտէր,

Յաչազուց, համեց անհրաժեշտ քզբեր: Էնտեղից հասայ քաղաքը լոյսի, Եւ ամուսնացայ հետ մի հայ կայսի:

Աշխատում էի որպէս հընոցպան: Ունեցայ գաւակ, իր հորը զուրպան: Եւ ճա մեծացաւ որպէս մի քաշ այր, Ու ճիշդ ուք անգամ ինձ արեց մեծ հայր: Արդ, գործից քաշում, մի ծեք եմ աագ, Ունիմ պետական նըպաստ ու գաւակ: Թէեւ փրկեցի այսպէս իմ մարքը, Բայց հոգուս ուղիդ երեք չըրբարը Ես քողել. քաղել եմ հայրենիքում, Եւ խոր կարօտով ամէն օր տնճում: Քառորդ հոգիով ապրում եմ էստեղ, Հիւանդ եմ, չունեմ մի գորաւոր զնդ: Աստուած քո՛ւր առնի իմ քառորդ հոգին՝ Հրաւիրելով զիս երկրէն երկին: Եւ կամ քո՛ւր ինձ տայ ճար հագի լըման, Որ ծըքամ տեսնեմ երկիրս անընթաց: Հէ՛յ, եէ՛յ կրպօն եմ, կրպօն եմ լօքի, Իմ հայրենիքին ծարաւ, անօքի: Ամէն մի ազգի աագի — «Անցի՛ր...» Եմ ու մընում եմ ես Հայաստանցի...»:

*Ինչպէս կը տեսնուի, աշուղապետ Կրպոյն լիզուն, իր կեանքին պէս, խառնակ է: Այս խառնակութիւնը անխառն փելի էր: Նոյնը պատահեցաւ նաեւ իր Քանթաութիք ու Փէնոմէն զաւակին՝ Փանթէղիսի Ջումշուտին:*

*ՋՈՒՄՇՈՒՏ ուլ փարիզահայ անտիպ գրողներէն է: Միբահար է չափածոյն: Իր ոտանաւորներուն մէջ քառորդ բանաստեղծ է, քառորդ քերթող, քառորդ աշուղ եւ քառորդ Փանթէղիսի:*

*Իրմէ, իբրեւ նմոյշ, կը ներկայացրինք հրկար Փանթէղի մը, ինչպէս նաեւ կարճուկ տաղ մը:*

*Ահա առաջինը, որ կը կուշի՝*

**ՊԱՏՈՒԻԵՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Մեր երեսանի դըրայտ պարտիզում՝ Պիւպիւներ շատ կամ, պուէտները բազում: Սակայն, ճրանց մէջ մէկ հատ է Շիրազ...՝

- Բայց ինչո՞ւ «Շիրազ» եւ ոչ թէ  
 Շիրակ,  
 Եւ կամ թէ Շարայ եւ կամ Աշտարակ...  
 Հայկական անուն... ասեմք Ազարակ,  
 Ու լիքը հաւկիթ, պանիր եւ կարագ:  
 Ինչո՞ւ չըլիներ անունը Վարագ...  
 Մի հայկական բառ... ճոյնիսկ  
 Օշարակ...  
 Կանգնել է պոչի, Մասիսի առջին,  
 Ես էլ կոխում եմ իր անունն պոչին... -  
 Լէկ հաս է Շիրազ, ցուցարար պոչտ,  
 Իր դերի մէջը յաջող է յաւէտ:  
 Միամիտները պաշտում են նրան,  
 Եւ աղօթում են այդ կուսէի վրան:  
 Ա՛հն օր կարգում ու գովէր գրում...  
 Բայց ես ցուցամու մարդկանց չեմ  
 սիրում:  
 Հեշտ է կանչել մեզ իբրեւ տուն-փետայ,  
 Շատ հեշտ է խօսելու եփել հերիսայ:  
 Հեշտ է մեր բշտառ շեղերին դիպչել:  
 Ու մեզ անդադար հայրենիք կանչել:  
 Գաղթական հայաց եղի է մեմոր,   
 Ճառու՛մ է, ճառու՛մ, իբրեւ հրոհտար:  
 Օգտագազութիւն լաւ է սովորել,  
 Մեծերը մանկան նըման օրօրել:  
 Թուսաստանում շատ հայ պանդոխտներ  
 կան,  
 Նըրանց թո՛ղ ասի որ Հայաստան գան:  
 Նըրանք կը կորչեն մեզինց էլ արագ,  
 Կը հային որպէս տաճարած կարագ:  
 Իսկ մեմք կարագ չենք եւ ոչ էլ շափար,  
 Դեռ կը դիմանանք՝ իբրեւ ծակած քար:  
 Մեզ տուն կանչելը թո՛ղ համարի բաւ,  
 Մեզ տուն կանչելը թո՛ղ համարի բաւ,  
 Մեզ տուն կանչելը թո՛ղ համարի բաւ,  
 Թող մի քիչ իրա խելքը տուն կանչի-  
 Խօսիերըս լինեն թո՛ղ օղ սկանչի:  
 Լայն բաց է արել իր երկու բեւեր,  
 Եւ ճառագում է իբրեւ հըրուէր:  
 Բայց եթէ նոյնիսկ դառնանք մեմք  
 մենզուկ,  
 Չենք կարող ազնիլ իր գրկում, եղա՛ւկ:  
 Գիտի՞՞ մեր քիւր պուշտն իմաստուն,  
 Մեզ հարկատր է թէ՛ հող եւ թէ՛ տուն:  
 Որքան էլ լինի նա ըստեղծագործ,  
 Հագնել չենք կարող տաղերն իբրեւ ճարձ:  
 Ռտանաւորը նոյնիսկ հայերգու,  
 Ո՛չ խաղ կը լինի, ոչ էլ Յաշ հագու:  
 Չեն կարող լինել մեզ բնակարան՝

Իր քերթաւածների տները շարուն:  
 Նախ՝ իր գրքերով եղած բեռնակիր,  
 Չենք կարող անել վիզա, անցագիր:  
 Գործե՛լ է ուզում, թո՛ղ խարագանի,  
 Ինչպէս գարնում են սիրքում գագանի,  
 Էն վատ Հայերին, վատ ու տըմարդի,  
 Հայրենիքից դուրս ձեռնարկած գագիր:  
 Փոխան կանչելու Հայերը դուրսի,  
 Թո՛ղ գարնի, զըսպի Հայերն էն ներսի:  
 Վեհափառի պէս, տարին տասն անգամ  
 Ուզարկում է մեզ կանգնելու ու պատգամ,  
 Որ սիրենք գիրար, գործենք հայօրէն,  
 Ապրինք միացեալ, խօսենք հայերէն:  
 Հարկ է վերից գայ էդպիսի խրատ,  
 Որ սիրով լցուի մեր խըրատանտ:  
 Միմզդեա էն վերից դեւեր քերթաւէ՛մ՝  
 Համուս են եղբայրն իրա եղբոր դէմ:  
 Եթէ էս մասին նա ոչինչ գիտի,  
 Ափսո՛ս, չի տեսնուս ծայրն իրա էրթի:  
 Սփիւսէի Հայերս քաղաքում քանի,  
 Ապրել ենք միշտ կեանք օտարականի-  
 Բայց հայրենիքում մարդիկ անարդար՝  
 Եթէ մեզ ճայեն իբրեւ մարդ օտար,  
 Էդ մէկը տանել չենք կարող բըճաւ:  
 Եղի են էդպէս բաներ անբաւ:  
 Հայն Հայաստանում համարել օտար...  
 Ուրեմն Հայեր կան՝ Թուրքից էլ  
 Վատքար...  
 Տեսայ ես նորա տրամա-արթիւքի՛ք  
 Լուսակարները էնքան փաթէթի՛ք-  
 Էնքան վշտաւ է սր ինն կը թըւի,  
 Որ վառայ ծովում պիտի լսեղդը՛ի:  
 Կամ Մասիսն առին առած մի հակայ,  
 Էդ անհուն բեռն տակը կը տըփայ...  
 Գլուխը կայծած վշտի բեռն տակ,  
 Արդէն դարձել է մի շղջ նահատակ:  
 Ի՞նչ յաջող դիրքեր, մի գուժկան  
 գուռան,  
 Կարծէք թէ լինի մի մեծ դերասան...  
 «Լինե՛լ» չըլիներ...» Համլէթ է  
 խաղում,  
 Իսկ այլ պատկերում՝ Օֆելի թաղում...  
 Սագում է նրան դերը իշխանի,  
 Որ դատապարտուել է կախաղանի:  
 Ի՞նչ լաւ կը լինէր՝ մեր Երեսանի

Քանաստեղծներով միայն՝ անուանի  
Եթէ կազմուէր դերասանաստումք...  
Կը լսուէր մի «պո՛ւմ», քատերական

առումք...

Դերերը հարկ է բաժանել կարգին,  
Եւ իր դերը տալ միշտ ամէն մէկին:  
Շիրազին դերեր թէ՛ մարտիրոսի,  
Թէ՛ սիրահարի եւ թէ՛ հերոսի:  
Կարող է խաղալ դեր էլ հարբածի,  
Մանասանդ խաղալ դեր շփացածի:

Մահարիին տալ դերեր հայրական,  
Դերեր վանական, բայց միշտ հայկական:  
Խաղալու համար դերեր ծերունի,  
Նա կարիք ունէ կեղծամ-միրուհի:  
Խօսքերը լինեն բարձր ու խորաբնու,  
Անխորթ խորհուրդներ, նշդում ու

խըրատ:

Գուրգէն Մահարի՛... նա կարող է դեռ՝  
Համայնավարի խաղալ թրթուր գեր,  
Թէ՛ եւ նամաչեց կեղծ ոքերլինը,  
Ուզում եմ ասել «հայր» ընտանիքը,  
Թէ՛ եւ նամաչեց հայակեր Պերիան,  
Թէ՛ եւ նաչակեց սատած Սիպերիան:

Կաստանին Ջարեան լաւ կը յարմարի՝  
Ապերախտ դերեր ծեր սիրահարի:

Սիւվան ի հարկէ խաղերում վարժ է,  
Սիրուհու դերեր նրբան տալ արժէ:  
Մաքիածով կարող է լինել ջահել,  
Կարող է խաղալ մեծ անուն շահել:  
Գլխաւոր դերեր՝ ժիւլիէթ, Մատոննա,  
Շաւիթում, Սանդուխտ կոյս, Մոննա  
վաննա,  
Կրլեպատորա, Արծուիկու Ջագա,  
Սալուէ, Թոսֆա եւ Քոյր Թերեզա:  
Կարող է լինել Ծաղիկ, Շուշան, վարդ,  
Ինչպէս նաեւ Կին Կամիւնիստագարդ:  
Թէ՛ ներկայացուի «հայր» Ստալինի  
Մահն եզերական, Սիւվան կը լինի  
Դժբախտ որբուհի, որ ծալած իր ծումկ,  
Մի քանի ամիս կը քափի արցունք:  
Հայ Դատի համար նա կարող է դեռ  
Կատարել մի մեծ փաստաբանի դեր:  
Խմբի սիւներից մէկը կը լինի,  
Յանուն թէ՛ Մարտի եւ թէ՛ Լեւինի:

Դաւթեանին թո՛ղ տան դեր գինեպանի,  
Կաւ՛ գինիներու քաջ փաստաբանի:

Նայիրի Ջարեան, սիրեցեալ որդի,  
Կ'առնի մեծ դերեր հակառակորդի:  
Եթէ դերն երկու անգամ նա փոքրէ,  
Ապա համարձակ կը շարագործէ:  
Բայց հարուած կ'առնի, ճակատէն

դէմի...

Կ'իյնայ. ո՛չ կեանքում, այլ վերայ բեմի:

Տարօնցի, Դաշտնեց, հայ մելիք,  
հայ բեգ,  
Դերասան լինել չեն կարող երբեք:  
Թող մէկն ըստանձնի գարծ յուշարարի,  
Միւսն էլ թող մի լաւ բեմը յարգարի:

Մայրական դերեր Մարտիրոս համար,  
Համեստ Հայուհի, գլխունով եմ յարմար:  
Երբեմն նրբա թո՛ղ տան դեր փառքի,  
Ինչպէս օրինակ՝ դերը ժամ տ'Աբբի:

Գեորգին Էմին, Պարոյրին Սեւակ,  
Դերեր թեւաւոր, դերեր հետեւակ:

Մեր հայրենիքում անթիւ քերթող կայ,  
Մէկը մէկայից հասակով հըսկայ:  
Թէ՛ մէկը միւսին ելլէ վրայ ուսին,  
Կ'անցնեն բարձունքը նայնիսկ Մատիսին:  
Մեր հայրենիքում քերթողներն յորդուն՝  
Եղան բացարձակ մեծամասնութիւն:  
Որով կարող են լեցնել տասն ակումբ,  
Քառսուն գինետուն ու քատերախումբ:  
Իրանց՝ պակասում են կոմիկական  
Դերերի համար երկու բեմական:  
Արտասահմանից կ'ուզարկենք, սակայն,  
Երկու քերթողներ յառաջդիմական:  
Որպէսզի լինի անսամպլը ուժգին,  
Քերթողուհի էլ, իբրեւ կոմիկ կին:

Էս լսումքը չըճնագ երբոր կազմուէր,  
Եւ երբ մի սեզոն մի լաւ մարզուէր,  
Պէտք է կատարի թուրքներ բազում,  
Գողթաշխարհներում, արտասահմանում:  
Ներկայացումներն ամբողջ տեսարժան,  
Մուտքը կամ ձըրի եւ կամ շատ արժան:  
Որ ամէն մի հայ լինի միշտ ներկայ,  
Հայանայ, զառնայ հպարտ ու հըսկայ:

Գիրն ու ֆերթուածը ժողովուրդին տալ  
 Անօգուտ գործ է շրգիտել կարգալ:  
 Ներկայացումով կը լըսէ լեզուն,  
 Ու կը խօսի ալ իրբեւ հայկագուն:  
 Հայապահպանման գործն է շատ  
 գրծուար,  
 Հրաշագործն իսկ կը լինի թշուառ:  
 Բայց թատերասումն այդ գերբղնական,  
 - Որ առաքուած է երկիրէն Հայկեան,  
 Ուր ֆերթողներն եմ քաջ դերակատար,  
 Իրենց արուեստով արդի ու արդար, -  
 Կարող է ամէ՛ն, ամէ՛ն ինչ անել,  
 Մեռեալին կեանք տալ, հողից դուրս  
 համել...

Եւրոպ, Ամերիկ շրքեղ, անմամ,  
 Տարագիր հայուն համար գերեզման...  
 Մեզի հարկ է տալ լուսէ յարութիւն...  
 Լոկ քատրոնով գայ Հայոց փրկութիւն:

*Այո երկարաշունչ ստանաւորէն զատ,  
 Ջուշուսէն կր ներկայացնենք կարճ  
 սաղ մըն ալ, որ կը կոչուի՝*

ՎԵՐՋԻՆ ԻՇԽԱՆԸ

Հայ իշխանները մեռան ու կորան,  
 Դեւերը ճըրանց գըլուխը կերան:  
 Արդ մընացիլ է իրբեւ հայկագուն՝  
 Մէկ իշխան միայն, էն էլ չէ ասուն:  
 Հողի վըրայ չի, ոչ էլ ամրացի,  
 Ջըրերի մէջ է, եղած լընեցի:  
 Դա իշխան Զուկն է, մանկան պէս անմեղ,  
 Էն էլ ուտում են, էնքան է համեղ:

*Ինչպէս կը տեսնուի, հայր ու որդի  
 Աթաբէգեանցները իրարու նման չեն:  
 Երկուքն ալ անման են ու անկրկնելի:*

*ՕՆՆՑ ՕՂԱՆ (կեղծանունները «Սօ»,  
 «Նօ»-ն) բանաստեղծ մըն է Հանելու-  
 կերդու, վերացական, առեղծուածախօս:  
 Բանաստեղծը սովորութիւն ունի իր  
 ֆերթուածները կարդալու իրեն մօտիկ  
 շրջանակի մարդոց, երբ մանաւանդ զբա-  
 նրէն օրիորդներ ու կիներ:*

*Իր ֆերթուածները զնահատողները  
 կ'ըսեն.*

- Այնքան բարձր բանաստեղծու-  
 թիւններ են, որ մարդ կարենալ Հասկը-  
 նալու համար՝ երեք-չորս համալսարան  
 աւարտած ըլլալու է: Գիտունի, զմիտ-  
 սէտի, քաղաքագէտի զործ է տնօր խըր-  
 թին ֆերթուածները վերծանելը. դրա-  
 կանագէտ ըլլալը բաւական չէ: Մար-  
 դիկ, որ մը վստահարար, պիտի հասնին  
 լուսին, ու պիտի Հասկնան անոր ինչ  
 ըլլալը, ինչե՛ր ունենալը: Մարդիկ հա-  
 ւանորար, որ մը, Հասնին Հրատին ալ,  
 ու Հոն դանուող արարածներուն ինչպի-  
 տի էակնէր ըլլալը հասկնան, եւ դաշ-  
 նակցին անոնց հետ, մշակութային կա-  
 պեր հաստատելով, կամ դաւեն անոնց  
 դէմ: Բայց մարդիկ երբեք պիտի չհաս-  
 նին, Փոլ Վալերին դերագանցած, մե-  
 ծաւր յն բանաստեղծ Սննօ Սահնին բարձ-  
 րութիւններուն ու խորութիւններուն,  
 անոնց նշանակութիւնները բժրանելու  
 համար: Այդ ֆերթուածները պիտի մը-  
 նան յուիտեան հանելուկներ, առաջնա-  
 կարգ առեղծուածներ, խորհուրդներ,  
 կարօտ՝ անվերջ խորագրութիւններու:  
 Իր ամէն մէկ սողին մէջ Հաննարին կը-  
 նիքը կայ: Կնքուած հանդոց մը կայ:  
 Իսկ զինքը քննադատողները կ'ըսեն.

- Իր ֆերթուածներուն իմաստները  
 այնքան խորունկ տեղեր, մերթ միծնեւ  
 իսկ ծովերուն յատակը թաղած է, որ  
 միջադպարին գիտական արշաւախումբ  
 մը կարծուելու է, Հարբեր հատ ալ փո-  
 սապեղներով, պահուած իմաստները,  
 Էթէ գոյութիւն ունին, գտնելու համար:

*Իսկ ֆերթողը կը յայտարարէ.*

- Քերթուածներս հազար տարի ետ-  
 քը պիտի հասկնան մարդիկ, երբ իրենց  
 մտային կարողութիւնները կրկնապատ-  
 կուին կամ եռապատկուին: Իմ ֆերթը-  
 ւածներս վերծանելու, վերլուծելու հա-  
 մար, պէտք է ըլլալ մտաւորական, ան-  
 դամ մը եւս մտաւորական, եւ վերջա-  
 պէս, մտաւորական մարդարէ:

*Անդամ մը, չորս բարեկամներ զբա-  
 լի բռնուեցան, «Աթլտնթիտ» կոչուող  
 ֆերթուածին նիւթը սրողելու համար:*

*Անոնցմէ մէկը կ'ըսէր.*  
 - Նիւթը հայրենասիրական է:

Երկրորդը կը պնդէր.  
 - Սիրոյ փիլիսոփայութիւնն է:  
 Երրորդը կը հաստատէր.  
 - Քաթալիզմայի մը նկարագրութիւնն է:

Չորրորդը յաւակնութեամբ կը վրձնէր.

- Ծովուն ու ցամաքին պայքարն է:  
 Վերջապէս, Հարցուցին Հեղինակին,  
 որ պատասխանեց.

- Ձեր շորսին ըստնեքէն ո՛չ մէկը  
 չէ: Ասեկա ժստաւորէն կրնամ ըսել:  
 Բայց թէ ի՞նչ է նիւթը, առեկա ես ալ  
 չեմ կրնար ըսել, որովհետեւ յիշողութիւնս  
 տկարացած ըլլալուն՝ ժողոված եմ:  
 Վերջերս, լսելով ձեր գրաւի գալը,  
 քանի մը անգամ կարդացի «Աթլանթիոս»  
 առեղծուածս, այսինքն շերթուածս, եւ  
 թոյլ տուէք որ ըսեմ թէ ես ինքզինքիս  
 հիացայ, այնքան բարձր ու բարձր դոնե-  
 լով զայն, այնքան ողողուած լոյսով եւ  
 միտածամանակ իրթնութեան խաւարով,  
 սակայն, չկրցայ յիշել իմաստը: Թերեւս  
 պատճառը այն է որ շերթուածը դրուած  
 չէ ուղեղիս ուղղութիւնով, այլ Հանճա-  
 րիս ինքնագործութեամբ, ենթադրուակ-  
 ցութեանս գործունէութիւնով: Եւ շեր-  
 թուածս կը սաւառնի արեղակնային դը-  
 րութեանէն դուրս, բանաստեղծութեան  
 տիեզերքին անհունութեան մէջ, իրբեւ  
 նաւ փակքով: Ահա, բարեկամներս,  
 միակ լուսուրանութիւնս:

Գրաւի բնուագիւնէն ո՛չ ոք լաւե-  
 ցաւ, որով ո՛չ ոք կորսնցուց:

Եթէ կորսնցնող մը կար, ան ալ բա-  
 նաստեղծն էր, որ կորսնցուցած էր յի-  
 շողութիւնը, մասամբ ալ իր հիացողնե-  
 րուն Հաւատքը:

Կը ներկայացնենք խնդրոյ առարկայ  
 շերթուածը. թերեւս նոր գրաներու  
 լուսուրանութիւնն է.

ԱԹԼԱՆԹԻՏ

- Մեր մայրենի ծովն ու ցամաքը  
 հայրենի՝

Կը տեճային սիրելի գիրար,  
 Տենդով տիրել իրարու վրայ:  
 Եւ ցամաքն այս կարծր ու քարտու՝

Կ'ըզօար ըմպել ծովը կապոյտ:  
 Ծովն ալ կ'ազդէր ցամաքն առեւ –

Ի՞նչ կարկանդակ –:  
 Յամաքն եզաւ ծովուն ծոցին մէջ  
 նահատակ:

Ջուրը կ'եռայ, կը պրզուրջայ,  
 Դշան է որ կը համբարտին ծով ու

ցամաք,  
 Եւ կը ստեղծուի յարձակ, հասակ...  
 Ազկիւններ կը քեւածեն ջարին վրայ,  
 Ու ծովն ակվերջ, կանանչ կիրճով

կ'երնարակայ:  
 Կ'իլէ, կ'իջնէ, կը հառաչէ յար

հեշտամոյն...  
 Իսկ ես կանգնած խարակի վրայ,  
 Կը նուագեմ աստուգեղով...  
 Կզգեխումբէն պար մը նայեալ

կը մերձեցայ...  
 Ամէն մէկը կը փափաքի ոտիս համբարել,  
 Դէմքը բռնել պրանգներուս,  
 Որ գերբնական իմ գորութեամբ՝

Գեղեցկանայ շատ աւելի...  
 Կ'ըսեմ – «Օ՛հ, պոչ բռնեցէք դուք,  
 կեցէք կարգի,

Համբարեցէք ձեռքը լոկ աջ»:  
 Կ'ընեն. կ'ըլլան աստուածուհի,  
 Կ'երթան տիրել հազուն, մարդոց ալ

ծովային:  
 Կը մընամ մի, մոլի, միմակ ու  
 մեծատէր...

Ու կը խոկամ...  
 Նուագս խոհիս կ'ընկերանայ...  
 Ու կը բայեմ, կը կոխտոսեմ աւագները,  
 Որոնք իսկոյն կ'ըլլան փայլուն

ուկեփռի:  
 Ձայներ կ'առնեն... ետ կը նայիմ ու  
 կը տեսնեմ

Մի հրեշտակ, մի ստամայ, որք  
 կը վիճին  
 Ոսկիներուն համար գետնի...  
 Եւ երկուքն ալ կը տապալեմ կռճակի

վրայ...  
 Մին կ'ըլլայ հաւ, իսկ միւսը՝ մռկ...  
 Աթլանթիոսը միշտ կ'ընկզմի...  
 Ու կը պոսամ – «Անթիմէա,  
 Եկուր բաժնեմ մեծութիւնս,  
 Նաեւ բունս...»:

(Այս առեղծուած բանաստեղծու-



աննպատակ գէպերուն վրայէն, իսկ նըպատաւոր գէպերը դիտած են խոշորացոյցով, զանոնք զօրացնելով ու զարգարելով:

Ինքներգութիւնը, քննականաբար հանդերձ ինքնագովութիւնով, ընտրած են իրեն նպատակ: Կամայ սկսածայ զրուած սուտերն անպամ կրցած են վերածել ճշմարտութեան:

Յուշագիրները, ծերութեան հետեւանքով, իրենց յիշողութիւնը կորսնցուցած ըլլալով՝ շիշ շիշ վրայ գիտի կը կոնծեն, յիշողութեան յարութիւն պարզեւելու համար: Ժինշդեո կիտով կորուած յիշողութիւնը գիտի մէջ կ'ընկուպի եւ կը կորսուի երէք չորբորգով:

Մարդիկ երբ կը խմեն, իրարու ողջութիւն, առողջութիւն եւ այլ անհրաժեշտ բաներ կը մտղթեն, բայց կը մոռնան (միշտ յիշողութեան պակաս) իրար բարեմաղթել յիշողութիւն:

Կան յուշագիրներ ալ՝ որոնք կամաւորապէս կը մոռնան կարգ մը կարեւոր կացութիւններ, կենսակցութիւններ, կը՝ ախիւր, կործանումներ (մանաւանդ բարոյական), երկր չխճողելու համար առաջարկութիւններով:

Միւս կողմէ, կը փշն վարպետօրէն սուտի որինչը եւ կը զրեն խօսակցութիւններ, որոնք ծերթ կը բռնեն էջեր ու էջեր: Եթէ ընթերցողը միամիտ է, կը բացազանչէ:

- Ինչ հրաշալի յիշողութիւն, Աստուած իմ: Քառասուն տարի առաջ տեղի ունեցած խօսակցութիւն մը, որ տեւած է ժամեր, յիշել բառ առ բառ: Այս շքնորհը քիչերու բաշխուած է:

Ինչպէս բանաստեղծելը, նոյնպէս յուշագրելը հիւանդութիւն մըն է, եւ բժիշկները լուր անդամ չունին:

Բանաստեղծելը առաւելապէս պատանեկան կամ երիտասարդական ակաւ մըն է, իսկ յուշագրութիւնը հիւանդութիւն մըն է որ կը յայտնուի վաթսունը-հինգէն հօթանասունէն ետքը: Եւ եթէ կան ծեր բանաստեղծներ ալ, ինչպէս սակաւին երիտասարդ յուշագիրներ, պատճառը այն է որ առաջինները տղայ

մնացած են, իսկ երկրորդները կանխահասօրէն ծերացած են:

Բժիշկները պէտք է զբաղին յուշագրութիւն հիւանդութիւնով: Կամ պէտք է յուշագիրներուն կիսատ յիշողութիւնը ամբողջացնել, եւ կամ կիսատ յիշողութիւնն ալ սրբել, մէջտեղէն շքացնել, որպէսզի մարդիկը աղատօրէն զրեն իրենց պարտ ու պատշաճ դատածը:

Այդ պարագային, անոնց երկասիրութիւններն ալ կը փրկուին քննատութիւններէ, երբ մանաւանդ այդ գրութիւնները անուանուին վիպասանութիւն կամ հեքիաթ:

Նինգ-վեց հատ կարգացի այդ ձեռագիր յուշահատորներէն: Կը խոստովանիմ որ կանպէտեցաւ կորովս բարոյական: Այդ յուշագիրները ցուցադրած են մեծ ու բացառիկ տաղանդ, նկարագիր մաքրամաքուր, զոհողութիւններ օրինակելի, նուիրում ամբողջական, աշխատանքն ալ մեծագործութիւն անկրկնելի:

Մե'ղք որ կը ճանչնայի հոգիներէն: Եթէ չճանչնայի՝ կորովս պիտի կարկառուէր, քանզի կ'լլած պիտի ըլլայ յիշատ աւելի կոթողական կենսաթիթեր:

Անտարակոյս կան պարկեշտ յուշագիրներ ալ: Սակայն, անոնք ալ կը զոհին, կարծուելով ի նոցանէ:

Յուշագիրներ ալ կան, որոնք դառնորէն կը պանդատին իրենց յիշողութեանէն, սակայն, դանդաղ շունին իրենց ստաբանութեան դէմ, այլ ընդհակառակն, ունին զոհունակութիւն: Սուտով կը դոցեն յիշողութեան լայն ծակերը: Որբեմն կը պատահի որ ինան այդ ծակերէն մէկուն մէջ. սակայն, նոր սուտով մը դուրս կ'ելլեն յաղթական: Բայց սուտ կայ, սուտ ալ կայ: Ճշմարտապէս ստելու համար ըլլալու է արուեստագէտ կամ դիտնական սուտի: Յիշելու է նեւաւած սուտը: Ճշմարտութիւնը չիշողը՝ պարտի սուտը յիշել գոնէ:

Մարդ կարծելով որ բացարձակ տէրն է կարգ մը կարողութիւններու, ինչպէս տրամաբանութիւն, յիշողութիւն, լրողութիւն, տեսողութիւն, մարտողութիւն՝





## ԱՄԷՆ...

Ամեն նայուածք ազուտը չ'ըլլաք  
Պատահաբար,  
Հեզնոյ հատու նայուածքներ կան  
վանողական...:

Ամեն ժպիտ բոյր չ'ունենար  
Անտահական,  
Գոյն ունեցող ժպիտներ կան  
Գաւազրական...:

Ամեն գգուանք հոգի չի տար  
Երբայրաբար,  
Մահացրնող գգուանքներ կան  
Դժբախտաբար...:

## ԱՇՈՒՂ ԱԿԱՆ

Օրերուս մէջ դուն տօն ըլլառ,  
Ու երգելուս մէջ ձօն ըլլաս,  
Ամեն գիշեր խնջոյժներուն,  
Նար հարսի պէս դուն հոն ըլլառ:

Աչկերուս մէջ դուն բոց ըլլառ,  
Ու գաղտնիքի պէս գոց ըլլաս,  
Որ սրտիս մէջ երբոր բացուի,  
Կախարդանքով դուն հոն ըլլառ:

Միրոյս համար դուն բոյն ըլլառ  
Տառապանքիս ալ թոյն ըլլառ,  
Դարուկ աշուն դեռ չթօշնող  
Դարնան վարդի դուն գոյն ըլլառ:

ՇԱՀՊԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

**ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

ՄԱՍՆ Ե.

ԳԼՈՒԽ Գ.

**ՋԻՒՆԷ ՏՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Փոթորկալի անձրեւներէն ետք, ձիւն կը մաղուէր Տարօնի աշխարհին վրայ: Յանկարծուստ խուժում մը ձիւնէ թիթեռնիկներու, որոնք դիւլներնրը աւելի մոյեգին կ'ըլլային, ամբողջովին կը ծածկէին Մլոյ լայնատարած դաշտը: Ու տռաւօտը կը բացուէր սպիտակահար բնութեան վրայ, ձմեռուան իրականութեան առջեւ դնելով բոլորը:

Բռնութեան ուժերը, որ ճամբայ ելած էին Յնտայիները ոչնչացնելու, սարսափը սրտերուն մէջ, կը հարցնէին.

- Ո՛ր է Գէորգ Չափուչը...

Կայծակը շեշտակի զարկած ու անցած էր:

Սարհատ իր մարտիկներուն հետ, ձիւնապատ լեռները ազատանեցաւ:

Անգորութեան մատնուած, թրքական հարածիչ ուժերը պարտուած ու ճզակոտոր՝ Մուշ կը վերագտնային ցրտաշունչ ձմեռէն հարածակուն:

– Ո՞ւր է Գէորգ Չավուչը...

Փոթորկալի արշաւին զարկերը զարհուրելի մթնոլորտ մը թողած էին պէկերու եւ աղաներու շրջանակին մէջ: Զիւնը արիւնոտ երկիրը պատանքած էր, բայց Միրզա եւ Քէրիմ պէկերու արիւնոտ գլուխներու պատկերը սերտերը արտուտով կը լինէր: Զօրամասերը պարտուած կը դառնային զանազան շրջաններէն: Գէորգ Չավուչի որոնումը ապարդիւն էր:

Սարհատ իր խումբով աներևութացած էր, ու դարձած գերբնական ուրուական մը, որ կ'երեւնար երբ շանթահարել պէտք էր, ու կ'անհետանար՝ անդտանելի դառնալով: Երկի՛նք կ'իլէր, թէ անդունդը կ'էջնէր, չկրցան զիտնայ:

Թեւաւոր ձիու այս հեքիաթը վախի եւ անդորութեան կը մատնէր թրջական արիւնհոտ մոնստրները, որոի դողը հասցնելով մինչեւ նահապետը եւ զօրքերու հրամանատարը:



Զինապատ աշխարհքը ինքն իր վրայ կը կծկուէր: Զինի սառնութիւնը հրդեհի բռնուած Մշոյ դաշտին դինադադար մը կու տար: Թուրքերը դիւրութեամբ չէին կրնար տեղափոխուիլ այս ծովուն մէջ: Ու Ֆետալական խումբերը, որ ինքնամփոփուելու եւ գլուխ պահելու հարկադրանքին տակ էին, կ'ապաւինէին թաքստոցներուն՝ մեծ զգուշութեամբ: Եթէ ձիւնը անզօրութեան կը մատնէր թրջական բանակները, նոյնքան վտանգաւոր ծուղակ մըն էր Ֆետալիներուն համար:

Հարկադրական դինադադար: Ու Ֆետալիները արթուն եւ զլոյշ պիտի մնային:

Սուրբ Կարապետի շրջակայ գիւղերուն մէջ, Կորիւնի մարտիկները կոմիտէներու պարտատու ներքուդիները կը մտնէին, մարտական կառնակերպութեան հաւատարմութեան տպւիւնելով: Սարհատ կը վերադառնար Մառնիկի բարձունքները, ուր ձիւնակոյտերուն տակ, ձիւնէ ապաստանարան կը ստեղծէին: Զիւնէ սառն տնակներուն մէջ թաղիքներով պատած, անօրինակ կեանք մը կ'սպրէին: Միայն քանի մը հաւատարիմ դիւղական մարտիկներ գիտէին անոնց տեղը, ու պաշար կը հասցնէին անոնց, ինչպէս նաեւ գեկուցումներ՝ լայնածաւալ կազմակերպութենէն:

Զիւնէ տնակները ունէին շնչառութեան կլոր պատուան մը վերը, դերանով մը ապահովուած: Բնութեան տարօրինակ քմայքով գոռոի աշխարհքը կը սառէր եւ շնչաւորը փոթորիկին չէր դիմանար, մինչ ձիւնակոյտին տակ՝ տնակները տաք էին:

Քեռի Մակարին խումբը անցաւ Սասուն, քարանձառներուն եւ ձիւնէ տնակներուն մէջ աղբիւր վճռական կամքով: Սասուն չորս թրջական զօրանոցներ կային նոր լինուած: Թրջական թանուկը լիոնաշխարհը էր հսկողութեան տակ առած էր, ապստամբած ժողովուրդը զսպելու համար: Ժողովուրդը ծածքի մը տակ կրցած էր իր գլուխը պահել ու վերքերը մտածը ամօքել: Զինապատ լեռներուն ընտել Սասունցին գիտէր թէ վեց ամիսներ փակուած պիտի մնար բուխրիկի կրակին դիմաց: Սասունը շրջապատուած էր անանցանելի ձիւնէ պատուարներով ու թրջական զօրքերն էին որ յանկարծակի կու դային բնութեան այս խողին դիմաց: Անոնք երբեմն փոր-

ձեցին տեղ տեղ շարժիլ, ու շատերը մնացին ձիւներուն տակ: Քանի մը իրորձերէ կտք, փակուած մնացին իրենց զօրանոցներուն մէջ, գիտակցելով որ իրենց դէմ ունին Սասունցիներէն աւելի ըմբոս լեռնաշխարհին փոթորկայի ձմեռը:

Այսպէս, կեանքը կծկեցաւ կրակէ օճախներուն շուրջ: Ու Քեռի Մակարին խումբը քարանձաւի մը մէջ կրակ վառեց: Երբեմն ալ վերադարձաւ Սարգստի ձիւնէ տնակները, Մովսսարի դառիթափներուն վրայ:

Սպասումը Ֆետայիներու հոգին կը մաշէր:

Ճնշիչ, սպասողական լռութիւն մը կ'իջնէր Տարօնի աշխարհին: Պատասխանատու դեկավարներու ուղեղին մէջ մտահոգութեան կրակը կը վառէր, դիտնալու համար թէ այդ ծանր օրերէն ետք, ի՞նչ ճակատագիր պիտի վիճակուէ խոտօյնոյ Տարօնին:

Անդին, ախոռներու եւ մեկուսի ինկած գոմերու մէջ ու մեծ շէնքերու թոնիկներուն շուրջ հեքիաթներ կը հիւսէին անցեալ հերոսութեանց ու հաճախարհի բազմութիւններուն կամքը կը պողպատուէր վճռականութեամբ, վազուայ ազատամարտին ի խնդիր:

Մ'հ, ոչ մէկ տեղ, եւ ոչ մէկ ատեն, ազատութիւն կամ մահ արիւնոտ ուղին այնքան տեսական եւ այնքան վճռական եղաւ, որքան Տարօնի աշխարհին մէջ:

Կեանքն ու մահը իրարու կողքէն քաշեցին, հայեացքը սպազային: Ու ահա, ձիւնէ տնակներուն կամ թաքստոցներուն մէջ բանտուած են երէկուան տախտակները, անմտունչ, հոն են արծիւները, առանց թեւթափի:

Ֆետայիները... մանկացած են, կատակներ կ'ընեն, իրար կը հըրմըլուկեն, թողթ կը խաղան: Անհոգ զպրոցականներուն պէս ժամտնակը կը սպաննեն:

Ու երբեմն ալ կոնեակ կամ օղի կը խմեն, տաքնալու համար...



Նրկարտեւ ձմեռ:

Փոթորիկները պար բռնած են Մովսսարի ու Անտքի զազաթներուն շուրջ, եւ հոգը կ'ոտնայ անյատակ անդունդներուն մէջ: Կատաղի բնութեան մը արհաւիրքը կայ լեռնաշխարհի զազաթներուն եւ անդունդներուն վրայ: Տարօնի ժողովուրդը կծկուած է կքուն տուններուն մէջ ու իրրէլ արծիւ սաւառնողները ձիւնէ տնակներուն մէջ փակուած են:

Ինքնամփոփ այս օրերը մտածման ու դատումի անվերջանալի պահեր զարձան:

Սարգստ շատ յաճախ անցած դէպքերը վերլուծեց ու կշիռքի դարկաւ վերջացած տարին: Ո՞րքան երկար ժամանակ թուեցաւ այդ կարճ անցեալը: Քանի՞-քանի՞ ընկերներ ինկած էին ազատութեան ճանապարհին, ու ի՞նչ հերոսական խոյանքներ ցուցաբերած էին Սասուն եւ Տարօն: Տեւական ի՞նչ յամառ կռիւ էր, որ սկսաւ Սասնոյ բարձունքներէն քան տարի տառալ, ու ահա կը շարունակուի կուռ եւ հաւատաւոր կազմակերպութեամբ մը: Գացին շատերը ու ինքը մնաց պատասխանատուն ազատութեան դրօշին: Բայց կային կոճղի պէս ամուր մարդիկ բանտերուն մէջ, զործակից

ու մարտական ուժեր չըջանել չըջան, ու երկաթի պէս ամուր ժողովուրդ ժը, որուն համար զոհուիլը գերազան փառք մըն էր:

Անդին, Ֆետայիները ձիւնէ տնակին մէջ կը կատարէին ու ճանձրոյթը ունէին կեանքի այսքա՞ն երկար տեսչութիւնն:

- Մօսիկն ու Մկրտն Հիմա աւելի տաք տեղ են քան մենք, - ըսաւ Մանուկ, որուն ոտքի մատները սառած եւ ինկած էին, - գոնէ կտիւր վերսկսէր, որպէսզի այս անտէր ոտքը սուղ ծախէի:

- Հոգ մի ընէր, Մանուկ, շուտով ձիւնները կը հալին ու մենք դաշտ կ'իջնենք: Աղօթէ որ ձիւնը խումբին հետ ըլլաս, - կատակեցին Ֆետայիները, - այլապէս այս թոփայ ստոր գլուխդ պիտի ուտէ:

Սարհատ հետուէն կը լսէր այս կատակները ու կը տեսնէր որ անձնուրացները կեանքի եւ մահուան խնդիրները արդէն լուծած՝ միայն գալիք օրերուն կտիւր տենղը ունէին:

Սարհատի մտածումները երկարեցան գէպէ-դէպէ, մինչեւ պիտակ լերան ճակատամարտը, ուր Հեղինի իշխան վարդանը սպաննուեցաւ: Մըտածման թելին ծայրը Սուսմը կը պատկերանար, մշուշոտ անորոշութեան մէջ:

- Ի՞նչ եղաւ Սուսմը, - լռելեան ինքնիրեն կը հարցնէր Սարհատ, ու յեղափոխական կեանքի դաժանութիւնը թույլ չէր տար որ ինք հոգեպէս խորանար այն միտին մէջ, որ սիրոյ ենթա-ալիքներով իր սիրտը երբեմն կը խոտովէր:

Սարհատ մէկէն սթափեցաւ: Անդին, Ֆետայիները լուրջ միմարանութեան մէջ էին: Սպաղանաց Մակարը, չորս բուրբը նայելով՝ կը հարցընէր.

- Ա՛յ տղայ, Մանուկ, բռն տեսնեմ, այս Դաշնակցութիւնը ի՞նչ է, տափինա ունի՞ թէ զաղինա՞ (պետութիւն է թէ պանքա):

- Քեռի՛ Մակար, ի՞նչու կը հարցնես, Դաշնակցութիւնը ուրիշ է ու մենք այ անոր զինուորները:

- Տեսչէ՛ն, այդ չէ որ կը հարցնեմ: Մենք զինուոր ենք ու մեր ուրիշ ար ունինք: Դուն էն ըսէ՛, թէ էդքա՞ն ուժ, էդքա՞ն զէնք, էդքա՞ն ձի ո՞ր տեղէն կու տայ: Գանձ ունի՞ թէ Օսմանցու պէս ինք այ պետութիւն է:

- Պետութեանն աւելի ուժ ունի, քեռի՛ Մակար: Նահատակուած ընկերոջ տեղ ուրիշ մի կ'ըլլէ լեռը, կորած տասնոցին տեղ, տասնոցներ կը հասցնէ անձնուրացներուն:

- Բան չեմ հասկնար ձեր ըսածներէն, դուք չկրցաք ինծի ըսել թէ Դաշնակցութիւնը ի՞նչ է...

Սարհատ մօտեցաւ միմուր խումբին:

- Մակար, ի՞նչ կը պլպլան այս դեղին կոտուցները: - Մակար ընդհանրապէս երիտասարդ Ֆետայիները դեղին կոտուց, հաւի նոր ձագ կ'անւանէր:

- Տեսչէ՛ն Գեւօ, անա քսան տարի է լեռներն ենք, դուն լաւ գիտես, թէ ինչ անցաւ դարձաւ, ըսէ՛, ի՞նչ է այս Դաշնակցութիւնը որ այդքա՞ն ուժ թափեց Սասուն եւ Տարօն:

- Մակար, Դաշնակցութիւնը մեր ժողովուրդն է, մեր պետութիւնն ալ այս ժողովուրդն է որ քսան տարիէ ի մեր աղատութեան մարտիկները կը պահէ եւ նահատակուածներուն տեղ, նոր մարտիկներ կը հասցնէ լեռները:

– Գլխորդ, այդ ըստնորդ արդէն մենք քսան տարի է կը դործադրենք, մեր տան եւ մեր ժողովուրդի գործն է: Հասկա ի՞նչ պիտի ընկինք, հաց պիտի տայինք, գէնք պիտի առնէինք, մեր ամբողջ ժողովուրդով թուրքին դէմ պիտի կռուէինք: Այդ բոլորը մեր պարտքն է: Դունն այն ըտէ, Դաշնակցութիւնը որ չեմ տեսներ, ի՞նչ ուժ ունի որ այսքան դործ կը տեսնէ եւ չեա գիտեր թէ որ տեղէն երեւան կու գայ եւ ո՞ր ճամբաներով կը հասնի մեզի:

– Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին կամքն է: Այդ կամքը ամէն տեղ է, շի տեսներ, բայց միշտ կայ: Ինչ որ կը տեսնուի այս ընդարձակ կազմակերպութիւնն է: Ես ու դուն եւ այս անձնուրացները ձեռնէ տնակին մէջ, Վարդան, Յարութ եւ Ասօն բանտին մէջ, Վարդան վարդապետ որ կ'աղօթէ Ս. Կարապետի ստեարին մէջ, Նիկոլ Դումանն ու Անդրանիկ խումբ կը կայմեն, այս կողմերը զալու համար: Ու անդին, շատ հետու երկրի մը մէջ, Քրիստափոր, Ջաւարեան եւ Ռոստոմ կան, որոնք կը մտածեն Դաշնակցութեան կամքը գործադրել: Ա՛հ, հիմա փնտռէ թէ՛ ո՛ւր է այդ կամբը, եւ ի՞նչ է Դաշնակցութիւնը, – ըսաւ Սարհատ ու աւելցուց.

– Դաշնակցութիւնը ի՞նչ է եւ անոր կամքը ո՞ւր է, մի փնտտեր, Մահա՛ր, երբ նեղ օր աղբիւնք, քարի մը տակէն այդ կամքը մարմնացնող Հըրայր մը դուրս կու գայ ու մեզի հետ միասին ազատութեան արշաւի կ'ելլէ: Մակար գլուխը երեքուց.

– Տնաչէն Գեւօ՛, աշխարհն ամբողջ Դաշնակցութիւն ղարձաւ: Ասկէ հաք, զարեբուն պիտի խօսիմ, որպէսզի անոնց տակէն Դաշնակցութեան կամքը դուրս գայ...

Հայ ազատագրական յեղափոխութեան վեհութիւնն էր, որ Մակարի հարցականներով, մտածման նիւթ կը դառնար անձնուրացներուն:

Ֆետայիները խնդային մանկական միամտութեամբ, իբար հրմշաղկեցին, ու պար բռնեցին տեւական վէճերուն վերջ տալու եւ օտոած ժամանակը սպաննելու համար:

Ազատութեան նժարին մէջ իր կեանքը վնոզ անձնուրացի փիլիսոփայութիւնը պայծառ էր:



Գարեան ձիւնհալքը սկսած էր:

Ձիւնապատ լեռները սառնասրտութեամբ կը խոնարհէին Մշոյ դաշտին վրայ, որ ազատած էր ճերմակ թողէն եւ ցերմութեան դուրբիներով կը շղարշուէր:

Մարտական ուժերը ձիւնէ տնակներէն, ժայռերէն եւ նկուղներէն արելույսին կ'ելլէին: Տեղէ տեղ կը տեղափոխուէին եւ իբար կը գտնէին գորովանքով, կարօտով ու վարմանքով: Որքա՛ն երկար ապրած էին:

Համախումբ այս ուժերը կացութիւնը քննութեան առին: Զեկուցումները կը հասնէին Մատուհի եւ Տարօնի հեռաւոր շրջաններէն: Դուրան բարձրաւանդակի Կ. Կոմիտէն, բանտի ղեկավարները, գեղական պատասխանատուները գիտէին, ստոյգ գիտէին որ վարունք կը բացուի արիւնոտ վէպերով: Այդպէս եղած էր տասնեակ տարիներով: Այդպէս պիտի սկսէր այս դարունն ալ:

Պատասխանատու մարմիններու եւ անհատներու մտահոգութիւնն էր, որ հոգիները կը փոթորկէր:

Ի՞նչ քայլեր պիտի առնէին Ծեռայիները, որոնց զլուխը կեցած էր Սարերու Ասլանը:

Զիւնէ Հարկադրական զինադադարը կը վերջանար, ու բոլորի մտքին մէջ թարմ էին կայծակնային արշաւանքները, որոնց մասին այնքան սարսափով կը խօսէին թուրքերը եւ քիւրա ազանները: Լարուած սպասողականութիւն մը կար մթնոլորտին մէջ: Ո՞ր տեղէն պիտի սկսի որոտումը, եւ ո՞ր պիտի զարնէ կայծակը...

- Ի սէր Աստուծոյ, զգոյշ շարժեցէք, նոր փորձանք մը չլայ Տարօնի արիւնաքամ ժողովուրդին:

Տատրակն էր, որ տեւապէս խոհեմութեան թելադրանքներ կ'ընէր: Գիտէր թէ այդ նամակները հաճելի չէին Սարհատին, ու տնոր զայրոյթը մեղմելու համար, նամակներուն մէջ կ'աւելցնէր.

- Վնցած աշնան քանի մը հարուածները թշնամու գազանային բռնազնները զսպեցին, ու մեր սիրտը ուրախացուցին: Այդքանը բաւական է: Գոնէ ատեն մը թշնամին ոտքը յառաջ պիտի չնետէ: Դուք ալ հանդարտ մնացէք:

- Գեղամի խոհեմութիւնը մեզ մահուան կը դատապարտէ, - ըսաւ Սարհատ ու նայեցաւ Կորիւնին:

- Սարհատ, մեր խումբերու կատարածը անցած աշնան, Տարօնը ազատեց կըրմէ, - ըսաւ Կորիւն, - բայց չզարմանաս եթէ ես ալ Տատրակի խոհեմութեան կողմնակից ըլլամ: Մենք հարուածող ուժ մը ունինք, բայց եթէ շարժումը ծաւալի, մեր ռազմամթերքը մէկ քանի օրէն կը սպասի: Այդ պարագային, թշնամին դիւրութեամբ անզէն ժողովուրդը կը կոտորէ:

- Իսկ եթէ թշնամին սարսափը չունենայ մեր շնչառի գարկերէն, խոհեմութիւնը այդ գազանները զառնող պիտի դարձնէ, ի՞նչ է մասնուճ, Կորիւն:

- Խոհեմութեամբ թերեւս դաշտը կը փրկենք կործանումէ: Թշնամին շատ ուժեր կուտակած է այս շրջանը, իսկ Ալայի պէկի օստիւլըները սառնած են եւ շինու պատրուակներ կը ստեղծեն, մեր ժողովուրդի ոչնչացումը կտարելու, - ըսաւ Կորիւն եւ աւելցուց.

- Մեր հարուածող խումբերը պահենք եւ միայն անհրաժեշտ պարագաներուն ուժ ցուցադրենք, ժամանակ չափինք, քիչ մը մթնոլորտը հանդարտի:

- Կորիւն, արեւդ սիրեմ, դուն ճշնոթամային կռիւներուն մէջ թըրժըւած մարտիկ եւ դիվայար եղած ես, այս միջավայրը եւ թշնամին կը ճանչնաս, ու շատ լաւ դիտես, որ թշնամին միայն խորտակելի հարուածէն խոհեմ կենսալու ստիպուած է, իսկ հիմա, դուն ալ Տատրակի խոհեմութեան կառչած ես: Մենք խոհեմութեամբ ողջ մեռել կը դառնանք, յուսահատութեան մասնելով ժողովուրդը, որ այնքան մեծ յոյսեր կապած է սպասադրական այս արիւնոտ շարժումին:

Սարհատ իր կարծիքը բանաձեւելէ ետք, աւելցուց.

- Քանի մը խումբերու բաժնուինք: Իւրաքանչիւր խումբ շրջանի մը պատասխանատուութիւնը կը ստանձնէ եւ կը պործէ այդ միջավայրի ստի-



պողական թելադրանքով: Քրտական պէկերն ու ազաները մեզի բարեկամ կը դառնան, երբ ուժ տեսնեն: Իսկ Լթէ կան անդուսպներ, պէտք է ահաբեկէի, որպէսզի միւսները զգուշանան:

Ճետտայիններու ժողովներն ու կարգադրութիւնները կարճ էին ու կտրուկ:

Սարհատ մարտական ուժերու ղեկավարն էր, ու անգամ էր արտա-կարդ պատասխանատու մարմինն: Յետուն (Վարդան վարդապետ) եւ Գեղամ այս արտակարգ մարմնի անգամ էին: Մէկը փակուած Ս. Կարապետի վանքին մէջ, միւսը Մուշ, Եղգային առաջնորդարան: Սարհատ ազատ էր լեռները բարձրանալու, կամ դաշտը փոթորկելու, ամէնօրեայ մահը աչք առած:

Ու յեղափոխութեան երկընտրանքը պարզ էր.

- Արատութիւն կամ մահ:



Սարհատին յառած էին բուրբի աչքերը:

Թուրքերը սարսափի Հոգեբանութենէն ջղազար, մանչող առիւծը ու չընչացնելու Հետամուտ էին տեսարար:

Հայ ժողովուրդը եւ ազատազրական կազմակերպութիւնները իրենց յոյսը դրած էին Սասունցի Դաւիթին վրայ: Վտանգի այդ օրերուն Սարհատ Ասլանը Հեթիաթային թուր կեծակին կը շարժէր Տարօնի աշխարհին մէջ, ու Տարօնցին Սարհատին մէջ կը տեսնէր իր սպարապետը, իր Աւիւծ Մ'ները:

Հաւատքն էր որ ժողովուրդը կը կազդուէր:

Սարհատ Տետոյական խումբերը դասաւորեց, Հրահանգները տուաւ, ու իր ձիաւոր խումբով նետուեցաւ խաւարին մէջ, աստղերու եւ յուսաստուղին ապաւինելով:

Փարնան Հերկերը սկսած էին:

Դառն աշխատանքին վարժուած զիւղացին միայն իր եզներուն Հեա կը խօսէր, ու Հողի գոլորչին էր որ իրեն կը պատասխանէր:

Ու դաշտը կը թնդար, երբ զիշերը կ'երջնէր Հերկերուն վրայ:

Սարհատը Ասլանը կ'անցնէր յուսով դաշտէն...

## ԳԼՈՒԽ Դ.

## Ո՞ՒՐ Է ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇԸ ...

Գարուն էր, ու սրտում կար ամպամած դազաթններուն վրայ,  
 Զմե՞ռն անցած էր, թէ մէկ գիշեր:  
 Երազ ու իրականութիւն իրարու հետ կը շփոթէին: Ֆետայիները  
 ժողոված էին ձիւնէ գերեզմանները: Կ'անցնէին, նոյն վայրերէն, ճիշդ աշ-  
 նան այն գիշերներուն պէս, երբ կայծակը կը զարնէր բռնակալութեան բեր-  
 գերուն:

Սարնատ լուռ էր ու մռայլ: Մարտիկները գիտէին որ անոր մտքի  
 ճախարակը կը դառնայ, ու անմիջական կոուի մը հաւանականութիւնը  
 չկայ իրենց առջեւ:

Մութ գիշեր էր, լուսին չկար, ու խուճրը կ'երթար արագ-արագ...  
 Սարնատ ձիւնը գլուխը գարձուց դէպի Կուրտիկի բարձունքները:  
 Մէկ ժամ անցած չէր, երբ քսան ձիաւորները կը մտնէին Փեթար, ժայռե-  
 դէն դիւղը ցնցելով: Իսրոն իր պահակներով անոնց առջեւը կը բուսնէր:

- Հրաման, Սարնատ սիրելի, ո՞ւր առաջնորդեմ ձեզ...  
 - Առաջ անցի՛ր, Իսրո՛, եւ մեզի ցոյց տուր Երևուֆ ազայի դրա-  
 ւած սունը:

- Զարնելու ատենն է, մեզի ալ հրաման տուր, արմատէն կործնե՛ք  
 այս հիւսղները, գիւղը բուռին մէջ առան՝ կը քամէ, արիւն կ'երթայ մե՛ր  
 սիրտէն:

- Զարնելու ատենը չէ: Տունը ցոյց տուէ՛ք եւ հեռացէ՛ք: Միայն ի՛-  
 մաց տուէ՛ք իշխան Պետոյին, որ մենք այս տեղ եկած ենք խօսելու Երևու-  
 ֆին հետ, իրենք թող ամփոփ մնան:

Պահակները աունը ցոյց տուին եւ անհետացան:

- Միտակ, ձայնդ թո՛ղ, - ըսաւ Սարնատ...  
 Միտակի ձայնը գիւղը բռնած էր, ու Ֆետայիներու անցքը ջրտական

ցեղախումբի մը արշաւանքի պատկերը կը պարզէր մութ գիշերին մէջ:

Ֆետայիները ձայն կու տային իրարու:

- Ի՛հ, ազա՛ք, Սարնատի սիրտը երբ կ'ուղէ, ուրեմն հարսանիք  
 սկսաւ:

Արդէն հասած էին բակի դրան:

Սարնատ դարձաւ մարտիկներուն:

- Հարսանիք կամ կուի չկայ, դուստր եղէք: Եթէ անհրաժեշտ ըլլայ,  
 ազգանշանը իմ սասնոցէն կը լսէք:

Ու ձիաւորները դղրդոցով մտան բակը:

Վեց-ծօթը գինուած պահակները պատերուն փական՝ կարկամած:  
 Ֆետայիներու տեսքը, զէնքն ու զրա՛ն սարսափ կը մազէր անոնց վրայ:

Սարճատ վար իջու ձիկն: Հինգ Ծեսայիներ անժիլազէս անոր հե-  
տեւեցան ու ժտան ներս:

ԵռսուՓ աղան կարծես զէջ երազէ մը արթնցած՝ շուրջը կը նայէր: Երկու զինուած թուրքերը որ ներսը կը ծառայէին՝ քար կտրեցան սրտին տակ:

- ԵռսուՓ աղա, մեր այցելութիւնը բարեկամական է, եթէ կ'ըն-  
դունիս:

- Հազա՛ր բարոյ, հիւրն Աստուծուն է, հրամայեցէ՛ք, հանդիստ ը-  
րէք:

Սարճատ տեղ դրաւեց: ԵռսուՓ աղա կծկած նստեցաւ, չփոթ ու  
սպասողական:

- ԵռսուՓ աղա, - սկսու Սարճատ շատ հանդարտօրէն, - այս  
դիւղը, լերան կողին, մեր ճանապարհին վրայ եղած է, ու մենք շատ յա-  
ճախ այս տեղը զիջեցած ենք: Հիմա զիւղին տէրը դուն դարձած ես, ու  
քնական է որ Ծեսայական իսումը մեծաւորին տունը իջնէ:

- Հիւրն Աստուծուն է, - մարած ձայնով մը մնջեց աղան, վախն աշ-  
քերուն մէջ:

Սարճատ շնչակի նայուածքը յառեց ԵռսուՓ աղայի աչքերուն:

- Ի՞նչ կ'ուզէք այս աղքատ գիւղէն: Ի՞նչպէս եղաւ որ զիւղացիներ-  
բու հողերը ձեր սեփականութիւնը դարձան, ԵռսուՓ աղա: Այս խառնակ  
ժամանակները կ'անցնին, լաւ կ'ըլլայ որ բարեկամ մնաք Հայերուն:

ԵռսուՓ աղան առիթը յարմար նկատեց բացատրութիւն մը տալու:

- ԻՖէնտի, ես այս զիւղացիներուն դրամ տուած եմ, պարտքը չեն  
վճարած երկու տարիէ ի վեր, ու հիմա, իրենց կամքով, արտերը տուն  
պարտքի փոխարէն:

- Այս զիւղացիները իրենց կամքի տէրը չեն, ԵռսուՓ աղա: Մէկ  
ոսկի տուած ես խեղճ աշխատաւորին եւ երկու տարիէն՝ պարտքը դարձած  
է քսան սակի: Ո՞րտեղէն պիտի տայ այդ շտուած ու շտանուած դրամը:  
Այլահին կը հաւատաս՞, ԵռսուՓ աղա, ձեռք քաշէ այդ արարքներէն,  
վերջը լաւ չ'ըլլար:

Սարճատ վերջացուց խօսքը, ու ոտքի ելաւ:

- Գոնէ սուրճ մը սուէք, Էֆէնտի, - ըսաւ ԵռսուՓ աղան ու կորա-  
քամակ ոտքի կանգնեցաւ:

- Ճամբորդին ճամբայ հարկաւոր է, - ըսաւ Սարճատ, ու դուրս  
ելաւ բակը:

ԵռսուՓ աղան հետեւեցաւ Ծեսայիներուն, իսկ պահակները փա-  
կած մնացին պատին: Բակին մէջ աղայի զինուած պահակները անշունչ եւ  
անշարժ կեցած էին, զնշակահարութեան սպասող մահապարտի նման:

Ծեսայիները դուրս եկան բակէն, ու նեղ փողոցները ձիերու սմբակ-  
ներու արձագանդներով լեցուեցան:

ԵռսուՓ աղան եւ ծառաները բերանարտաց կը լսէին դղրդազին անց-  
քը Ծեսայիներուն, ու այն տղաւորութիւնն ունէին որ անհաշուելի բանակ  
մը կը հեռանար իրենց բակէն:

Ծեսայիները Փեթարէն դուրս ելան սրարչաւ:

Գիւղի ելքին, Իսրոն ձայն տուաւ:

- Ի՞նչ հրաման ունիս, պարո՛ն Սարճատ:

- Հա՛, պահակները արթուն են: Իսրո՛, հանդարտ, լայց սմուր կե-  
ցէք: Գիւղը չէ իմացած որ մեր խումբը այս կողմերէն անցաւ:

— Հրամանը ծեր գլխուն վրայ, մենք անլիզու ենք:  
 Մութին մէջ խումբը անհետացաւ: Քարերու տնջոցն էր որ կը շա-  
 րունակուէր հեռուներէն:  
 Աւ ձորերը կ'աղաղակէին... Ազատութիւն կամ Մահ...



Գիշերը անուշ չէր, գիշերը հեշտագին չէր...

Ֆետայիները կ'անցնէին դաշտէն բարկացած աստուածներու նման:  
 Աւ կքուն հայ գիւղերը կը լսէին Սարերու Աւլանի ձիւղերներուն  
 անցքը, որ թնդիւնով կ'արձագանգէր ճանապարհներուն երկայնքին:

Ժողովուրդի սիրտը քաջութեամբ ու հպարտութեամբ կը լնցուէր:  
 Իրենց պաշտելի Սարհատի արշաւներուն ու զարկերուն մասնակից էին հո-  
 գեպէս, առանց կրուորական սպասումի: Անոնք բոլորը՝ կին, երիտասարդ,  
 պատանի կամ տարեց, պատրաստ էին իրենց գլուխը դնելու ազատութեան  
 ճանապարհին, երբ ստիպողական գործը ներկայանար:

Այդ գիշեր Սարհատի խումբը արագընթաց կը մտնէր Առուառինճ  
 գիւղին, ուր Մուշի թուրքերէն Քասիմ պէկը գիւղը խեղդած էր:

Հակառակ կրկնակի աղաւթաբռութեան, Քասիմ կոնակը տուած թըր-  
 քական բանակին, կը ճզմէր Առուառինճի աշխատաւորները, որոնք յուսա-  
 հատած, պատրաստուած էին գիւղէն հեռանալ եւ ցրուել ամէն կողմ:

Այդ գիշեր... Կեծական խումբը շրջապատեց Քասիմի բնակարանը:  
 Բակին մէջ քսան զինուած պահակներ կային: Եէնքի ետեւի դրան առջեւ  
 երկու պահակներ, դէնքերը գրկած՝ քնացած էին: Հինգ Ֆետայիներ յա-  
 ուալացան դէպի դուռը: Պահակները դաշուհաւար՝ լուռ մնացին: Պատժիչ  
 խումբը ներս մտաւ եւ կայնեցաւ Քասիմի գլխուն վերեւ: Արթնցուցին Քա-  
 սիմը, որ այլալուծ, սեղէն չլրցաւ շարժիլ: Կինը անդիւի սենեակը գրկեցին:

— Քասիմ պէկ, քեզի լուր դրկեցինք որ հաշտ ապրիս հայ գիւղա-  
 ցիներուն հետ, խօսք չլսեցիր, հիմա խօսք կը հասկնաս:

Տասնոցի երեք հարուած կուրծքին եւ գլխուն, Քասիմի բռնութեան  
 բազուկն անշարժ կը դարձնէր:

Հինգ Ֆետայիներն արդէն դուրսն էին եւ իրենց ձիերուն վրայ, երբ  
 բակի պահակները, իրար անցած, դուրս ելան իմանալու համար թէ զէնքի  
 ձայնը ո՞ր կողմէն կու դար: Համազարկ մը ու անոնցմէ հինգ հոգի բակի դրան  
 առջեւ ինկան: Միւսները ներս փախան եւ պատերուն տակէն՝ դէպի եր-  
 կինք կրակելու սկսան:

— Եարժեցեք արա՛գ, — ըսաւ Սարհատ, — լնու պիտի հասնինք:  
 Ճամբայ կայ կտրելիք: Յետապահները բակին վրայ թող կեղբորնացնեն  
 իրենց հարուածները: Եւ առանց ժամանակ կորսնցնելու՝ հասնին մեզի:  
 Ժամադրութեան վայրը գիտէք, իրարմէ բաժնուած պարագային, ամէնքը  
 ալ խմբապետ էք, ու գիտե՛ք ձեր գործը:

Ռումբին անցքը կը ցնցէր Առուառինճի տուները: Ժողովուրդը, դէն-  
 քի ձայնէն արթուն, թոնիրներու շուրջ համախմբուած՝ արշալոյսին կը  
 սպասէր:

Ֆետայիներու կայծակէ լոյսը կ'անցնէր կքած ու ճզմուած հայ գիւ-  
 ղէն:

Մտրհատի խուճբը կ'անցնէր ոլորապտոյտ փոթորկումներով: Տեղ մը մուտքին մէջէն կը ստուաէր, ու թշնամու կրակոցը կը դադարէր: Ուրիշ տեղ մը հարուածը կ'ըլլար շեշտակի, ու դիակներ կ'իյնային պահականոց- ներուն առջեւ: Ու խուճբը կ'անցնէր արագ-արագ:

Արեւի տառջին ճառագայթները նոր կ'ին պսակ կապած Ծովառարի գագաթին, երբ Ֆետայինները կը մտնէին անտառը, Մառնիկի բարձունքին, անցնալի այնքան հարուստ յուշերով:

Մառնիկը ողբերութեան մէջ էր:

Ֆետայինները երկու օր հանդիստ պիտի ընէին:

Տ

Մուշի կառավարական շրջանակները առաւօտը կը դիմուորէին իւր- ուովքով:

Փեթարէն Եռուստֆ պէկը արդէն նահանգապետին քովն էր ու կը պատմէր Ֆետայիններու ձիւտար արշաւանքը իր տան վրայ: Զօրք ու ոստի- կան կը պահանջէր, զիւզը եղմէլու, որ յանդգնած էր Գէորդ Չափուշը սպառնալիքի տակ առնել զինք: Ժանտարմներու շոկատ մը անմիջապէս ճամբայ կ'ըլլէր գէպի Փեթար: Եռուստֆ պէկը իր զինեալներով անոնց ըն- կերացաւ:

Ճանապարհին, իր մտմտութեան մէջ, ձիւտն վիզը կը շոյէր, եւ կը հաշուէր այն սակիները, որ պիտի քամուէին այս ըմբոստ գիւղէն:

Երբ Փեթարի ջուրը տաքցնելու զատան մտածումը կ'ընած էր նա- հանգապետը, նոր գոյժ մը կը հասնէր Առուտարինձէն: Քասիմը սպաննուած: Անոր եւ պահակ թուրքերուն դիակները Մուշ բերած էին: Թրջական թա- ղը սուգի մէջ էր:

– Ի՞նչ կ'ընէ կառավարութիւնը... Ո՞ւր են մեր բանակները... Ֆե- տայինները մեր արմատը կտրելու սկսած են:

Ձայն մը այս կողմէն, ձայն մը այն կողմէն, ողբերգութիւնը կը բըն- նէր թրջական թաղերը:

Հայերը շուկան դոցեցին եւ իրենց թաղերը քաշուեցան: Կոտորած կրնար տեղի ունենալ:

Նահանգապետն ու զօրքերու հրամանատարը զօրք ճամբայ հանեցին գէպի Առուտարինձ: Փեթար երկրորդական նկատուեցաւ:

Կատաղութեան նոպայի մէջ էր Մուշ քաղաքը: Թրջական զօրքերը դաշտի հիւսիսն ու հարաւը, արեւելք ու արեւմուտքը բռնած էին:

– Ո՞ւր է Գէորդ Չափուշը...

Մտրակն ու սուրը կը շաչէին, տեղեկութիւն մը կորդիլու հայ շար- քաշ աշխատաւորէն, հովիւէն, մած բռնողէն:

– Անհաւաստե՛ր, ո՞ւր է Գէորդ Չափուշը...

– Էֆէնտի՛, ի՞նչ գիտնանք թէ ո՞ւր են Ֆետայինները: Անոնց երեսը տեսած չենք: Անոնք թուրք եւ քիւրտ պէկերուն կ'այցիւեն, մենք հովիւ- մարդ ենք, մաճը բռնելէն դատ ուրիշ բան չենք գիտեր: Այս ի՞նչ Աստու- ծոյ կրակին հանդիպեցանք...

– Կեանքներնե՛ր, դուք միայն հո՞գը կը հերկէք... Լուծը կտարի- ցէ՛ք, այդ անհաւատը զէնք պահած կ'ըլլայ լուծին մէջ:

Ու լուծը կը կտորէին, հայ ազատագրական Յեղափոխութեան մէջը կտորէիւ համար:

Անդին ջրտական ցեղախումբերուն մէջ հեքիաթային լուրերը չըջան կ'ընէին, ու Սարհատ անոնց աչքին կը դառնար անպարտելի Քէօր Օղլին:

»

Գարնանային ցուրտ գիշեր էր: Ֆետայինները հանգստացան Մառնիկի սուններէն ներս: Օձախնկերուն մէջ կրակը կը ճարճատէր: Մովսսարի այս կողերուն վրայ ձմեռնային վերջին ցուրտերը կը յամենային:

Առաւօտը կը քայուէր խորհրդաւոր լուրերով: Սուրհանդակները հասած էին ու անոնք ժողովուրդի ոգեւորութեան մասին կը խօսէին:

Թրքական զօրքերը դաշտը տակնուվրայ կ'ընէին, ու ամէն կողմ հարցումը նոյնն էր.

— Ո՛ւր է Քէօրգ Զավուչը...

Սուրին ու մարակին դէմ, կողոպուտին եւ սարսափին դէմ, հայ ժողովուրդը զլուխը կախ, զամէշի դիմացկունութեամբ եւ համբերութեամբ՝ լուծը կը տանէր... ազատութեան հերկին:

Սարհատ վաղուան արշաւանքի մասին կը մտածէր: Ֆետայիններն ու Մառնիկի մարտիկները անոր շուրջն էին, ու զրոյցը կ'ընթանար կատակներով, մինչ Սարհատի դէմքը մտայլ էր, աչքերը խորունկ:

Գիւղի պահակները ներս մտան Վարդենիսի շրջանի հին Ֆետայիններ Յակոբի ու Մօսիկի հետ: Անոնց կ'ընկերանային երկու զինեալ զիւրտեր:

— Պարոն Սարհատ, ահա քեզի նոր հիւրեր: Թէ՛ Ֆետայի եւ թէ՛ քիւրտ:

Զարմանքի արտայայտութիւն մը գծադրուեցաւ Ֆետայիններուն դէմքին: Յակոն ու Մօսիկը արդէն ընկերներուն հետ կը համբուրուէին:

Անոնք դարձան Սարհատին եւ բարեւի կեցան:

— Բարո՛վ, տղաք, հանելուկը ի՛նչ է...

— Պարոն Սարհատ, Ղասրժ պէ՛կը դիւղէն դուրս կը սպասէ, քու խօսքը կ'ուղէ, այցելութեան գալու համար:

— Բարո՛վ եկաք, — ըսաւ Սարհատ քիւրտերէն, եւ հրաւիրեց քիւրտերը որ նստին:

Հասէն ու Հատանօն տեղ գրաւեցին, հիացական հայեացքը Ֆետայիններուն, որոնք լերան պէս մարդիկ կ'երեւէին իրենց աչքին:

— Բարո՛վ եկաք, ինչպէ՞ս է Ղասրժ պէ՛կը... — ըսաւ Սարհատ, ջրը տակն վարուեցաւ կերպի ներքութեամբ:

— Մեր աչքի լոյս, Քէօրգ Զավուչ, պէ՛կը գիւղին տակն է, մեզ զրկեց քու մօտ, եթէ կ'ընդունիս, հոս պիտի դայ քեզի հետ խօսելու:

Սարհատ դարձաւ Յակոբին ու Մօսիկին:

— Հինգ հոգի մի նստեցէք, ընկերացէք Հասէին եւ Հատանոյին, եւ Ղասրժ պէ՛կը հոս հրաւիրեցէք: Քրտական յարգանքները գիտէ՛ք:

Սարհատի շուրջ ստեղծուեցաւ դիմուորական պատուար մը, արձանային ու պատկառելի: Դրան առջեւ գինուորական պահակ, Ֆետայական սպառազինութեամբ: Գիւղի երեւելիները ընդունելութեան պատշաճութեամբ:

Կէս ժամ հաղիւ անցած էր, էրր ձիաւորներու ստուար խումբ մը րակը մտաւ:

Ղասըմ պէկին կը հետեւէին Հասէն ու Հասանօն, եւ հին Ֆետայի- ներէն Յակօն եւ Մօսիկը: Ղասըմ պէկը բարեւեց պաշակները եւ ներս մտաւ: Սարհատ դրան առջեւ անոր ձեռքը բռնեց եւ տարաւ վերը, իր կող- քին: Ֆետայիներէն տաս հոգի կանգնած էին, պաշտօնական պահպառանք մը ստեղծելով:

- Ղասըմ պէկ, դուն բարով եկար, մեր սիրելի հիւրն ես, - ըսաւ Սարհատ, - հրաման տուր որ զիւզի երեւելիները նստին:

- Հրամանը ձերն է, ընկեր Գէորգ:

Ղասըմ պէկը ընկեր բառը հայերէն ըսաւ, ու բոլորէ դէմքին ժպիտ մը խաղաց:

Սարհատի նշանին վրայ, ամէնքը տեղ դրակցին, բայց Ֆետայիներ- քու տասնեակը պաշտօնական իր դիրքը պահեց կանգնած:

- Ղասըմ պէկ, ձեր գալուտը բարի: Մենք իրարու մասին շատ ենք լսած, բայց առաջին անգամն է որ իրարու կը հանդիպինք: Թուրք կտտա- վարութիւնը այս երկիրը քանդեց, ու միաստուղը Հայն ու Քիւրտն են:

- Գէորգ Չամուշ, այսօր եկած եմ քեզի հիւր, եկած եմ աղ ու հաց կարելու քեզի հետ, - ըսաւ Ղասըմ պէկը առանց ձգձգումի, - Ֆետայի- ները, ահէ էտք, իմ եղբայրներն են: Եթէ ընդունիք, մենք ալ կը գոր- ծենք միասին:

- Հիւրն Աստուծուն է, ու դուք ալ մեր եղբայրներն էք, - ըսաւ Սարհատ, - աղ ու հաց որ պիտի կարենք, թո՛ղ Աստուած վկայ ըլլայ, որ այդ ուխտը անխորտակ մնայ:

- Ալլահն թող վկայ ըլլայ...

Մթնոլորտը տաքցաւ, ու հիւրասիրութիւնը սկսաւ:

Ամէն կողմ կրակ կը վառէր: Պոյները մտաբեր դարձած էին: Ղասըմը պիտի հիւրասիրուէր ցեղապետական շքեղութեամբ:

Սարհատ մատի շարժում մը ըրաւ: Ֆետայիները գուրս եկան ընդու- նարանէն:

Սարհատ դարձաւ Ղասըմին.

- Քեզի հետ, Ղասըմ պէկ, առանձին խօսք ունիմ:

Ղասըմ պէկ ձեռքը շարժեց:

Հասէն, Հասանօն եւ միւս զինուած քիւրտերը, որ ընդունարանի պա- տին տակ շարուած էին, դուրս ելան:

Դուրսը, զիւղը ցնծութեան մէջ էր բարեկամական այս արտայայ- տութիւններէն: Հայկական եւ քրտական բանակ մը ներկայ էր այս բար- ձունքներուն վրայ:

Սարհատ եւ Ղասըմ պէկը խորհուրդի նստած էին:

- Ի՞նչ է միտքդ, պէ՛կ, ի՞նչ պիտի ընենք: Պօսինք եղբոր պէս, - ը- սաւ Սարհատ:

- Իմ կապը վերջնականօրէն խզուած է թուրքէն: Դուք էք արդար եւ շիտակ ճամբուն վրայ, - ըսաւ Ղասըմ պէկը, - այսօր, դուն այս երկրի Քէօր Օղլին ես, մենք իսայի՛ն ոռումին (թուրքին) դերի: Օր մը փաշա ենք, օր մըն ալ կը դարձնեն բոշայ...

- Օ՛ր, եթէ մեր քիւրտ պէկերը այդ բանը լաւ ըմբռնէին, մեր երկի- րը շատոնց ազատած կ'ըլլար Օսմանցու սուրէն, - ձայն բռնեց Սարհատ:

Ղասըմ շարունակեց.

- Իմ աղբորն ըսեմ, թուրքը ամէն շարիք գործեց մեր գէմ, ու մենք խեղճի չեկանք: Ես ու Մուսա պէկը թոռնիկներն ենք Ալատին փաշային:

որ այս երկրի տէրն էր եւ եղբոր պէս կ'ապրէինք Հայերուն Հետ: Երկու Հարիւր տարի առաջ Ալատին փաշայի տունը եւ ձեր երեսելիները Համաձայնութեան ևկան վրացիներուն Հետ, որպէսզի Օսմանցուն քշինք այս տեղերէն: Օսմանցին մեր մեծերը խորեց, ու մենք այսպէս մնացինք: Քանի՞-քանի փաշաներ եւ պէկեր Ալատինի տունէն կախաղան կ'աւն, ու քանի քանի-ններ աջօրներուն մէջ միտան: Հիմա ի՞նչ է մնացած Ալատինի տունէն: Կառավարութիւնը Օսմանցունն է, զօրք ու ոստիկանութիւնը, դատարանը, իշխանաւորը Օսմանցունն է, մենք անոր ձեռքին գործիք: Մուսա պէկը Կիւլիզարի տոնականումով՝ մեր տունը թշնամի դարձուց Հայերուն: Այսօր ես կ'աւն եմ միանալու ձեզի, Ֆետայի գրուելու, ես ալ կ'ըլլամ ձեր կոմիտէներէն մէկը:

Յուզուած էր Ղասրմ պէկը, ու անոր Հոգին զղջումի թրթռացումն ունէր:

- Սարհատ թոթուեց զլուխը որ մտածումներէն ծանրացած էր:
- Ղասրմ պէկ, եղբայրս, Հայա՞լ սրտով կ'աւն ես մեզի ընկերանալու:
- Հայալ սրտով, Գէ՛որդ, ալ ինծի ուրիշ ճամբայ չկայ:

Երկուքն ալ լռեցին: Երկուքն ալ ճակատադրական դարձուածքի մը առջեւ կը գտնուէին:

- Սարհատ կտրուկ որոշեց.
- Ուզածդ ըլլայ, Ղասրմ պէկ, մենք եղբայր ենք:
- Ու ձայն տուաւ.

- Յակօն ու Մօսիկը, Հասէն ու Հասանօն Հոս թող գան:  
Մանուկն եւ Ախօն, որ դրան առջեւ պահակ կ'եցած էին, ձայն տուին:  
Ու մէկ վայրկեանէն անոնք արդէն Սարհատի եւ Ղասրմի դէմ կ'եցած էին զինուորական յարուածութեամբ:

- Աչ ու Հաց բերէք: Ֆետայիներու խմբապետներն ալ թող ներք գան, - ըսաւ Սարհատ:

Մրրաղան արտողութեան մը առջեւն էին բոլորն ալ: Հոն էին չորս-հինգ զինեալ քերտեր, ոտքի ու սպասողական: Հոն էին թիկնեղ Մակարը, Մանուկ Շէնիկին եւ Գամսայ Մօսոն, ոտքի, երկաթի պէս արձանացած:

Սարհատ Հացն ու աղը ներկայացուց Ղասրմին:  
Ղասրմ պէկը ոտքի կ'աւն, Սարհատն ալ կարգը պահեց: Հացն ու աղը կ'իսկնէին, եւ Հաղորդութեան պէս իրենց բերանն առին:

- Մուրր է այս ուխտը, - ըսաւ Ղասրմ:
- Մուրր թող մնայ այս ուխտը, - աւելցուց Սարհատ, ու անմիջապէս իր տաննոց ատրճանակը եւ դաշոյնը հանեց:

Սարսուռ մը անցաւ ընդունարանէն... յայց զէնքերը ափսէի մը վրայ դրաւ:

- Ղասրմ պէկ, Ֆետայական օրէնքն է, Ֆետայի դառնալու Համար այս զէնքերուն վրայ երդում պիտի բնես, թէ՛ Հաւատարիմ պիտի մնաս այս յեղափոխական ուխտին:

- Աստուած վկայ, ես որեւէ մզկիթի մէջ այսքան օրտանց աղօթած չեմ, - ըսաւ Ղասրմ ու ձեռքը դրաւ զէնքերուն վրայ, - Աստուած ու Գէ՛որդ Զավուրը թո՛ղ վկայ ըլլան որ այս ուխտը սրբութեամբ պիտի գործադրեմ, թէ՛ ոչ՝ իմ գլուխը Հայալ է ձեզի... ու ձեռքերը սրտին վրայ դրած՝ ետ քաշուեցաւ:

Ղասրմ շարժում մը ըրաւ: Հասէն ու Հասանօն քանի մը զինուածներ-



րու հետ մտեցան ակտիւն, ծունկի եկան, եւ ձեռքերը դրին Սարհատի տասնոցին եւ դաշոյնին վրայ:

- Աստուած եւ Գէորդ Չափուշը վկայ...:

Հայ ու քիւրտ Ֆետայինները իրարու փախկնաւոր էին եզրօր պէս:

- Տէ, տղա՛ք, զուրս եկէ՛ք, պարը թող սկսի:

Քանի մը վայրկեան ետք պարը տաքացած էր բակին մէջ: Իրարու զէմ անհաշտ կռիւ ունեցողները պարզօտին մէջն էին եղբայրօրէն: Ազատութեան շունչի հրաշքն էր որ ուրախութեամբ կը լեցնէր Մաննիկի բարձունքները:

Սարհատ եւ Ղասրմ պէկը դուրս եկան հիւրասրահէն, ու անոնց երեւումը գրկախառն, ողևորեց պարի ելլողները: Պարը պատերազմական գրոհի պատկեր ստացաւ, ու Ծովասարի ժայռերը թնդազին ծափահարեցին...:

Նոր կեսնքի մը արշալոյսը կը բացուէր հայ ու քիւրտ եղբայրութեան:

Ղասրմ պէկը կոմիտէ կազմած էր ու ինքն ալ դարձած Ֆետայի, ծածկանունն ալ Մեխք...:

Պարը վերջացած էր ու նշան խփելու նոր տեսարան մը կը սրբադրուէր դիւրի բացատրին: Մաննիկի մարտիկները կողով մը հակիթ փոխադրեցին հարիւր մեթր հեռաւորութեան ու քարի մը վրայ դրին հակիթ մը: Յեղապետական սովորութիւն էր, նշան խփելու մրցումը հերասիրութեան մաս կը կազմէր:

Ու անա, իրարու հասէն, Ղասրմի մարտիկներն ու Ֆետայիններն ոմանք իրենց զէնքերն ու աչքերը փորձի դրին:

Քիւրտերու սասը հարուածէն միայն մէկը հակիթը օդը հանց:

Ֆետայիններէն ոմանք հինգ հարուածով երկու հակիթ ժայռէն թրոցուցին: Հեռաւորութիւնը շատ կը դանդաղէր, մանաւանդ քիւրտերը, որոնք կ'ուզէին հպարտութեան դափնին լահիլ դիւրին ճանապարհով:

Սարհատ առաջարկեց Ղասրմին որ իր զէնքը փորձէ: Բոլորը լարուած ուշադրութեամբ հետեւեցան անոր շարժումին:

Ղասրմ կեդրոնացաւ, տիրեց իր ջրդերուն եւ նշանադրութիւնը սկըսաւ: Եօթներորդ հարուածին հակիթը աներեւութացաւ: Ղասրմ քրտնած ճակատով ոտքի կանգնեցաւ:

- Ալ չեմ շարունակեր, գոնէ զէնքին պատուը տեղը մնայ:

Ու դարձաւ Սարհատին:

- Մեր Քէօր Օղլին գուն ես, քանի մը դնդակ ալ դո՛ւն նետէ, թող այս գինակիցները ուրախանան:

Սարհատի մօտին հրացանը բերին:

Ոտքի, ու տոանց յենարանի, Սարհատի աչքերը հեռաւոր քարը գրկեցին:

Առաջին հարուածէն հակիթը ծաղիկ մը ձեւացուց օդին մէջ:

- Ա՛հ... - բացազանչութիւն մը քիւրտերէն:

Սարհատ հինգ հարուած ուղղեց նշանին, ու հինգ հակիթները օդը հլան:

Հրացաններ բացազանչութիւններ ամէն կողմէ:

Մինչ Սարհատ արդէն սկսած էր կատակել Ղասրմ պէկին հետ:

- Հիմա, քու Ֆետայական անունը Մեխք է: Մեխք թագաւոր կը նշանակէ, ու մենք Չափուշ մնացինք:

– Այն որ իր դնդակը կաքուռի աչքին կը դպցնէ անվրէպ, ինչպէս քու երգին մէջ ըսած են, ան է պատերազմի թագաւորը, – ըսաւ Ղասըմ, հիացմունքով աչքը յառած Սարհատի երկաթեայ դէմքին:

Խոնուած հայ ու քիւրտ մարտիկները ոգեւորութեամբ ու զարմանքով կը խօսէին Սարհատի անվրէպ նշանառութեան մասին:

Ղասըմ պէկի եւ իր ղինակներուն վրայ նշանառութեան այդ տեւորանք իտր տպաւորութիւն կը թողուր: Շատ էին ըսած Գէորգ Չափուշի մասին, քիւրտերէն երգերու մէջ անման հերոս մը կը նկարագրէին, բայց այն ինչ որ իրենց աչքով տեսան՝ կը գերազանցէր հեքիաթային հերոսութիւնները:

Սարհատ անոնց աչքին անկերպազանցիլի հերոսն էր: Ու քիւրտերը հերոսի պաշտամունք ունէին:

Գէորգէն ետք, Ղասըմ պէկը պիտի մեկնէր իր շրջանը: Ուստի որ կնքուած էր, Հայն ու Քիւրտը ազատագրական նոր ճամբու մէջ կը դնէր:

Ղասըմ պէկը իր նշանաւոր կտրիճներէն Հասէն ու Հասանոն կը յանձնէր Սարհատին, որպէս անոր խումբին անդամ: Իսկ Սարհատ Միլիթի տրամադրութեան տակ կը դնէր Յակոն ու Մոսոն, փորձառու հին Ֆետալիները:

Յեղափոխութեան խիզախ արարքներու հրաշքն էր, որ ազատութեան շունչը կը տարածէր այս բարձունքներուն վրայ:

Խոսն խումբերը ստեղծուած էին Մառնիկի բարձունքին:

Սարհատ ճամբու գրու Ղասըմ պէկը ջերմ մաղթանքներով: Ձիաոր խումբը շարժեցաւ Մառնիկէն: Քիւրտ կրգիլը ձայն ձգած էր, իրենց երթին հանդիսաւորութիւն տալով: Գէորգին նուիրուած երգն էր որ կը թընդար ձորերուն մէջ:

Կոխ է, տաք կոխ է,

Գեորգի հարուածը կաճախ աչքին է...

Անվրէպ հարուածը Ֆետալու փառքը եղաւ, ու երգերը հնչեցին Տարօնի աշխարհին մէջ, ի փառս այս անձնագոհ մարտիկներուն, որոնց փառքը մեծ եղաւ ու կեանքը կարճ...

✽

Մայիսի առաջին երկու օրը կը վերջանար ու խաւարը կը կլանէր ծաղկաւէտ լեռներն ու Մշոյ դաշտը:

Գիշերն անուշ էր, գիշերը բուրումնաւէտ...

Ու ճամբաները կը բացուէին Ֆետալիներուն առջեւ:

Այժմ կալից օրը աննկատ պիտի շանցնէր:

Սարհատ խումբը ճամբայ հանեց եւ աներեւութացաւ համառարած խաւարին մէջ: Մառնիկցիները երկար պահ մը մնացին գիւղին եզերքը ու անոնց սիրար հրճուանքով տրոփեց հեռացող մըրկներու արձագանգին հետ:

Մեղրագետի ափին, խումբի մէկ մասը անցաւ Ս. Կարապետի շրջանը՝ Կորիւնի խումբին միանալու: Անոնք տեղեկութիւններ պիտի հասցնէին Ս. Յովհաննու վանքին անասորը, ուր Սարհատ քանի մը օր պիտի սպասէր:

Սարհատ իր հետ պահած էր տասնեւհինգ ձիաւորներ, յանդուգն ու

երիտասարդ, դաշտի եւ լեռնաշխարհի տմէն բաւիղներուն ծանօթ: Ու անոնք կ'անցնէին արագ ու անվարան:

Հրամանը անխախտ էր: Ծանապարհներուն վրայ եթէ թշնամին երևնար, շանթաւար պիտի իյնար:

Մարհատ անցաւ Փնթար գիւղի ստորոտէն: Պահակներն արթուն էին ու սպասողական: Անոնք ոտքի վրայ, ու Ֆետայիները ձիերը զսպած՝ Սարհատին դիկոյց տուին:

– Պարոն Մարհատ, Եռուսիֆ աղան մեղ խաչեց: Ոստիկաններու ընկտա մը Հեան ասած երէկ առաւօտեան գիւղը դարձաւ: Տունէ տուն մտան ու պանջնեցին: Երեք հարիւր հնչիւն ոսկի տուգանք առաւ բոլորէս, ու վերադարձաւ Մուշ: Երկու պահակ թողած է հոս: Մեկնած ասան գիւղապետին ըսաւ, – Տէ՛ր, հիմա պայէք ձեր Գէորդ Չավուշը բերէք, որ մեզ պաշտպանէ...

– Հասկցայ, – ըսաւ Մարհատ, – երկար խօսքին կարճը... կը տեսնուիք Եռուսիֆ աղային Հեա:

Իր ձօտ կանչեց Իսրօն եւ Թատէն: Միւս պահակներուն:

– Ձեր տուները պացէք: Պաշարը յանձնեցէք տղաներուն: Մենք ճամբան պիտի շարունակենք գէպի Սասուն:

Երբ պահակները անհետացան, Մարհատ դարձաւ Մանուկին եւ Ախոյին:

– Ձիերը յանձնեցէք տղաներուն: Ձեզի Հեա պիտի ըլլան Իսրօն եւ Թատէն: Ի՞նչք Մուշ եւ տանը մէջ, ձեր գիւղի հաշիւը մաքրեցէք Եռուսիֆին Հեա... երթուղարձը երեք ժամ կը տեւէ: Ժամադրութեան տեղը գիտէք:

Մանուկն ու Ախօն քիչ մը հաց ու պանիր առին բերուած պաշարէն, ու նետուեցան վարի ձորերը:

Գէս գիւղերին, ձիաւոր խումբը հաց ու պանիր կը ծամէր Ս. Յովհաննու անտառին մէջ, աստղերու ցուփերուն տակ:

Ձարքաշ մարդիկ, քար մը իրենց դիրտուն տակ, զէն ու զբահոզ կը քնանային: Մտերու մեղեդին անոնց պահանջները կը շոյէր, իսկ պահակները, աշտուրջ, վանքի ճամբաներուն կը հոկէին:

Արշարոյսը դեռ բացուած չէր, երբ Ախօն ու Մանուկը անտառ մտան ու օրունան նշանախօսքը արտասանեցին: Պահակները պատասխանեցին: Անոնք արդէն իրարու գրկին մէջն էին: Ուրախ էին: Հարուածի գացած անձնուէրներուն Համար, մէկ օր աւելի սպրիւր երկար կեանքի մը նուէրն էր:

Շչուկէն Մարհատ արթնցաւ:

– Արա՛մ, ի՞նչ կայ...

– Ախօն ու Մանուկը վերադարձան:

Ու արդէն անոնք Մարհատի դէմ կեցած էին:

– Հը՛, տղա՛յ է, թէ աղջիկ...?

– Եղաւ, – ըսաւ Ախօն:

Մանուկը աւելցուց.

– Ախօն տան ծակն ու ծուկը գիտէր: Դունէն ներս չմտանք: Տան ետեւը պատուեան կտր, Ախօն իմ ուսին ելաւ ու ներս մտաւ, ես ալ Թատէի ուսէն պատուեան մտայ, Իսրօն ու Թատէն պահակ կեցան: Քանի մը վայրկեանէն մեր հաշիւը մաքրեցինք Եռուսիֆ աղային Հեա ու պատուեանէն դուրս ցատկեցինք: Պարոն Մարհատ, ձիու վրայ մեր ոտքերը չօրցան, Մուշ դացինք, եկանք, ոտքերնիս բացուեցաւ:

– Գացէ՛ք, հանգիստ ըրէ՛ք: Պլպլալու ժամանակ չէ:  
Սուրով հաշիւը մաքրուեցաւ Մուշի երեւելիին հետ: Ու յաջորդ աւառտուն, Մուշի թուրքերը կրկնակի սուսի մատնուեցան:  
Հիմա դաշոյնի ծայրը Մուշի տուներէն ներս մտած էր: Կառավարութիւն, զորարանակ, ոստիկան եւ պատէն կախուած հրացանը ապահովութեան երաշխիք չէին:  
Արեան դէժ արին:  
Անհաւատներն ալ հաւատքի եկան:



Մառնիկի բարձունքին իրարու յաջորդող շարժումները թրքական զօրամասերու ուղադրութիւնը այդ կողմի վրայ կը լարէր:

Ղասրժ պէկի զինուորներուն անցուղարձը, որ տեղի կ'ունենար քրտական աղճուկով, զօրամասերու աչքի առջեւէն կ'անցնէր:

Թրքական սպան իր հետեւորդներով իջեւանեցաւ Ղասրժ պէկի տունը:

– Ղասրժ պէկ, մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն, Գէորդ Ջափուշը ապաստանած է Մառնիկ գիւղը: Այդ մասին ի՞նչ տեղեկութիւն ունիք:

– Ծիւղ է լուրը, – ըսաւ Ղասրժ, – իմ հաւատարիմ ծառաներէն մէկը անոնց անցըր անսած է, երբ անոնք կէս դիւլերին դէպի Մառնիկ կը բարձրանային:

– Ուրեմն ստո՞յլ լուր է, – մտահոգ խօսեցաւ սպան:

– Ես անձամբ ուղեցի այդ կեալուրը յանկարծակիի բերել: Ձիււոր խումբով մը Մառնիկ բարձրացայ: Առանց գիւղը մտնելու, ծառայ մը զըրկեցի հայու մը տուն, որ հաւատարիմ կը մնայ մեզի: Անկէ իմացանք որ արշալոյսին ֆետայիները հեռացած են դէպի Սասնոյ լեռները: Առանց գիւղը մտնելու, երէկ կէսօրին ետ դարձանք:

Սպան գոհունակութեամբ կը հաւատար Ղասրժի ղեկուցման ստուգութեան: Ուրեմն Ղասրժը հաւատարիմ կը մնար կառավարութեան:

Ու Ղասրժն ալ գիտակցարար այդ տուրքը կու տար Օսմանեան բանակի ներկայացուցիչին, վստահ որ իր հաւատարմութեան լուրը անմիջապէս պիտի հասնի Մուշ:

Քրտական խորամանկութեան աւելցած էր նոր մկրտուած կոմիտէի գաղտնապահութիւնը:

«Ընկեր» Մեկիբը սուսով շխտակ ճամբու մէջ էր...



Հին օրերու յիշատակ...

Ս. Յովհաննու անտառին մէջն էին հինաւուրց ֆետայիները: Կրկին առաւօտը կը բացուէր մթաստուեր անտառին վրայ, հաց ու պաշար կու գար վանքի անտեսուունէն: Վանահայրն ու թրքական վաշտը անդիտակ էին այս բոլորէն:

Եռուսէ պէկի շանթահարումը ամէնէն շատ ուրախացուցած էր Հասն ու Հասանոն, որոնք գերերջանիկ պահը կ'ապրէին: Ֆետայի դարձած

էին ու հիմա Սարերու Աւրանի թեւին տակ կը գտնուէին: Եռասուֆի մաք-  
րագործումին կարծես իրենք ալ մասնակից եղած էին:

- Գէտ'որդ Չաւուշ, ես քեզի ծառայ, - բաւ Հասէն, - Ղասրմ պէկը  
պիտի ուրախանայ, որ Եռասուֆը այդպէս շուտ մէջտեղէն վերցուցիք:  
Մուշի աղաներն ալ թող հասկնան որ մեր համբերութիւնը վերջացած է:  
- Հասէ, մարտուի՛ր, դուն հիմա իմ ծառան չես, այլ իմ ընկերը, -  
բաւ Սարհատ:

Ֆետայիներն ու քիւրտերը ծիծաղեցան, ու իրար համշտեցին:

- Տեսա՛ք, մեզմէ աւելի բարձր տեղ մը դրու Հասէն:

Հասէն ու Հասանօն ընկերակիւն այս միջոցումն զինովցած էին:  
Հասէն.

- Սարերու Աւրան, դուն կ'ուզես ընկեր ըսէ, կ'ուզես ծառայ, բայց  
մենք քու կատարած գործին ծառայ Լիք մինչեւ մահ... .

Սարհատ բաղուէր դրաւ Հասէի ուսին, անխօս: Հասէի հոգին լեց-  
ւած էր երջանկութեամբ, ու անոր աչքին աշխարհն ամբողջ այդ վայրկեա-  
նին, Սարհատի բաղուէի հպումին մէջ կը խտանար:

Սարհատ դարձաւ Ֆետայիներուն.

- Եռաւ բան մը կերէ՛ք, փորձանք մը կրնայ մեզ տեղահան ընել այս  
անտառէն: Կատակի ատենը չէ:

Գոմայ Մօսօն տղաներուն ականջին փոփսաց.

- Կոխ չկայ այսօր, Սարհատի դրուէին մէջ ճարարակ կը դառնայ:

Սարհատ, մտածումներու թափոցներուն մէջ՝ հանդարտօրէն կ'ոնեակը  
կը խմէր, ու անցած քանի մը օրերը կ'իտքի կը զարնէր:

Մակար եւ Չօյն մտայլ մտածումներ ունէին: Չէին հաւատար Ղա-  
ւրմ պէկի բարեկամութեան, բայց չէին արտայայտուեր:

Սուրհանդակներ արգէն հասած էին, ու շրջաններու զեկուցումները  
կը հաղորդէին Սարհատին:

Փեթարէն եկած էր Իսրօն որ մասնակցած էր հարուածին:

- Պարտ'ն Սարհատ, Մուշի թուրքերը սուպի մէջ են, իսկ Առուա-  
սինճն ու Փեթարը, իրենց բոլոր ցաւերը մոռցան: Թուրքերու հստք կտրե-  
ցաւ այս գիւղերէն:

Սարհատ դարձաւ միւս սուրհանդակներուն.

- Չարչի՛ Սիմօն, Աւրանի շրջանէն ի՞նչ լուրքեր ունես:

- Պարտ'ն Սարհատ, Կորիւն փափաք յայտնեց որ փոքրիկ խումբով  
մը այդ կողմը անցնիս: Տեղի ունեցած զէպքերէն մտահոգ էր:

- Երեւի Կորիւն Տասարակէն նամակ ստացած է: Անոր խոհեմութեան  
բարոյնները երկաթ կը մաշեն:

Յակէն ու Յովսէփը, Մասունէն եկած՝ իրենց օւրախութիւնը յայտ-  
նեցին տեղի ունեցած հարուածներուն մասին:

- Գէտ'որդ, քեզ խուրոպան, քիւրտերը սարսափած են, իսկ Մասունի  
զօրանոցներուն մէջ սպանկերու եւ ոստիկաններու ամբողջ խօսակցութիւնը  
Ֆետայիներու հերոսութեան մասին է: Մասունը հիմա խաղաղ է, բայց  
մողովուրդը կարօտը կը քաշէ իր կտրիճներուն: Խումբ մը թող մեր կող-  
մերն ալ դայ քանի մը շարաթ:

- Թող մեր ուղածը ըլլայ: Մակարը մեր կողմերը կ'անցնի, - բաւ  
Սարհատ, - երեւի մէջքերնիւ կը քերտի... .

Պօսակցութիւնը վերջացած էր: Ֆետայիները խմբակներու բաժնը-  
ւած, զբոյցի մէջ էին:

Գալէն ու Մանուկը, բիշ ժը հեռու, ծառերուն տակ, վանքի հովիւին  
հետ խօսակցութեան բռնուած էին: Սարհատ անոնց ծօտեցաւ:

- Այս հովիւը եկած է քեզ տեսնելու, հարցուցինք ինչի համար է,  
ըսաւ Թէ միայն Սարհատին կրնամ խօսիլ: Ահա դու ու քու հովիւը, - Ը-  
սին ու հեռացան:

- Ի՞նչ կայ, աղա՛յ:

- Պարո՛ն Գէորգ, - ու հովիւը շուրջը նայեցաւ, խօսքը լրացնելու  
համար, - Պարո՛ն Գէորգ, Հեղինի իշխան Վարդանի աղջիկը երկու օրէ Սա-  
սունէն եկած է վանքի անտեսուներ եւ կ'ուզէ քեզ տեսնել...:

- Բերանդ գոցէ... - ըսաւ Սարհատ, - խուժքը պիտի մեկնի զոր-  
ծով: Յայտնէ Սուսամին որ վանահայրին ներկայանայ եւ ձեր ծօտը մնայ:  
Վերադարձիր գործիդ եւ բերանդ խուփ պահէ:

Հոգեկան փոթորկումի ենթարկուեցաւ Սարհատ: Անակնկալ դէպ-  
քերը երարու կը յաջորդէին:

Ուրե՛մ, Սուսամը ողջ էր ու ազատուած կոտորածի հրդեհէն:

Ու հիմա Սարհատի սիրտը կը հրդեհէր...:



Անտառը հովերէն կը սարսուար:

Սարհատի լուռ ապրումներէն անտառն իսկ յուզուած էր:

Հոգեկան փոթորիկ ժը անցաւ անտառէն:

Սարհատ, ջրային ու մտածկոտ, փերադարձաւ իր մարտիկներուն  
քով, ու անխօս, թիկունքը տուաւ կաղնիի ծառին:

Ճետրայինները կատակ կ'ընէին, ոմանք գօտեմարտի ելած էին, ու-  
րիշները իրենց ղենքերը կը մաքրէին:

Սարհատ, մտածկոտ ու անշարժ՝ ծառի բունին հետ ձուլուած կը  
մնար:

Գալէն ու Մանուկը անցան-դարձան խմբակներէն, ուշադիր զննելով  
Սարհատի դէմքը: Երազ ու մտահոգութիւն կար անոր դէմքին վրայ:

- Եղնի-լեղնի, Հեղինէն լուր ժը եկաւ Սարհատին, - ըսաւ Գալէն,  
ու Մանուկի թեւը քաշելով՝ Մակարին ծօտեցան:

Պօք բացին Պուլիբի, Նիխնիքի եւ Բուսանայ զաւարի մասին:

- Յակէն ումէն բան դիտէ, - ըսաւ Մակար, - Թող պլպլայ:

Յակէն խօսելու առիթը չէր փախցնէր: Գաւառէ զաւառ, տեղն ու  
տեղօք պատկերացող կացութիւնը: Երբ ծօտեցաւ Տալուորիկին, խօսքի  
թեւը անցաւ Հեղինէն:

- Գիտէ՞ք արդէն, Վարդանը սպաննուեցաւ: Այդ շէն տունը անտէր  
է: Վարդանի տղան դեռ պատանի է, պիտի դրկեն այս վանքը կարգալու:  
Տուն դարձած է Սուսամը: Կոյր բջուկը սպաննուեցաւ Տիարայէքերի ճամ-  
բաներուն վրայ: Սուսամ, սակէ քանի ժը օր առաջ, Տալուորիկէն անցաւ,  
եկաւ վանհօր ծօտ: Ձինուոր Գրիգորը եւ Ահարոնքի Գալուստը Կէնճի  
բանան են, երկուքն ալ վիրաւոր...:

Յակէն կը շարունակէր զեկուցումը, երբ Գալէն ու Մանուկը հեռա-  
ցան այդ ծառի տակէն:

- Մանուկ, Գէորգի դէմքին վրայ Մոմասարի փոթորիկը կը խաղայ:  
Եղնի-լեղնի, Սուսամէն լուր ժը տուաւ:

- Այս օրերուն մենք բոլորս մըրիկ դարձած ենք: Խեղճ Սուսամ...
- Մրմնջեց Մանուկը:
  - Սարճատի հետ խօսինք, մեղի թիչ մը կրնայ բացուիլ, - ըսաւ քը-  
չախօս Փայլէն որ տեւապէս Սարճատի ներքին ապրումը իր ապրումը ը-  
րած էր:
- Երեկոյեան մթնշաղը սկսած էր իջնել դաշտի եւ լեռներուն վրայ: Սարճատ ոտքի ելաւ.
  - Երկար եղաւ մեր հանդիսարը, շարժինք: Դառնալով Մակարին.
  - Մակար, ա՛ն տղաքը, եւ յեռներուն ճամբան բռնէ: Անկէ անդին, զուգ գիտէք: Մենք դաշտը պիտի իջնենք: Եթէ ողջ մնացինք, երկու շա-  
բաթէն իրար կը գանենք կա՛մ Մառնիկի անտառը եւ կամ Ս. Կարապետի  
բարձունքները: Սուրհանդակները անպակաս պիտի ըլլան:
  - Նոյն պահուն երկու խումբերը ճամբայ ելան:
  - Սարճատ Մակարին ձայնեց.
  - Ձիերը Գոմիք կը թողուս:
  - Պաւարը ճամբայ կը բանար ազատութեան մարտիկներուն, ու ա-  
նոնք մուրը կը ճեղքէին, սրատես սւ զնոսկան:
  - Այդ գիշեր, Բարձրաւանդակի ժայռերը կրկին թնդացին հին Ֆե-  
տայիններու ոտքին տակ: Իսկ դաշտը հաճոյքով լսեց միեւրու իրիւրնը, ա-  
բաղընթաց արշաւախումբին:



Կէս գիշերին, աստղերը խաղաղութեամբ կը ճառագայթէին ծով  
դաշտին վրայ:

Աշտիշատի քովնորի կոմին մէջ Սարճատ ու Կորին կողք-կողքի նը-  
տած, չրթունք չրթունքի կը զրուցէին: Մանր մտածում կար Կորինի դէմ-  
քին, իսկ Սարճատի աչքերէն տխրութիւն եւ երազանք կը կաթէր:

Պահանջները դուրսը կը հսկէին աշալուրջ:

Ներսը Համախմբուած Ֆետայիները հանգիստ նստելու սովորութիւն  
չունէին: Կատակն ու պզտուքը սկսած էին: Մէկէն Աբամ խօսակցութիւնը  
դադրեցուց.

- Տղա՛ք, հո՛ն, Սարճատին եւ Կորինին նայեցէք, կարծես ջրաղացքի  
քար կախուած է անոնց վզէն: Ամէն ատեն ասոնք էին որ կատակի ազգա-  
նըշտեր կու տային, իսկ այս գիշեր, մտանոզ գէ՛մքերը վեր շին բարձրա-  
ցըներ:
- Սարճատ բոլորովին այրափոխուած է, - ըսաւ Մակունքցի Ղազա-  
րը, որ անոր հետ եղած էր տարիներէ ի վեր:
- Տղաքը լուած էին, ազգուած իրենց ղեկավարներու մտածկուս դէմ-  
քերէն:
- Աբամ իր քով կանչեց Ախօն, որ ամէնէն երիտասարդն էր Ֆետայի-  
ներու շարքին մէջ, ու ականջին փսիսաց:
- Ախօն ոտքի ելաւ ու խօսքը ուղղեց Սարճատին.
- Պարո՛ն Սարճատ, այս գիշեր պարա՞պ պիտի նստինք:
- Սարճատ գորովանքի ժպիտ մը դէմքին.
- Ախօ՛, ամէն գիշեր Եռուսուֆ ազաներ անգիտ աշխարհ դրկելու փա-

փափք ունին: Տեղդ նստէ՛, ատեն մը փամփուշտ պիտի խնայենք: Ու աւելցուց.

– Կորիւն, ատենց հետն եղիւր, թէ ոչ անառակութեան մը կ'ելլեն, ու գլուխներս կը ցաւի:

Կորիւն աւելի ուշադրութեամբ զննեց Սարհատի տխուր դէմքը: Կորիւն այդ դէմքին վրայ Սարեբու Աւլանի շէնչող պատկերը չգտաւ:

– Լա՛ւ, Սարհատ, նուսուֆ ազան եւ Քերիմ պէկը անգրի աշխարհը գրկեցիք, ինչո՞ւ տխուր ես, չըլլայ տղաներուն բան եղած է, ո՞ւր են Սասնոյ մարտիկները:

– Բան չկայ, Կորիւն, Սասնոյ հին մարտիկները Անտոքի կողմ զըրկեցինք, ժողովուրդը անոնց գէմքին կարօտցած է:

Կորիւն հոգեբան ու ճկուն պրպտումը մէկ կողմ թողուց, ու Յեռայնիներուն մէջ մտաւ: Կատակն ու գօտեմարտը իրար անցուց գոմը: Սարհատ ժպիտով կը հետեւէր այս արջային բախումներուն, ու կը շղուշացնէր շատերը, որպէսզի Կորիւնի վարպետութեան ու ճարպիկութեան գոհ չերթան:

Սակայն, կատակն ու խոսքը շօղնեցին ու տխրութիւնն ու երազանքը քաշուին Սարհատի դէմքէն:

Առտուան կողմ հոն փոխադրուած պաշարէն իրենց ճաշը ըրին: Պահանքերը փոխուեցան: Բոլորն ալ հանդիստ պիտի ընէին: Կորիւն արթուն պիտի մնար: Այդ շրջանի ղեկավարն եւ թափանցող աչքը ինքն էր:

Մանկական խաղերէն յոգնած, առիւծները խոր քունի մէջ էին:

Կորիւն քանի մը բանիմացները հարցուփորձի ենթարկեց: Բայց բան մը չկրցաւ ըմբռնել Սարհատի մտմտուքներէն:

Աշտիշատի այդ անկիւնը, Սուրբ Սահակի աճիւններուն մօտիկ, հայոց դարաւոր ազատութեան ուխտեայնները երկու օր անցուցին: Նոր ձեռնարկներու եւ կազմակերպական ցանցի մասին խօսեցան, եւ աշխատանքները դասաւորեցին:

Կորիւն քանի մը մարտիկներով պիտի անցնէր Պինկէօլի շրջանը վերակազմելու եւ բարեկամութիւն հաստատելու քիւրտ ցեղապետներուն հետ:

Սարհատ իր ձիաւոր խումբը պիտի պահէր Ս. Կարապետի շրջանը:



Մայիսեան պայծառ գիշեր էր:

Սարհատի ձիաւորները դաշտ ելան, Ս. Կարապետի մթաստուեր անտառին ապաւինելու:

Բաժանումը սրտառուչ եղաւ: Կորիւն եւ Սարհատ գրկախառն մնացին պահ մը, անխօս:

Ճեւտայի ճակատադիրը...

Ո՞վ գիտէ, իրար պիտի տեսնէ՞ն կրկին...

Կ. Ս.

(Շար.)



Է Պ Ի Ք Ա Կ Ա Ն

ՇԱՐԱՄԱՂ ԱՂՋԻԿԸ ՈՒ ՏՂԱՆ

Երբ երգչին երկու  
Աչքեր են զիւթում,  
Նա տնջան չճնաղ  
Երգեր է կերտում:

2. ՀԱՅՆԷ

1.

Կար լուսաշող մի աղջիկ,  
Խնկամարմին ու ճնճուշ:  
Կապուտաշեռք մի դստրիկ -  
Վայրի շուշամ՝ հեգանուշ:  
Հասակը՝ սեգ, շինարի,  
Հայնացո՞ց՝ աճուշ, քափանցիկ.  
Խնկամարմին ու քարի -  
Կար լուսաշող մի աղջիկ:  
  
Հեռու երկնից էն գարուն,  
Եկաւ ճամբորդ մի տղայ,  
Տնաւ... սիրեց աղջկան -  
Հեռուից եկած մի տղայ:  
Հիւր էր աղջիկն էն երկրում,  
Հիւր էր տան իր հերթին.  
Երկու ճամբորդ - վառ գարուն,  
Իրար տեսան... սիրեցին:

2.

Գմաց աղջիկը շարմազ,  
Գմաց աղան՝ հմայուած.  
Ու սրտերում էն մտառ  
Սէրը ծաղկեց, ծովացած:  
Հեռուից - հեռու սիրեցին.  
Սէր խոստացան ու համբոյր-  
Հեռու հեռուից կառչեցին  
Յոյսի սիւնին ծաղկաշոյր:  
  
Տգան երգեց՝ սէր ու յոյզ -  
Աղջիկն հեռուից յայտ տուեց.  
Տգան դարձաւ բանաստեղծ -

Աղջիկն հեռուից Ուրշնեց:  
Տգան երգեց՝ սէր ու յոյզ,  
Գրեց երգեր քայծամուշ-  
Կապուտ աչքերին գերի -  
Երգեց կարօտն իր ետրի:

Աղջիկն հեռուից յայտ տուեց,  
Տգին հեւտ ու բնու տուեց.  
Սէրն էն սիրուն աչքերի  
Դարձաւ՝ քրքիռ ճնարի:  
Բայց էն յոյսն էլ ցամաքեց՝  
Տրտմեց լարը ճնարի.  
... Աղջիկն ուրեշնն գնաց -  
Խոցեց սիրուը խեղճ տղի:

Տրտմեց տղան ու լացեց...  
Այբուզ վիշտն իր սրտի,  
Դուռընչ ճնարին տուեց -  
Երգերն արան քայծալի:  
Երգեց կարօտն իր ետրի,  
Ու կարուստը ճաւ երգեց -  
Կապուտ աչքերին գերի՝  
Մտով մրմուռը նա երգեց:

3.

Անցան օրեր, տարիներ,  
Տգան դարձաւ լուսկեաց.  
Սիրտ չտուեց ո՛չ սէրի -  
Աճուէր, ամոյս դեպքերեց:  
Լոկ երազում համբուրեց  
Իր հարսնացած սիրածին.  
Լոկ երազում ճաւ գրկեց՝  
Կապուտ միրած մարալին:

Տարիներ ու գարուններ,  
 Հեռավ անցան, զո՛ւր անցան.  
 Ծաղիկներ ու բողբոջներ՝  
 Անգո՛ր, գալուկ մերկացան:  
 Ան ազգկայ բույր սրտում,  
 Թափուն մուսց մի կոկիծ.  
 Քունն էլ փախաւ սիրումի  
 Խոր ու խաշոր այֆերից:

4-

Մի օր, մի տեղ, մի գրքում՝  
 Տեսաւ պատկերն իր տղի.  
 Կարտակէզ ու գեղուն  
 Երգեր՝ գրուած իր մասին...  
 Վառ խոհերով վերացած,  
 Էն լուսալինջ երգերում,  
 Կարծես գտաւ մի կորած  
 Երբանկուրիւն անամուն:

Կարոց կրկին ու կրկին -  
 Լեցուեց սիրտը սիրումի.  
 Յիշեց իր տրն առաջին -  
 Անօգ բռնած իր ետքին...  
 Կարոց նորից ու նորից -  
 Բեկուած սիրտը մտմտաբան.  
 Քունն էլ փախաւ անպամած,  
 Խոր ու խաշոր այֆերից:

Այ՛քը լացով ու բացով,  
 Նա լուր դրկեց իր տղին,  
 «... Արի՛, իմ տէր, իմ խոռով.  
 Ա՛խ, յետ արի իմ անգին.  
 Քո մուշտուած մարալի  
 Սէր ու սրտիմ տէր կանգնի:  
 Ա՛խ, յետ արի իմ արդար,  
 Քո սիրածին օքի տար...»:

Ոնց գալկացող ծաղիկին  
 Տօղն է բերում բարմութիւն՝  
 Տղան գցաց վերստին  
 Բախտի ժպիտ երանուն:  
 Նարէն յոյսեր շողարձակ,  
 Անխաւ կարու բոցավառ.  
 Նարէն հրայրջ ու կրակ -  
 Ձեզուն երգեր՝ սիրատառ:

5-

Դարձեալ՝ շրագ ու շնար.  
 Եփովանքի շերտ խօտեր...  
 Դարձեալ խոհեր աստղավառ -  
 Վերադարձի մտ յոյսեր:  
 Ան մնացին խոնք սիրով՝  
 Եարմազ ազդիկն ու տղան.  
 Երագեցին կարօտով -  
 Կապոյտ ազդիկն ու տղան:

Բայց աշխարհում անհամար  
 Օրէնքներ կան բացած.  
 Անլոյս, անոյս ու մթար,  
 Սահմաններ կան ֆարացած:  
 Հազար խափան ու կապան -  
 Միրսզ սրտեր բաժանաչ.  
 Հազար կոշմար հազեհան՝  
 Սիրոզ սրտեր անգատոզ:

Տարիներ ու գարուններ,  
 Անկաւ անցան, զո՛ւր անցան.  
 Ծաղիկներ ու բողբոջներ՝  
 Անգօր, գալուկ մերկացան:  
 Անցաւ ազդիկն հեզանոյշ,  
 Անցաւ տղան լուսազէւ.  
 Ան յանքծաչ, արպէտ յո՛ւշ  
 Էս կպիկն էլ հասաւ մեզ:

6-

Որքա՛ն արտեր՛հալ ու ժաշ,  
 Մտմ են գառնի ու վառուէլ.  
 Որքա՛ն աշէր ցօղաշաղ,  
 Եարի մամբայ են մայել:

Լոկ երգիչն է հասկացել՝  
 Թափուն ցուց արտերի.  
 Լոկ երգով է օրորուել  
 Միացուզ վիշտը ճարի:

ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԻԱՆ

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԵՆ

Լ Ե Ր Ա Ն Շ Ո Ւ Ք Ը

( Կ Է Պ )

4.

Տիգրիսի հրապարակին կեզրոնը, դէր ու զարդարուն պլորուհիի մը փարթամութեամբ՝ նստած էր մեծահասոցց ճառասրի շէնքը:

Լոյսերու եւ հանոյքի առանձին աշխարհ մը:

Հոն կուպային հեռաւոր տարածութիւններէ մեծ հողատէրեր, շէյխեր, որոնք իրենց քառիւղքներն ու պիւլիքները կը կեցնէին մուտքի դրան սուլեւ եւ շքախումով կը մտնէին ներս: Երբ կէս պիշերէն հաջ մայրաքաղաքի փողոցները ամայի էին եւ կարծէք կեանքը կանգ առած էր ամէն կողմ, միայն Տիգրիսի հրապարակին վրայ նստած ճաւահարի սրահն էր, որ կը շարժէր կենդանութեամբ... կ'ապրէր՝ յանձնուած խմբիչի եւ հանոյքի կոհակներուն խնթութեան:

Այդ դիշեր քացառիկ էր լուսաւորութիւնը:

Մուտքի դրան մեծ ափէջը կարմիր եւ լուսաշող գրեթով կը յայտնէր, թէ սիրուած երգչուհի Եսամինը պիտի բանայ ճառասրիի ձմեռնային սկզբը:

Ամիսներու քացակայութենէն հոգ, Եսամին վերադարձած էր՝ մշակուած պրուեստով եւ երգերու եւ մոնոլոկներու նոր պաշարով մը: Գացած էր ան Դամասկոս, անկէ Պէյրութ, Իտալիա, ապա Եգիպտոս: Գահիէրի մէջ երգած էր ռատիոկայանէն... Եսամին անունին հմայքը տարածած էր բովանդակ արարական աշխարհին մէջ... առաջարկ եղած էր անոր եգիպտական շարժապատկերի ընկերութեան մը կողմէն պայմանադրուելու, բայց ան մերժած էր եւ

վերադարձած Պաղատո՝ նոր երգերով եւ նոր տրամադրութիւններով:

Հապարի հասնող բազմութիւն մը լուռ երկիւղածութեամբ նստած ընդարձակ սրահին մէջ, օթեակներուն մէջ կ'ունկնդրէր զայն: Անցնող տարիներուն ընթացքին, Եսամին կրցած էր իր կամքը պարտադրել բոլորին, նոյնիսկ զիշերային պրոսափայտութեան Եսամինը: Անկողնները հանգիստ էր բաւական դժուարութեանց, երգի պահուն յանկարծ դինովի մը քացապանչութիւնը կամ երկրորդի մը հիացիկ մրմունջները, որոնք սովորական երեւոյթներ են արարական թատրոններուն մէջ, պատճառ դարձած էին, որ ան անմիջապէս վար իջնէր բեմէն եւ հեռանար սրահէն: Իր այս վճռական ընթացքը աստիճանաբար վարժեցուցած էր ճառասրիի հին ու նոր յաճախորդներուն՝ լուսթեամբ ըմբոյշանելու իր երգը:

Այդ դիշեր Եսամին տարփուլի ըլլալէ աւելի՝ հրապուրիչ էր: Ամիսներու իր քացակայութիւնը կորուստ մըն էր դրոստաւորներուն համար: Ան՝ հիմնովին փոխած էր իր զգեստաւորումը. մտերու ոչ մէկ ցուցադրութիւն, իր երկար զգանցքները, վերջին նորածնութեան համամայն մահիկային կորուստ օձիքը եւ սպիտակ թարմ մեխակներու փունջ մը կուրծքին... ոչ մէկ աւելորդ յար եւ օսկիզէն զարդ՝ կու տային անոր վերացական բան մը, կարծէք ան ինք դարձած էր կենդանի եւ յարաշարժ երդ մը բեմին վրայ, լոյսերու տակ:

Սրահին տէրը կեցած էր անկիւն մը ձեռքերը ծալած իր ձմերուկաձեւ փորին, գոհունակութեամբ կը դիտէր Եսամինը: Յաջող անցած էր ձմեռնային սե-

զոնի բացումը: Ան լեզուն ծայրամասով կը թրջէր իր հաստ շրթունքները եւ կը մտածէր այն մեծ շահուն մասին, որ պիտի ունենար այդ ձմեռ:

Հիմա բեմին վրայ կը դառնար պարունի մը՝ վազբային կասաղութեամբ, ստիւնքները օդին եւ պորտը՝ ամբոխին: Բազմութիւնը կը բացազանչէր յայրաս ազդակներով: Պարունին աւելի հըրդեւուած այդ բացազանչութիւններէն, դարձած էր համակ կշռոյթ. մաս առ մաս խօսեցնելով իր երիտասարդ ու թուի մարմնին զանազան մասերը:

Յասմին վերարկուն ուներուն կը քալէր սրանին երկայնքն ի վար... շատեր ժպտուն ճամբայ կու տային անոր, ոմանք, աւելի մտերիմները, կը սեղմէին ձեռքը, շնորհաւորելով անոր նոր կրկերը, ուրիշներ ուրախութիւն կը յայտնէին անոր վերադարձին համար... շատախօս թղթակից մը հարցումներով կը փորձէր մանրամասնութիւններ գրի առնել շարժապատկերի ընկերութեան առաջարկին վերաբերմամբ:

— Վերջը, վերջը կը խօսինք, — կ'ըսէր Յասմին ու կ'անցնէր: Ան զանազադ քայլերով մտնեցաւ անկիւնի սեղանին: Համեատ սեղան մը, քանի մը շիշ տեղական դարբնուր եւ օդի մեծ շիշ մը միայն: Սեղանին շուրջ նստած էին քանի մը երիտասարդներ, առաջին ակնորկով իսկ նշմարելի էր թիկնկ, սեւի մօտեցող թխութեամբ, առատ մաղբրով մէկը, որ կարծէք լոնկեայն կը տիրապետէր սեղանին եւ անկէ ամբողջ սրահին:

Տիապն էր, որ զանազօրէն ոտքի կ'ուռ եւ պարապ աթոռ մը քաշելով հրաւիրեց Յասմինը, որ նստի:

Շուրջի սեղանները պահ մը մոռցան բեմի պարունին եւ ակնարկները դատւեցան Տիապի սեղանին:

Կողքի սեղանէն երիտասարդ մը ցուցական ձեւով, լուսի դարձնելու համար Յասմինին, շիշ մը շամփէյն ապսպրեց բարձրաձայն: Տիապ զեռ ոտքի էր: Յասմինի տեղաւորուելէն ետք, ան ակնարկ մը նետեց շորս դին: Շատեր իրենց նայուածքները քաշեցին անոր, սեղանէն:

Տիապի ակնարկը յստաօրէն կ'ըսէր — «ամէն մարդ իր գործին»:

Տիապ իր հուժկու մարմինը տեղաւորելէ ետք, պարապ բաժակ մը դարբնուրով լեցուց եւ երկարեց Յասմինին:

Յասմինի ակնարկը բանաձեւեց մեղադրանք մը. — «Գարեջուրով պիտի պատուեն ժամանումս»:

Տիապ մնաց անդրդուելի: Ամեն ժպիտ մը գծուեցաւ անոր շրթունքներուն: Հին ծանօթներ էին, թէ եւ Մարտիկի երեւումէն ետք, Տիապ աստիճանաբար քաշուած էր հրապարակէն, յետոյ ամուսնացած էր եւ հիմա արդէն նայր էր երկու զաւակներու, վերջին տարիներուն հազուադէպօրէն, երբեմն միայն կու դար թատրոն, պարզապէս մասամբ պուստաւորելու՝ միօրինակ առօրեան:

Եկած էր այդ օր խումբ մը ընկերներով: Կ'ուզէր լսել Յասմինի նոր երգերը՝ Եպիպոստէն հետք բերած:

Ամեն ձեռքով ինչ մը կար Տիապի նայուածքին մէջ: Յասմինին ծանօթ էր այդ մեղմութիւնը, որ կու դար անոր հոգիին բարութիւնէն... զոհ էր Տիապ, որ Յասմին իր առաջին երեւումէն ետք անտեսած էր ծաղկեփունջերը զրկող սեղանները: Անտեսած էր շամփայնով կամ ուիսքիով բեռնաւոր փարթեմ սեղանները եւ եկած Տիապի համեստ ու անշուք սեղանին:

Յասմին զիտէր նաեւ, որ այդ անմեղ, այդ բարի նայուածքին տակ կար նաեւ դառաղեղին մէջ զսպուած զազանք: Ան սկանաւտեա կ'ըսէր զիշեք մը Տիապի այդ պոռթկումին, երբ ան խանդարեց թատրոնի յայտադերը, ձեռքին աթոռակ մը, քանի մը հոգի գետին տապալելէ ետք հանդարտ ու համոյթակ քայլերով հեռացած էր սրահէն:

Հակառակ, որ ամէն կապ խղուած էր մօտ երեք տարիէ ի վեր, սակայն Յասմին կը սիրէր ըլլալ Տիապի ներկայութեան: Անոր մէջ ան տեսած էր ոմուր, վստահելի եւ պարզ մարդը, մանաւանդ, որ Տիապ Մարտիկի ամենամօտ ընկերներէն էր. անոնց մտերմութիւնը,

Հայու մը եւ արարի մը միջեւ, կու վար զպրոցէն, կու դար կեանքէն, կու վար իրար Հանդէպ ունեցած իրենց անվերապահութենէն:

- Ո՛վ ամենազօր երգի եւ սրտերու կախարդիչ, որ շնորհք ըրիր ճանաչել մը լոյսէն ձգելու մեր այս մութ եւ անշուք սեղանին... կ'ողջունեմ վերադարձը... ոչ միայն ես, խոնարհ ծառադ, այլ նաեւ նոյնքան խոնարհ բարեկամներուս կողմէ՛ կ'ողջունեմ բարի վերադարձը:

- Տիապ, մի սկսիր նորէն հեղանաքի... ճոռոմ, ուսուցիկ խօսքերու:

- Մեր լեզուն է, որ ճոռոմ կը դարձնէ մեր մարդկային սրտաբուխ արտայայտութիւնները: Պարզ նախադասութիւն մը դրէ որեւէ օտար լեզուով եւ փորձէ թարգմանել արարելէնի, պիտի տեսնես թէ որքա՞ն մեծ պիտի ըլլայ տարբերութիւնը... այնպէս չէ՞ բարեկամներ:

- Փոփանակ խօսելու համարէ՛ զիս: Վերջի վերջու, վերադարձէս ի վեր նոր է որ կը տեսնուինք:

- Ենորհքներու շնորհք, - ու Տիապ ծոկով համարեց Յասմինի ճակատէն... հիմա, որ դարեջուրը խմեցիր, ըսէ՛, ի՞նչ կ'ուզես խմել:

- Վերմուտ մը միայն: Տիապ կանչեց սպասեակը, ապաւորեց:

- Մանօթ ես բնջրին:

- Գրեթէ այո եւ ոչ:

Տիապ մէկ առ մէկ ծանօթացուց սեղանակիցները...  
- Այս ալ մեր Զաւէնն է, այս ալ Անթունը, արձակուրդով եկած են Տոբանէն: Տես արջու կերպարանք առած են:

- Տոբանէ՞ն: Այո՛, այո՛, ինչպէ՞ս է Մարտիկը: Ինչո՞ւ կը յամառի եւ ինքն ալ չ'իջնէր արձակուրդով մայրաքաղաք: Ձեռ գիտեր բացահայտութեան արդեօք իջած է:

- Ո՛չ, - խօսք առաւ Անթուն, - այո երկրորդ տարին է որ չէ իջած:

- Ինչպէ՞ս է առողջութիւնը, տրամադրութիւնը:

- Արջու պէս, - ըսաւ Զաւէն, - քիչ մը մարմինը ծանրացիր է, ըստ մասնադէտներուն տասը քիլօ մը աւելցած ըլլալու է:

Եսամին պարպած էր վերմուտի բաժակը: Տիապ երկրորդ մը ապսպրեց:

Սոսկացութիւնը գաղբեցաւ:

Բեմին վրայ պարսկուհի մը կ'երգէր արարախառն պարսկերէն առջու մը: Բազմութիւնը կ'անուամ եղանակին միամտացած, լալկան ելուէջներուն մէջ՝ կ'ունկնդրէր լուսթեամբ:

Անթուն եւ Զաւէն դադարած էին խօսելէ: Կը նայէին Տիապին, որ անհարկը յոտած առաստաղին՝ կը ծխէր լուսթեամբ: Միւս երկու արար սեղանակիցները անտարբեր կը լսէին պարսիկ երգչուհիին:

Եսամին եւս լուռ էր:

Անորոշ եւ անշօշափելի ճնշում մը, ինչպէս ծշուը, իջած էր Տիապի սեղանին վրայ:

Տիապ ապսպրեց երրորդ վերմուտը եւ լեցուց սեղանակիցներուն բաժակները օդով: Զաւէն կը Հայոյէր ինքզինքին... արդեօք իր այդ քանի մը խօսքերով վերաւորած էր Եսամինի զպացումները... վայ քած վայ, ինչքան ալ փափկազգած է... երբ ինք խօսած էր Մարտիկի արջային վիճակին մասին, արդեօք ի՞նչ խորհած էր Եսամին... ի՞նչ յիմար է ինք... Հոն լեռը ոչ ոք կը նամարձակէր խօսիլ Մարտիկին հետ՝ Եսամինի մասին: Մարտիկ այս հարցին վերաբերմամբ քարային վիճակ մը տաած էր... վայ յիմար վայ, անհրաժեշտ էր խօսիլ տասը քիլոյի մասին, որ դարձեալ Մարտիկի գոհունակութիւնը կ'ապացուցանէր: Վայ յիմար վայ... կը մեղադրէր ինքզինքը Զաւէն եւ խէթ կը նայէր Անթունին... այդ խենթ նայուածքը կ'ըսէր՝

- Դուն ալ յիմար մըն ես ինծի պէս...

Տիապ կը պահէր իր դիրքը... լուռ, Հանգարտ եւ իշխանական:

Դուրսը մեղմ անձրեւը միայսր կ'իջնէր մայրաքաղաքին վրայ: Դուրսը պըղ-

տիկ հով մը կ'անցնէր, ասարածելով հե-  
ռաւոր գալուստուն երգը՝ ծուռ փողոց-  
ներուն եւ լայն պողոտաներուն վրայ,  
Դուրսը մէկ առ մէկ կը մարէին տնակ-  
ներու եւ ապարանքներու լոյսերը եւ  
քաղաքապետարանի երկու գիշերապահ-  
ները, տան մը քիւին տակ հանդարտօրէն  
կը ծխէին իրենց բթամատի մը հաստու-  
թիւմը փաթթուած սիկարէթները:

Եսամին շապանց Տիապին եւ ինք  
ապպրկնց վերմուտի շորրօրդ բաժակը:

- Եսամին, եթէ կ'ուզես լալ...  
լա՛ց: Մի քաշուիր: Ասոնք օտարներ չեն,  
բարեկամ աղաք են:

Տիապ այնքան բնական եւ հանդարտ  
ձեւով մը ըսած էր այս խօսքը, ինչպէս  
պիտի ըսէր. - «Բաժակ մը շուր կ'ու-  
զե՞ս»: Զաւէն շուարած նայեցաւ Տիա-  
պին: Ան անայլալ էր, զէմքը բնական  
եւ տիրապետող:

Տիապ գեռ իր վերջին բառը շէր ա-  
ւարտած, նոյնքան բնականութեամբ  
Եսամին ձեռքի պայտուակէն հանեց  
թաղիկնակը եւ տարաւ աչքերուն...  
մեղծ եւ անձայն հեկեկանք մը, տեւեց  
քանի մը վայրկեան միայն, որմէ ետք  
Տիապ զարձաւ Եսամինին եւ նոյն հան-  
գարտութեամբ լարունակեց.

- Հիմա հանդարտեցար: Տղաք խը-  
մենք այս բաժակը, քայց ցմրուր, մի-  
այն ու միայն Եսամինի կենացը:

Եսամին եւս, թեթեւ ժպիտով մը եւ  
զեռ խոնաւ աչքերով, պարպեց վեր-  
մուտի իր շորրօրդ բաժակը:

- Լաւ է լաւ: Լաւ մտածէ եւ ամէն  
ինչ լաւով կը վերջանայ, Եսամին դուն  
ոսկի սիրա ունեցող աղջիկ մըն ես, այս  
խօսքերս միշտ յիշէ:

Եսամին զոհուածութեամբ սեղմեց  
Տիապի ձեռքը եւ բարի ու խնդրարկու  
նայուածքով մը նայեցաւ անոր խոշոր եւ  
թուխ զէմքին:

Զաւէնի շուարումը հտուա իր դա-  
ղաթնակէտին: Ի՞նչ կախարդական ուժ  
էր այս... այս Տիապը... այս որքան  
ինքնախտահութիւն իր ձայնին, իր  
շարժուձեւերուն մէջ: Ինչպէս կըցած էր  
չնդակը արձակել ճիւղ պահուսն եւ սե-

պանին ճնշիչ մթնոլորտը, ինչպէս ակնու-  
թարթի մը վերածած էր վերստին մտր-  
ձական եւ բնականոն իր մթնոլորտին...  
այս Տիապը, այս Տիապը, որքան լաւ  
կ'ըմբռնէր կինը... այս խորհրդածու-  
թիւններու մշուշին մէջ կորուած էր  
Զաւէն, երբ յանկարծ հնչեց Եսամինի  
սերսի եւ անսեթեւեթ ձայնը:

- Տիապ, վաղը կէսօրին այս խումբը  
կ'առնես եւ կու դաս մեզի ճաշի: Կը  
սպասեմ բոլորիդ, մանաւանդ Անթուն  
ու Զաւէնը, շմունաս:

- Ո՞վ կրնայ մերժել հրաւերդ, եթէ  
մերժելու ըլլանք մեր մայրերուն ար-  
դանդները կը բողոքեն, որ մեզ նման  
խժերու ծնունդ տուած են:

- Նորէն մի սկսիր, կը սպասեմ:

- Զէ, հոգ մի ընէր, վաղը կէսօրին  
այս շորսն ալ շղթայակապ կը բերեմ  
սեղանիդ, որպէս ողջակէզ: Իսկ հիմա  
արդէն կէս գիշեր է, դուն բարի աղջկան  
մը պէս, գիշեր բարի ըսէ եւ հեռացիր:  
Ես այս թշուառներուն հետ ջիշ մը եւս  
կը նստիմ...

- Լաւ, լաւ, կ'երթամ, - ըսաւ Եսա-  
մին, - կ'երթամ, մոռցայ հարցնել ինչ-  
պէս է կինդ, զաւակներդ:

- Լաւ են, ձեռքերդ կը համբարեն:  
- Անշնորհք...

Ճ

Կէս գիշերը անց էր: Տիապի խումբը  
ցրուած էր արդէն, միայն Զաւէնն ու  
Անթունը փոխանակ տուն երթալու իջած  
էին ձառահարի գետնայարկը... Կէս  
գիշերէն ետք կարգ մը յաճախողներ կը  
փոխադրուէին հոն, շարունակելու խը-  
րախճանքը մինչեւ արշալոյս:

Սևամորթ դաշնակահար մը կը նը-  
սպէր դանդաղ եղանակ մը, ընկերակ-  
ցութեամբ լայնատաշ սաքսոֆոնին:

Գորգապատ գետնայարկը կիսամութ  
էր: Տեղ-տեղ կարմիր ու կապոյտ լոյ-  
սերու խողեր, անկիւնէ անկիւն կ'եր-  
կարէին կամ կը կարճնային: Սրահին  
կահաւորումը, արեւելքի եւ արեմուտքի

խառնուրդ մըն էր: Կէս գիշերէն ետք մայրաքաղաքը այս գետնայարկին մէջ իր պորտը կը շարժէր, յանձնած ինք-գինքը Հեշտանքի, հաշիշի ջերմ եւ փոր-ձիչ համբոյրներուն:

Երկրորդական, երրորդական արժէք ներկայացնող կամ բոլորովին նորեկ, դեռ համբաւի չկանչուած պարուհիներ կամ երգչուհիներ կէս գիշերէն ետք կ'ընթանին ճառուհարիի գետնայարկը եւ չոն ընթացք կու տային հրաւերներուն՝ իմելով միմիայն շամփէյն...:

- Երկար ատենէ ի վեր կ'ուզէի դալ չոս, բայց գիտես... - ըսաւ Անթոն, անկիւնէն սեղան մը դրաւելով:

- Գիտեմ, գիտեմ հիմա վիճակդ լաւ է: Ետտ, շատ ամսականիդ կէտը կամ բոլորը պիտի մորթես, մեծ բան մը չէ, յետոյ մի մտնար, զիցի պէս ազնուա-կաններ երբեմն-երբեմն պէտք է յանա-խեն նման տեղեր:

- Չաւէն, կը նկատես ներկաներուն մէջ ամենաերիտասարդը մենք ենք... ընդհանրապէս յիսուսէն վեր մարդիկ են:

- Պատճառը միշտ նոյնն է, զրամը տղտա, զրամը... ո՞ր երիտասարդը կը համարձակի չոս իջնել, հարուստի քա-նի մը լակտաներէն զատ:

- Դրամ, զրամ... նիւթը: Մէկ բան ճիշդ էր այդ թշուառական հրեայ Մարքո կոչեցեալին տեսակէտներուն մէջ, թէ ամէն ինչի առանցքը նիւթն է... այ-սինքն մերօրեայ ըմբռնումով՝ զրամը:

- Անշուշտ, անշուշտ, նախկին պարոն կալուածատէր, մանաւանդ, երբ կէս գի-շերը անց է... շատախոտութեան ատենը չէ: Կանչէ մէկը, թո՛ղ դայ:

- Չսպասե՛նք Յակոբին:

- Ո՛չ, սպասելը իմաստ չունի: Ան կրնայ եւ չգալ:

Դաշնակազարը թանկոյի երկարածիւ կողմակ մը կը տարածէր գետնայարկի սրահին պատերէն ներս: Քանի մը զոյ-պեր մտերմիկ դրկախառնութեամբ կը զատնային: Փայլուն ճաղատ մը՝ կար-ճահասակ, կը փորձէր իր զիթը մխրճել, իր թուերուն մէջ զրկած երիտասարդ

աղջկան բաց կուրծքին ուղղահայեաց ա-կօսին մէջ:

- Չաւէն, հոգիդ սիրեմ, նայէ աջ կողմդ, երկրորդ պարտդին, տես ինչ մարմին, կարծես տաք հաց ըլլայ:

- Նորէն մի սկսիր զեղազիտութեան: Անթի մարդուն համար նոյնն է հացին պաղ կամ տաք, չոր կամ թորմ ըլլա-լը... Եթէ նոյնիսկ շոր է, կարելի է զա-ւաթ մը շուրի մէջ կակոցեակ եւ ծածե-լով կշտանալ: Կարենորք հացն է եւ մեռ-անթութիւնը:

- Կ'ուզենք, կ'ուզենք, աղաղակեցին պարողները ու վերէն եկած հրահանգի մը ընթացք տալով կանգ առին, կազմե-լով բոլորածեւ շրջանակ մը:

Կանգ տաւ էր եւ նուազը:

Դաշնակազարը զարձուց աթոռակը եւ ծափահարելով միացաւ խումբին:

Պարող զոյգերէն աղջիկ մը բաժ-նուեցաւ ու կեցաւ կազմաւած շրջանակին մէջուր:

Դաշնակազարը անկիւնէն ձեռքը վեր բարձրացուց... այդ ձեռքը բռել կ'ու-ղէր՝ խոսէ:

- Ռախ էլ հառաւմ... շատ մեղմ ու դանդաղ... հանդարտ, հանդարտ... յետոյ արագ, շատ արագ:

Նախ թաւջութակը քառաչեց, ծրնծ-դան սուր եւ ակոնջ խարտոցող ձայ-նէր արձակեց, քանոնը տուաւ ռախ էլ հառաւմի շափին ութմիկ հարուած-ները, որմէ ետք միայն առհեցան սեւա-մորթին մատները զաշնակի տեղներուն վրայ... սաքսիֆոնը երկարաշունչ ճի-լով մը միացաւ եղանակի բացումին, ապա լռեց... պահ մը, պահէր ետք ար-ձակելով ընդհատ-ընդհատ հառաչներ, կարծէք առաջ մղելու համար զաշնակա-հարին մատներուն ընթացքը՝ ստեղծու-յարին վրայ:

Աղջիկը կը պարէր...

Արեւելքն էր իր անծայրածիր խան-զափառութեամբ:

Ռախ էլ հառաւմ, - անպատներու խորութեան մէջ կորսուած ովախ մը: Արմաւենիներու ընդմէջէն՝ ամբար գի-չերներու լիալուսինով օծուն մեղմ հո-

վին անցըր... կը դառնար աղջիկը ինքն իր վրայ, ինքն իր մէջ... Ռաքս էլ հաւանմ... Արեւելքի խնկարոյր նազանքը, ներամփոփ պայարուամները, որոնք տակաւ առ տակաւ արծարծուելով կը վտանեն կրակը կրքին, տարփանքին, սնտանձ խոյանքներուն:

Զաւէնն ու Անթունը միացած էին շրջանակին: Զաւէնը սրկած էր իր ջրով կեցած թուփ աղջկան մէջըր հւ իր փայտային ձայնով կցկատուր բառեր կը շարժուր անոր ականջին: Աղջիկը կը խոյտար, կը շարժէր իր յորդառատ մտպիւրը, որոնք ինքն էին ուտերն ի վար: Կատարէ յոյս մը կը վառէր աղջկան աչքերուն մէջ: Զաւէնն աւելի կը սեղմէր օղակը: Աղջիկը կրաւորական ըմբոստութիւն մը կը ցուցադրէր, սակայն իր աչքերը կ'ըսէին՝ «Աւելի, աւելի սեղմէ, հիթէ կ'ուզես քուկը հմ... հիթէ կ'ուզես... այս դիշեր ազատ հմ...» Զաւէնն մոռցած էր ինքնիցըր, մոռցած էր շրջանակը, մոռցած էր Ռաքս էլ հաւանմի ալիքներուն յանձնուած պարուհին:

Սաքսիֆոնին սուր եւ երկարաշունչ ճիւղ արթնցուց Զաւէնը... ան նկատեց որ իր ձայններով կը դառնէր թուփ աղջկան ձայն ահանջին բլթակը... աղջկան աչքերը այդ պահուն վերածուած էին հեշտանքի մութ արահներու... սաքսիֆոնին երկարաշունչ կանչը անցաւ Զաւէնի արեան ընդմէջէն՝ երկարածիկ արձագանգներով... դաշնակահարը որոտանման թափով մը երկու ձեռքերը վեր բարձրացնելով իջեցուց զանոնք ստեղծաշարին վրայ... Ռաքս էլ հաւանմի մեղմ ու հանդարտ ընթացքը անկթարթի մը մէջ վերածուեցաւ մրրիկներու արշաւը գուժող որոտի... ներկաները ելեքորականացած վերածուած էին միջամտողութեան, առանց կոտորակի, առանց բաժանումներու... Ռաքս էլ հաւանմը դարձաւ փոթորկայոյզ ծով մը - պարին ներամփոփ նազանքը շրջապաղերմուած էր: Հիմա պարուհին համակ շարժում էր, արադութիւն: Անոր կիսամերկ բուժերը, պորաը, ստինքները սիթմիկ յարաշարժութեամբ դարձած էին

ոսպմուկոյ, դարձած էին հրդեհուող անտառ, դարձած էին անձայրածիւր տարածութիւններու վրայ՝ վայրի միերու արշաւող երամակ:

Ռաքս էլ հաւանմ... ու յանկարծ կանգ առաւ նուազը... կարծէք լեռ մըն էր, որ կը կզէր ինքն իր վրայ: Պարուհին այդ արագութեան եւ այդ թափին մէջ ակնթարթային շարժումով մը ինկած էր իր ծունկերուն վրայ՝ ցայ թեւերով եւ ցցուն ստինքներով:

Նուազը կանգ առած էր... զպարած էր եւ պարը, իր գլխու պտոյտ արագութեան մէջ իսկ:

Զաւէն իր ձայն թելով օղակած թուփ աղջկան մէջըր տարաւ իր սեղմունին:

Ներկաները հաւաքուած էին պարուհին շուրջ, որուն քունքերուն վրայ քրտինքը կայլակ առ կայլակ կը բերեղանար:

Սպասեակը, առանց սպասելու ապրարանքին, շիշ մը շարժէին դրա Զաւէնի սեղանին:

- Բա՛ց...
- Արագ-արագ սկսան խմել: Զաւէն կ'աճապարէր:
- Ինչո՞ւ կ'աճապարես:
- Ժամանակը կարճ է, կրնան խանդարել մեզ:
- Ո՞վ պիտի խանդարէ:
- Ո՞վ դիտէ:
- Աղջիկը խնդաց: Զաւէնն ամբողջ սկսաւ ուղմել աղջկան իրանը:
- Կամաց-կամաց, շնչաց աղջիկը, սկուաներուն ընդմէջէն, կը ցուցնես:
- Իրա՞ւ:
- Մի շարանար: Գիշերը դեռ երկար է: Մի աճապարեր:
- Ո՞ւր պիտի երթանք:
- Ազատ ես, ուր որ կ'ուզես, բայց լաւագոյնը իմ սենեակս է:
- Կենացդ:
- Քու կենացդ, ի՞նչ է անունդ:
- Զաւէն:
- Իմա՞ Ձինա, Ի՞նչ է պարծոյ:
- Մեքենաներու նորոգիչ:
- Ի՞նչ մեքենայի:



ինքնաշարժի :  
 Աղջիկը խնդաց :  
 - Ինչո՞ւ կը խնդաս :  
 - Կը կարծէի պիտի ըսէիր վաճառահան ես կամ կալուածատէր կամ սոնուազն բժիշկ կամ փաստաբան :  
 - Բայց ինչո՞ւ :  
 - Այս սրահէն ներս բոլոր յիմարնեբուն յանկերդն է այդ :  
 Զաւէն խնդաց : Խնդաց բաց սրտով, բաց երակներով, բաց մտքով, ինչպէս տասնամեայ տղեկ մը : Երկար ատենէ այսպէս բաց եւ լեցուն սրտով չէր խնդացած ան :  
 - Դարձեալ պիտի հանդիպի՞ս :  
 - Այո եւ ոչ... Դեռ դիմաբ չենք ծանչցած :  
 - Կը ճանչնաս : Եթէ լաւ տղայ մը ըլլաս, ալ հոս դալու պէտք չունիմ : Կըրհաս ուղղակի տունս գալ :  
 Զաւէն համարձակ ու անվերապահ շարժումով գրկեց աղջկան մէջը եւ ամբողջ համբուրեց զայն :  
 Կենդանական եւ սոռոջ բան մը կար այդ համբուրի մէջ : Հին կարօտ մը կամ պատանեկան հին սէր մը : Զաւէն զգաց, զգաց, որ իր ներքին թոմբերը տակաւ առ տակաւ սկսած էին խորտակիլ... արեան գետը յորդած էր իր մէջ, բանդերով ամէն կամուրջ ու ամբարտակ :  
 - Աճապարէ, շուտ խմէ՛ :  
 - Բայց ինչու դեռ առաւօտեան ժամը Յն է : Գէն առաջ մեկնելու իրաւունք չունիմ :  
 - Լաւ, լաւ : Բայց ո՞ւր է Անթունը, մտածեց Զաւէն : Ոտքի ելաւ : Անթուն կեցած էր պատին քով, քանի մը տարիքոտ անձերու հետ, որոնք խմելով կը մեծարէին առաւել քան իր պարուհիին :  
 - Վայրկեան մը, - ըսաւ Զաւէն ու յոռաջացաւ դէպի պատը :  
 Անթուն, Ապու Նաուասէն քառակ մը կ'արտասանէր՝ մեղծ ձայնով : Երկաները վերացած կ'ունկնդրէին : Անթուն բռնած էր պարուհիին ձեռքէն : Զաւէն

նկատեց որ պարուհիին եւ Անթունին միջեւ մտերմութիւն մը ստեղծուած էր արդէն :  
 - Անթուն, ես կը մեկնիմ :  
 - Լաւ, բայց ո՞ւր է Յակոբը :  
 - Յիմար, ի՞նչ Յակոբ... ասկէ ետք ալ Յակոբ մնաց :  
 - Լաւ, լաւ, վաղը կը տեսնուի՞ք ու Անթուն շարունակեց քառակներ՝ Ապու Նաուասէն : Պարուհին այս անգամ աւելի սեղմուեցաւ անոր :  
 Զաւէն վերադարձաւ իր թուխ սղջըկան :  
 - Զե՞ս երգեր...  
 - Ի՞նչ կուզես :  
 - Զե՞ս դիտեր :  
 Աղջիկը մեղծ ձայնով՝ հաղիւ Զաւէնին լսելի, սկսաւ յախտենական յանկերգներով ըստ լէյլի մը :  
 Զաւէն բռնեց աղջկան ձեռքերը : Որքա՞ն, որքա՞ն տաք էին անոնք, որքա՞ն ընտանի, որքան բնական կը զգար ինքզինքը այս անձանոթ աղջկան հետ :  
 Սրահը գրեթէ պարզուած էր :  
 Զաւէն նայեցաւ վերջին մեկնողներուն :  
 - Անթունն ու պարուհին չկային :  
 - Մեկնի՞նք :  
 - Այո, - ըսաւ աղջիկը ու ստքի ելան : Դուրսը անձրևը զաղբած էր : Փողոցներէն մօտեցող առաւօտեան հոտը կու դար :  
 - Կ'ուզես կառք մը վարձենք :  
 - Այ, քալե՛ք : Այսպէս աւելի հաճելի է :  
 Անոնք թեւացուի անցան Տիգրիսի հրապարակէն : Մտան քովտի սալայատակուած նեղ փողոց մը :  
 Առաւօտը կը քալէր բաց քաղաքին վրայ :  
 Զաւէն իր թուխ աղջկան հետ փախուտ կու տար՝ դէպի քաղաքը արշաւող լոյսէն :  
 (Շար. 2)

## ՀԵՌԱՑՈՂՆԵՐ

Թշուառական, այս մամբէն ա՛ր, դէպի ա՛ր կը շտապես.  
Երագներուդ հովիտէն քալելն վերջ ընդերկա՛ր,  
Ո՛ր կը փախչիս, հեռուոր ա՛ր վայրերուն անհանդէս,  
Տեղ մը չիմ հրքեմնի ծառուղիներդ դալար:

Հեւք կուրծքիդ մաշեցնող քեզ կը տանջէ անընդհատ,  
Մունկիբուդ տէս աւր արիւնն առատորէն կը հասի...  
Քարերուն դէմ սայրաստոր աւ քարերուն դէմ մինակ,  
Ո՛ր կը վազեօ, աշխարհէն այսքան խռով, մեկուսի:

– Հայածական մարդերէն՝ ես մամբարդն եմ հեռագնաց.  
Այգերուս մէջ շե՛ս տեսներ խորունկ լիներմ արիւնի...  
Իր սերերէն պարպուած սիրտս պատանձ մ'է վերջի,

Որուն վրայ իբր ազօքք, ես գրեցի առ Աստուած.  
«Ո՛վ բարեգուր հայրդ իմ, որքա՛ն տարբեր է, որքա՛ն,  
Մարդը գոր դուն արարիր քաւ պատկերիդ հառնաճայն»:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

Պէլլուր

## ՍՓՈՓԱՆՔ

Սիրտ իմ դայուկ. սիրտ իմ մեմակ,  
Երբ յոգնում ես, երբ ճանճրանում  
Աշխարհից այս՝ փուչ աւ դատարկ,  
Օ՛ մանկացի՛ր, երջանկացի՛ր գոնէ մի պահ:

Ով սիրտ տխուր, որք աւ անոք,  
Երբ տեսնում ես մարդկանց ուրախ  
Եւ քեզ մեմակ,  
Երբ գգում ես աշխարհն կայտառ,  
Ինքդ դատարկ,  
Դե՛, մանկացի՛ր, երջանկացի՛ր գոնէ մի պահ,  
Որ էլ չգգաս զարկը կեանքի հարուածմերի  
Խլացուցիչ. տանջող, գերող  
Օ՛, մանկացի՛ր՝ երջանկացի՛ր սիրտ իմ տխուր

ՌԵՄԱ ԳԱՌՕՆԷ

Թեհրան

### Հ Ի Խ Ա Ն Կ Ի Ա Ղ Զ Կ Ա Ն

Գու միշտ մեծակ ես ու տխուր: Գու միշտ խոյս ես տալիս բոլորից եւ քեզ հեռու պահում:

Ինչո՞ւ, սպառնալից խղճո՞ւմ ես բուրբին, քէ՞ սիրում:

Երբ արեւի վերջին շողերն են հորիզոնի հեռուոր ավերե փառաբանելով անցնում, երբ մալուկային անօրեայ միայնակ ճայներն ու քոչուրների ֆաղցրահնչյուն դաշտային են տակաւ առ տակաւ Յուզում. միշտ նայն ժամին հանդիպում եմ քեզ՝ մեծ-մեծակ շըր-չելիս ծառուղիներում, կամ դիտելիս վերջալուսը՝ նստած մի ծառի տակ:

Գու սրտմութիւն ես հաւակ, մրայօն աչերիցդ մելամաղ-ձուքիւն է հասում անշուք այտերից վրայ եւ դէմքդ վազահաս աշ-նան քալիծն է արտայայտում: Հակտիդ քանձք քրտինք է միշտ պատած՝ ինչպէս մի կտոր քուիս ամպ, որ քա տամուկ հայեացքդ մտայլ շղարշով է պսակում: Գու այնքան նուրբ ես եւ վտիտ, որ եթէ դիպչեմ քեզ, վայելում եմ նուազես, հալչես, վերջանաս...

Ո՛չ, ես քեզ ձեռք չեմ տայ, ես քա դէմքը կը վառեմ արեւի անմահ շողերով, աստղերի ցալկերը կը լցնեմ քա սրտի առ հոգու մէջ. երկնային անմար լոյսերով մթազնազ կեանքդ կը լուսաւորեմ, որ չու ժպտաս պայծառ ու յոտակ, այնպէս՝ ինչպէս բուրբ... բա-լո՞րը...

.....

Նա արտասուում է... նրա դէմքի վրայ ինչ որ վտիտ լոյսեր են շողշողում:

Արդեօք յոյսի եւ ուրախութեան՞ն արցունքներ են, քէ՞ մահ-ւան վերջին շողեր:

ԿՐԻՍՏՈՒՅ ԲԵՆՈՒԻՆՆ

Թ՛ԻՆՆ ԲԱՆՆ

ՇԱՀԱՆԴՈՒՒՄ

« Ա Ն Ի Ծ Ե Ա Լ Ը »

Որեւէ մէկ օր կրնամ այցելել իրեն: Նախապէս ժամադրուելու հարկ չկայ: Միշտ նոյն տեղն է. նոյն սենեակը, նոյն մահճակալը, որուն քով պղտիկ սեղան մը, թերթերով լեցուն: Անգամին քով՝ տթոռ-կառք մը, անուանոր, որ զինք սենեակէն պատշգամ կը տանի:

Նախքան իր տունը հասնելու միտքերու պար մը կը սկսի ուղեղիս մէջ: Արդեօք նորէն պիտի յուզուի՞մ: Արդեօք պիտի կրնամ ինքզինքս պահել, խօսիլ բնականօրէն: Եթէ այդպէս է, ինչո՞ւ երթամ ուրեմն. ինչո՞ւ իրար անցնիմ, յուզուիմ, տխրիմ: Նպատակէս հրատարելու որոշում կ'առնեմ: Բայց քայլերս միաբերուս չեն հնազանդիր: Անոնք չեն նահանջիր ու կը շարունակեմ ճանապարհը:

Երբ դրան պանզը հնչեցնեմ, վստահեմ անոր արագ բացուելուն: Միակ դուռն է ուրիշ ներս կարենալ մտնելուս մասին բնաւ չեմ կասկածիր: Անպայման պիտի բացուի. անպայման, քանի որ ներսը կայ մէկը, մնայուն մէկը, անլարժ մէկը, պամուած մէկը, անզամալոյծ մը...

- Բարե՛ւ. Պետրոս.

- Օ՛, բարե՛ւ, բարե՛ւ, այս ի՞նչ անակնկալ, հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք:

Պետրոս զիս կ'ընդունի ժպտուն: Այդքան տառապանքին մէջ ինչպէ՞ս չէ մոռցած ժպտելու առաքինութիւնը: Կը շտկուի անկողինին մէջ: Ու այդ շտուկութիւնը շատ-շատ աջէն ձախ կամ ձախէն աջ պառնալ մը կ'ըլլայ, եւ կամ՝ դիտութիւթեւ բարձրացում մը, բարձերու յենակով:

Յուզումս ծածկելու մասին կը մտածեմ: Կը ճգնիմ ես ալ ժպտիլ: Ձեռ պիտեր թէ ի՞նչ տեսակ արտայայտութիւն կը ստանայ դէմքս: Ինք շարունակ ինծի կը նայի ու ես չփոթէս դաժան դիրք մը կ'որդեգրեմ: Տղան կարծես կ'ուզէ տեղէն ելլիլ, քաղաքավարական պատշաճութիւնները յարպել, բայց ողնայարը կը դաւաճանէ: Հօտիւ կրնայ սիկարէթ մը հրամցնել:

Պատկերասրահն Եւանը շէշտ մը կուտամ: Կը դառնամ (իբր թէ) յտետես, ու կը սկսիմ պատասխանել տղուն սա հարցումներուն.

- Ի՞նչպէս էք, զործերը, կեանքը...

- Սովորականին պէս. ոչ մէկ նորութիւն. տափակութիւն, յոգնութիւն միայն:

Բայց ինչո՞ւ կեղծեցի: Ինչո՞ւ նորութիւն չկայ: Դեռ քանի մը օր առաջ թատրոն չգացի: Երէկ գիշեր երգահանդէս չգացի: Անցեալ Կիրակի Սանին չեւա՞նք դարձանային արեւի մը տակ: Բայց ինչո՞ւ իրանդաժտեմ սա դատուպարուած տղան, եւ ինչո՞ւ արբեմեմ անոր սիրտը, որ կարօտ է կեանքի, ապրելու...

Քիչ ետք դրեթէ նոյնաման հարց մը կուտայ.

- Օրերը ի՞նչպէս կ'անցնին.

Ի՞նչ պատասխանեմ: Ըսե՞մ, լուր, շատ լուր, մարդիկ կ'աշխատին, կը պտըտին, կ'երգեն, կը կուռնեն, կը հաշտուին, կը սիրեն, կը վազեն, կը հասնին: Ո՛ր, ո՛ր, չեմ քսեք ու կրկին կը ստեմ.

... Ի՞նչպէս անցնին: Օրերը գեղեցիկ չեն, Աւելի լաւ չէ՞ որ անցնին, եւ շուտ անցնին: Ունայնութիւն ունայնութեանց, կեանքը դատարկ բան մըն է: Երջանիկ մարդ չկայ: Մարդիկ ողջ են բայց կարծես մեռելներու գոյնը ունին: Անսիրտ, անհոգի: Արեւը կը ծագի, բնութիւնը կը ժպտի, բայց մարդիկ զայն կը վերածննդերեզմաններու իրենց մեռելային կեանքով: Թող անցնին օրերը, շուտ թող անցնին: Կեանք է ասիկա: Նոյնն է: Դուրսը կամ ներսը, տանդ մէջ թէ աշխատանոցի, բարեկամի մօտ թէ թշնամիի, հիւանդ թէ առողջ:

Ի՞նչ զգուելի եմ ես: Որքա՞ն դատարկութուն: Ինչո՞ւ կը խաբեմ սա ուրզան...

Կը լուծեմ: Անդամայրոյծ երիտասարդը կը նայի ինծի: Գոհունակութիւն կը տեսնեմ դէմքին վրայ: Բայց ինչո՞ւ անկեղծ չեմ: Այդքան շո՞ւտ մտայնայ երանութեան այն պահերը զորս ապրեցայ քանի մը օր առաջ, հոն, տեղ մը... Այն ատեն ալ գերեզմանի մէջ էի: Գրախօսի չէ՞ք սոսկեր այդ տեղը... Ինչո՞ւ աշխարհ գերեզման ըլլայ, ինչո՞ւ մարդիկ ողջ-մեռելներ: Ուրեմն ե՞ս ալ մեռել մըն եմ: Ո՛չ, ո՛չ: Ես կեանքը կը սիրեմ, կը սիրեմ ապրիլ աշխարհին մէջ որ գեղեցիկ է, ուր կայ պահանջը պայքարին, կիրքը կամքին, հաճոյքը յաղթանակին: Ես ո՞ղջ եմ, ոչ թէ մեռել: Ունիմ ոտքեր, կրնամ հասնիլ հիմա ուր որ ուզեմ: Կրնամ սա խեղդող սենեակէն դուրս թռիլ ու հասնիլ սպիտակ արեւին, կապոյտ ծոփին, կանանչ բլուրներուն: Հապտ ինչ ըսէ սա տղան, սա երիտասարդ տղան, որուն աղնայրը փչրուեցաւ ու թ տարի առաջ, չար օր մը, ինքնաշարժի դէշ արկածով մը, ու ասիկէ ետք ալ չտեսաւ գոյնը կեանքին: Չանչցաւ միայն ցաւ ու տառապանք, յուսահատութիւնը կրծէց սրկէս առօրեայ հաց, ու խմեց միայն դաւանութիւն:

Կը դարձանամ, որ գեռեւս չէ տապալած ու կրնայ խօսիլ, ժպտիլ, սպանուորէն, հանդարտօրէն: Կարծես արքունի ալ չունի, ի՞նչ կ'ս: Իմ կանգուն

կեանքովս, աշխարհ մը արտունջ բերած եմ հետս ու կը թափեմ իր ցաւատանջ պիտուն:

Տղան արդեօք կը զրա՞յ, թէ խոշոր ստախօս մըն եմ: Անպայման: Ու կ'ամբողջանամ: Բայց ինք կը շարունակէ ժողտիլ: Արդեօք դի՞ս կը ծաղրէ իր ժպտով: Կը ժպտի այնպէս խաղաղ, ինչպէս մէկը, որ տպրած է աշխարհի բոլոր բարիքները եւ կշտացած, կշտացած...:

... Նոր բան մը գրեցի, կ'ուզէի՞ք կարդալ:

Կողքի սեղանին զգրոցէն կը հանէ տետրակ մը եւ կ'երկարէ ինծի: Պատմութեան մըն է, գրական փորձ մը, ոչ մաքուր հայերէնով, սրբազրութեան կարօտ:

... Եթէ կ'ուզէք սրբազրեցէք: Անցեալ օր գրութիւն մը գրեցի հայկական թերթի մը, տպած էին սրբազրելով: Հիւանդութեանս ընթացքին այդքան շատ կարդացի, որ հիմա կրնամ գրել ալ: Առաջ հարկէ կարգալ մը դիտէի:

Երիտասարդ աղջիկ մը սուրն կը բերէ: Գոյն է: Արդէն իսկ ծանօթներ ենք: Առաջին այցելութիւնս է: Քիչ տեղ կը մտնէ ամուսնացած քոյրն ալ, իր հրախօսներով: Փոքրիկները կը շարունակեն շարունակելու: Կ'ունենանք մեկ: Թերեւս իրենց ջեռին ուրիշ աղջիկ-այցելու չունի: Գոյրերը կը յարկեն զիս: Եստ սիրալիք են, կ'ուզեն որ յաճախ ունենամ Պետրոսին: Զէ՞ որ ան միշտ միմեկ է, զրկուած...:

Սա տղան եթէ առողջ ըլլար, նոյն ազատութիւնը պիտի շնորհէի՞ն ինծի անոր քոյրերը, կ'անցնի միտքս: Այդ պարագային այցելութիւնս անբնական, արատաովոր պիտի գտնէի՞ն: Պիտի յարգէի՞ն զիս նոյն շարքանքով ու պիտի իրէի՞ն նոյն ջերմութեամբ: Բայց ինչո՞ւ երիտասարդ աղջիկ մը այցելէ երիտասարդ առողջ տղու մը. այդ ի՞նչ կը նշանակէ... Միայն գութի եւ կարեկցութեան պարագային կարելի է այդ...:

Նոր անդրադարձայ թէ Պետրոս հետս կը խօսի: Կ'երեւի խոկումս երկար տեսած է:

- Հիմա բնիքիւր ալ կ'ընեն: Կը տեսնե՞ս սա քապլօները, ի՞նչ գործերս են:

Կը նայի՞մ ցոյց տուած պատին, ուր կէ կտրուած են քանի մը քապլօներ: Բնանկարներ են, ծառեր, ծաղիկներ, առու մը, գիւղի ճամբայ, ճամբուն վըրայ՝ ջրաղաց: Գոյները բաւական համագրուած են, գործերը շնորհք կը վկայեն, բայց զուրկ են արուեստի բարձրութեան հասած ըլլալէ: Տղան կը կոսէ կարծիքս.

- Առուցիչի երես տեսած չեմ: Անկողիներն մէջ սորվեցայ ես ինծի գծել ու նկարել: Այդքան կը փափաքիմ վարպետի մը քով աշխատիլ, քանի մը ամիս դոնէ: Երանի՛ր թէ Կիւմուտիին աշխատանոցը միայնակ ըլլար: Կ'ըսեն թէ չորրորդ յարկի վրայ է եւ վերելակ ալ չունի: Այլուպէս աթոռ-կառքովս կ'ընայի փոխադրուիլ: Գոնէ մէյ մը տեսնէի թէ կ'ընչպէս գոյները կը խառնեն իրարու:

- Նկարիչ բարեկամ մը չունի՞ս:

- Բնա՛ւ: Արդէն բարեկամներս զրեթէ չեն այցելեր. կ'երեւի ձանձրացան... Երանի՛ր թէ սա Կիւմուտիին քով ըլլալի: Վարպետ է կ'ըսեն: Կը զգամ թէ շատ պիտի փոխուիմ: Գոնէ գծողները կը տեսնէի, գոնէ ներկողները, գոնէ ներկ խառնողները, գոնէ գոյն պարաստողները...

Գոնէ, գոնէ, - կը շարունակեմ միաքով, - գոնէ սոքերդ յա՛նկարծ բուժւէին, ողնայարդ զօրանար: Ի՞նչ կ'ըլլար եթէ նման հրաշք մը պատահէր, ելլէր անկողնէն վազէր, վազէր, ու հասնէր մինչեւ... աշխատանոցը Կիւմուտի, հան խառնուելու համար ներկերու եւ գոյներու համարուագին...

Կ'ապրիմ տղուն զժրատութիւնը:


Կը մտնամ հոգերս: Բայց իրա՞ւ հոգերս ունիմ: Օ՛ր, որքան տկար եմ սա անդամայածին հոգիին զօրութեան հետ բազմատամ: Դեռ երէկ ինքզնիքս ամենազըժքախտ աղջիկը նկատած էի, քանի որ... քանի որ... գիտէ՞ք ինչ, քանի որ ինծի սիրելի մէկը չէր հետամայնած... քանի որ ան պիտի զար զիս այցելուու ու չէր եկած... Այսքա՞ն ճղճիմ եմ, այսքա՞ն տկար, պարտուելու համար ժամադրութեան մը ձախողութիւնէն: Զէ՛ որ ես զվաղընն ունիմ: Ու այդ զվաղընն կրնայ ինծի կրկին հնչեցնել սիրելի հետամայնէր, լսելի դարձնել կարօտալի կանչեր, հասցնել մահրիմ մարմիններ: Ես զվաղընն աւելիմ: Ի՞նչ է ապալան, կեանքը: Ես սոքեր ունիմ: Ես ստույգ եմ: Ուրեմն կարող, զօրեղ: Բայց սա տղան: Օ՛ր, ան դէմս պտուկած է իր եղծուած երիտասարդութեամբ, թուլցած մարմնով, օգնութիւն աղերսող նաբւածքով, կեանք պաղատող ժպիտով:

Պայքար մը կը սկսի ներսիդիս: Ինչո՞ւ անզոր եմ օգնելու սա տղուն: Ա՛յո է զժրատութիւնը: Կեանքին դիմաց անզօր մնալու գիտակցութիւնը: Բայց ի՞նչ յանցանք ունի սա տղան, որ ապրիլ կ'ուզէ, ստեղծագործել կ'ուզէ, որ... որ քալել կ'ուզէ. որքա՞ն պարզ բան մը, քալել... բայց մը դաւազիր, հրահանգ մը նենգ, չ'արտօներ...:

Որքա՞ն բախտաւոր կը զգամ ինքզնիքս ու որքա՞ն երջանիկ, որքա՞ն զօրաւոր ու որքա՞ն կարող, որ ունիմ սոքեր, որ կ'ընամ քալել, վազել, հասնիլ: Մինչեւ իմ գոյներուս, մինչեւ իմ երասպիս...:

ՇԱՀԱՆԿՈՒՅՏ

Յուլուար 1987, Պէյրութ



### ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայրենասրահմութիւնը, - սմանց բա-  
սով կարտա՛խար, - երբ սկսի սեղմել  
կոկորդոս՝ նախ քան որ ննթարկէ զիս ա-  
նողոք յարձակումի մը, ամէ՛ն անգամ՝  
մէ՛կ միջոց միայն կ'ունենամ ինքնա-  
սրտապանութեան. - դիմել զրիշին, ու  
մըտակ մաքուր ու սպիտակ էջեր, որոնք  
կը մնան միշտ խօ՛ւք, բառ, ապարդիւն  
ու անօղնական, եթէ ոչ ցնորք ու պատ-  
րանք:

Ջսին երբեմն, մեր մէջ՝ ինչպէս այ-  
լուր, - եւ այդ՝ գասական շրջանն էր՝  
անփոյթ ժամանակներու, - «Գրիչը՝  
սարկն վերս կարծելով կասեցուցած ըլ-  
լալ, բովանդակ սպասնալիքը սուրին:

Ամսիս մըն էր այդ, խաղաղ օրե-  
րու, որ պէտք էր ընդլայնել, կոչել կեն-  
գանութեան եւ զնել ի սպաս մարգոց  
գարսյական վերելքին ու զազափարտ-  
կան շփումին:

Մինչ ուրիշներ ստանել հմուտ - ե-  
թէ ոչ անգութ, - շրջելով իմաստութիւ-  
նը, համաձայն իրենց յատուկ վարդա-  
պետութեան՝ յարարարեցին, - «Սուրբ՝  
գրիշէ՛ն ալ վերս:

Փւ ահա՛, պղատոնական ստաջի՛ն

յարսուժը, երկու խախուտ վարդապե-  
տութեանց, մէկը միւսը ջրող, կամ ի-  
րար շէջոթացնող, - ուրիշ հա՛րկ էր  
մեկնիլ, փնտռելու ու գտնելու համար  
սկզբունք մը, որ չունենա՛ր երկու հա-  
կոտնեաներ, հասնելու համար նոյն հանգ-  
րըւանին, - խաղաղութեան:

Բաւական էր Սուկրատ մը, Կէօթէ մը,  
կամ Շէյքսպիր մը, բացատրելու համար,  
թէ գրիչը զրիշ էր, եւ սուրբ՝ սուր,  
ինչպէս սեւը սեւ, եւ սպիտակը՝ սպի-  
տակ, թէ կարելի չէր ո՛չ զրիչով  
հաւ մորթել, ոչ ալ սուրով՝ սիրտին  
նամակներ գրել, տեղատրելու համար  
հիւմանիզմը եւ հիւմանիթարիզմը չար  
բնագորին քովիկը մարդերուն, շէջոթաց-  
նելու համար մէկը միւսով:

Մեր իրականութեան մէջ, գրիչը  
զարձու մեր հիշը, երբ սուրը ինչպէս մեր  
ծոծրակին, աննախատեսելի օրերու եւ  
ժամանակներու, առանց որ ունենայինք  
հնարը փախուստի կամ բողոքի:

Բողո՞ք: Ահա եւ յիմար բան մը, որ  
մենք փորձեցինք, նախադժուած բուրձ  
հղանակներովը բաւին, ինչպէս կը փո-  
ձեն իմաստասիրական վարկածներ, 1875

2) — Ի ճամբուն վրայ, ուր ամէ՛ն ինչ կը  
թուի դիւրին ու հնարաւոր, դպրոցին  
պարզած լո՛ւ յն շուքին ներքեւ, ուր դեռ  
պատասխանատուութիւններու ցանցը չէ  
ներուած, որսալու համար տկարներն ու  
գիւրին հաւատացեալները մարդերուն:

Գրի՛ւը, նաև, որ եղաւ մեր ար-  
ցունքն ու աղերսը, մեր շնորհ օգնեա՛  
լինծը, խաչէն առաջ ու վեր, խաչին չափ  
անօգնական ու անողորմ, յորմէ՛հետէ  
ցամքեցան զուարթութեան ու ծիծա-  
ղի ակերբ մեր արդէ՛ն իսկ արտաճու-  
թեանց ու թախիծի արտադիր հոգինե-  
րուն:

Մըն էր, սակայն, մեր ցեղային ա-  
նաջինութեանց համապատասխան գոր-  
ծիքը երկու իմաստութիւններէն, որ ըլ-  
լար ասուե՛լ մարդկային եւ ասուե՛լ  
արդիւնաւոր — գրի՛ւը, թէ սուրբ:

Եթէ, անհնարօ՛վը կարեւորութիւն-  
ներուն՝ ուղղուած ըլլար հարցումը ին-  
ծի դարե՛ր առաջ, ծնելէս շատ առաջ,  
պիտի գոչէ՛ր դարերուն ընդերքէն —  
Գրի՛ւը, գրի՛ւը, քանի փորձուած էր ի  
սկզբանն է, թէ սուրբ կը մնար միա՛կ  
դրիւը զօրաւորին, ու... բարբարոսին,  
եւ ես չէի՛ կոչուած մաս կազմելու մ՛չ  
առաջինին եւ ոչ երկրորդին, ցեղային  
նկարագրով ու կոչումով:

Գրի՛ւը, բայց եւ վա՛խը: Վախը, ու-  
շինչով առնական, որ ղեկեց բազմաթիւ  
ուղղութիւնները մեր ղնացքին, նախ  
քան մեր ուղեւորումը ամստոյզ հորի-  
զոններ:

Կը հարցնէ՞ք արդեօք, թէ կա՞ր,  
կամ նախատուած էր ստոյգը ետքի-  
զանհրաւ: Հարցր կ՛ծնոտ է, աւա՞ղ,  
չու՛ծելու համար՝ միայն գրի՛ւով: Ու-  
րեմն սարն՝ Ոչ, բայց կար մեզի յա-  
տուկ տարբեր եղանակ մը, որուն հա-  
մապատասխան բար կը նախընտրեմ  
կուչ տալ, այնքան որ սովորական է  
զարձած ան:

Ճ

1

Մերացեր, ծիւրեր, զուլիե՛ր է կար-  
ծէք Մեսրոպեան շքեղ բարբառը, որ Ա-  
լիշաններ ու Գուրեաններ էր հասցուցած  
կրթմն, առարկայ մեր հիացումին ու  
երախտադիտութեանց:

Աղօթքներ է տուեր կամ քերթուած-  
ներ հրաշալի, յետոյ երգե՛ր կարօտի,  
սուզի ու սաղմոսի, եւ այսպէս է ա-  
նէր, զոհունակութեամբ մը կարծես,  
կատարած ըլլալու պաշտօնն ու կոչումը  
իրեն:

Կարեւր էր սարիւ տանը՛հէնց դար,  
աղօթելով, սգալով, ու քերթելով, ա-  
նա՛նց անզրադառնալու այն մի՛ւս, այն  
աճաւոր ու անյետաճգելի երամայակա-  
նին, որ է՛ր, ու հարկ էր մնար դաստիա-  
րակալիւնը ժողովուրդին, այն գիրով  
ու բարբառով, որուն ի խնդիր եկեր էին  
աշխարհ Մեսրոպեան սրբանուէր տա-  
ռերը:

Ահա՛ այն ինչ, որ ըրինք մեկը, ու  
կը շարունակենք ընել դեռ եւս, նոր ու  
տարբեր եղանակներով:

1967:

Իմացէ՛ք դարեր. հայ ժողովուրդը  
(Սփիւ՛ւթ) կը մնայ դեռ ԱՆԳՐԱՊԻՍ  
(Իլլեթթէ), հանդէպ իր մայրենի լեզ-  
ուն: Կա՞յ աւելի մեծ ամօթ, քան այս  
մէ՛կը աղղի մը համար, իշխան յաւակ-  
նութեանց, ընչ որուն եւ ես, — գուցէ, —  
երբ կը բարբառի քաղաքակրթութենէ:

Ճ

Սկսեր եմ՝ ատե՛լ բառեր, որ այն-  
քա՛ն սիրեր էի հինէն, երբ աղօթք ու  
քերթք էի անով միայն, թէ մէկը, թէ  
միւսը անպէտ, այնքան ատեն որ զուրկ  
էի Շնորհալիի մը, կամ նորեկացիի մը  
երկնաչնոր՛հ տաղանդէն:

Սկսեր եմ ատե՛լ — խա՛չը, խո՛ւնկը,  
խա՛նդը, խոկը, խոսքը, խանդապատմ-  
քը, խիզախը, խաւա՛րը, առանց մոռնու-  
լու նաև խանդալտարը:

Մինչ սկսեր եմ սիրել դրացի օտար



աղջիկներ, ինչպէս Փէն, Փիւք, Փափաք, Միրք, նոյնիսկ թրքուհի Սալիքը, նկարագրով ու բարքառով մեզմ, Համեստ աղջիկներ, որ Հասակ չունին, չունին եւ չե՛լտ Հուժկու, ձեռք ձեռքի տուած կարծես ու պատրաստ պարելու, ճամբու դրած իրենց կաթընկէր քոյրը՝ ... Խաղաղը:

Ճնարկութիւն ամենեցունքը, սկըներ է չնչել խո՛րթ լսողութեանս, խէրուն յաջորդող զատերովը, սուսնց Հաշիւը պահելու այլ ձայնաւորներու խուսներամ բազմութեան:

Իսկ Փիւք մը Համակիր է դիս խէրուն եւ զատերու խուժումին դէժ, որոնց մէջ կուսակիլ կամ ձեռքազատուի դարձեր է անձնար:

Թրքութեան կամ բարբարոսութեան շղարշ մըն է դրուեր կարծես այդ երկու տաւերուն վրայ զոր Փրանսուհին եւ անգլուհին դրժեք, վտարեր են, աշխարհ դալէ աստի իսկ:

Դրուժամն, ասանդուրաց, Հոսանձ, Է՞ն, տարիներ շաղի ու շաղախակէ հաքը լեզուին խո՛րթին մէջ, չեմ դիտեր թէ ո՞րն եմ ես այդ բոլորէն:

Մեքտայեա՞ն, Հակամերոպեա՞ն: Դրեր եմ Հարցը առջեւս, նախքան այլ լսակ՛ր այլասերումս, փնտռելով միանպատակս, լուռ չքմեղանք մը ես ինձի:

Ահաւոր բան է դադարը սիրոյ մէջ: Դադարը, ուր եւ կարելի չէ կասել: Կասել՝ ու վերակախել: Պէտք է ընդգրկել՝ Հակոտնեանն ուղիին: Ատե՛լ սրդեօք: Գուցէ եւ ո՛չ: Դադարին յաջորդող՝ Հարցականները միշտ...:

Յամենայնզէպս՝ անկում մը անորակելի, ուրկէ՛ բնո՛յթը մարդկային նկարագրին, անկախ իր կամքէն, անպատասխանատու է ինքնիրեն:

Երբ Հասած է դադարը, պէտք է թողնուի, որ ան կատարէ իր դերը՝ քացասական կամ դրական: Պէտք է յանձնըւել, ենթարկուել, բոլոր ուղիներովը պարտադրանքին:

Նախքան պարտութիւն, կան նաեւ երկու շարժումներ Հակոտնեայ, բայց երբե՛ք Հակասական, գուցէ Հետեւանք

մէկը միւսին: Յեղափոխութիւն, յեղաշրջում: Երկու ուղղութիւններ, գուցէ զուգահեռական մէկը միւսին, կարճաթէպէտ փաստարկումի:

Նարեկացի, Շնորհալի, Վարուժան, Ալիշան, սկներ են ամբողջիլ, նսեմանալ կարծես մտքիս աչքերուն դէժ, ու սարսափելով ես ինձմէ, սկսեր եմ կրկնել: «Մորհրդո՛ց դիտող, խաւարիս շնորհեա՛, խորհո՛ւրդ լուսաւոր»:

- Ամո՛թ, կ'ըսեմ ես ինձի: Բայց կա՞յ ամօթ անկումի մէջ: Կա՞յ շինալ ճամբայ, կամ ինչպէ՛ք ետք ջալիլ, յառաջանալ: - մինչե՛ւ յեղափոխութիւն, մինչե՛ւ յեղաշրջում, երկուքո՛վ իսկ մարդկային:

Կը զգամ, թէ ոճերի մը նախօրեակին եմ. կեղծել, ստել, ա՛յլ ոճերներ իրենց կարգին:

Օտար կի՛նն է ան, որ կը փորձէ գրաւել տեղը անշարժ ու տարեց Հայ կիող, ալիւս անընդունա՛կ կնութեան, թէեւ մայր առաքինի՛ ... Մայրնիր վայելուքեամբ:

- Օտար լեզու՛ն. կը լսեմ բարբառիլ. ու կ'ըմբռնե՞ք: - փոխան Հայոց ու կեծած լեզուին, Հոս, ուր ծո՛վ է լեզուն, լեզուական Հրախաղութիւններով զեղուն:

Կը կարմրե՛մ պատկերին առջեւ, որ կը դժեմ, այլազոյ բարբառին, բայց յեղաշրջում, յեղաշրջում, մինչե՛ւ մեղանշում: Բազմակնութեան բա՛րքը. պարտազրուած Հայու, ինքն իրմէ՛ - բազմակնութիւնը. կարելի՛ է դորձածել փոխաբերական եղանակով, ըսելու Համար, - բազմակնականութիւնը, փոփոխութիւնը, շլուկ՛ մեր մեծ բանասէ՛րը, որուն անունն իսկ չեմ ժպր՛կեր յիշել Հոս:

Ճ:

Կը խօսեմ, - կը կարծե՛մ խօսել, - ընտիրը լեզուին, իմ սեփական, մաքրազրուած, պերճապատկ լեզուս, չեմ ամչնար: Ձե՛մ կարմրեր: Աւ՛ճ, սակայն, կը խորհե՛մ դադիրէն, ասանպե-

տի մը իբրև, եւ դեռ աւելի՞ն.— ցաւ կը  
 դրամ :կոչուելուս.— Հիւօ, Մօլիէն, Գո-  
 տրիէր, Վօլթիւր, Վերքիւտս, Հօրաս,  
 Մարկոս Արեւիտս, Բրուտոս, Սենէք,  
 կամ Կիկերոն, փոխանակ կոչուելու ան-  
 փաստանակօրէն՝ Սարգիս, խնդճութիւն  
 եւ ազիտութիւն մը լոկ անուի, որ չու-  
 նի՝ ստուերն իսկ անմահութեան, վարըն-  
 զի՝ ... Սարգիս :

Սիրած եմ մանաւանդ, զուարթ Հօ-  
 բանը, իշխան ծիծաղի ու Հեզնանքի, որ  
 երգեց ունայնութիւնը կեանքին, եղա-  
 նակոյժը Սոցոմոնին :

ծ

Մոռցեր էի Հայերէնը — հիմա յա-  
 ճափ կը պատահին նման ժողացումներ —  
 վալիւմ բառին. ամօթ է, ամօթ չէ՝ հի-  
 մա շատ ո՛ւշ է անդրադարձուլու մանր  
 չարացկաններու : Բառարան կը քանամ,  
 քիչ մը խօսելով եւ ինձմէ : Առաջին Հա-  
 յերէն բառը որ կու տայ նուագարեան, —  
 Գիրքն է : Կ'ըսեմ, ոգործած Աստուած,  
 ե՛րբ է եղբւր վալիւմ գիրք, թէեւ դի-  
 ւանմ, թէ գիրքը՝ երբ է վալիւմ — հա-  
 տար, աստ'նց սակայն Հասնելու մինչեւ  
 Հազարադէ՛պ... արտահատորը, ժառան-  
 դութիւն մը մէր դասականներէն. (փնտը-  
 ուցէք մէկ Հասնիկ մը իբրև նմոյշ) : Կը  
 Հասնիմ վերջապէս՝ քառի ուղղափառին.  
 մեզի եւ ինծի ծանօթ.— շտաւալսին. Ար-  
 քիմէթիսեան քաղաքանշուքեամբ մը կը  
 դուռնէմ — Էփրէզս :

Ունիմ կարիքը՝ ուրիշ բառի մը Հա-  
 յերէնին, Իֆամէր ընելն է : Բառը նման  
 է մեր անլամ բառին, բայց իմաստը  
 տարբէն Հետու : Կը դիմեմ կրկին նու-  
 պարեանին. Բանփիլիէ մարդ, Հատով չի  
 ծախեր. պէտք է գնել, — թրեզ ա լա տու-  
 գէն. բայց զբասկ'ը, բասկ'ը, բասկը՝  
 ուռնցնելու Համար միայն՝ ... փոքր  
 բառագրքին : Ձե՛մ ընդօրինակեր Հայերէն  
 բառերը, զթալով մեզ : Կ'ասուիմ կը նըս-  
 տիմ իր սպղութեանը մէջ, խորհելով  
 քսաներորդ դարու վայելի մարդու պէս —

քի՛չ փան, Կ'ըսեմ, Հայ ու զագրացի ա-  
 մոններ :

Քիչ մը ննուռն, զէմս, ուրի՛շ սո-  
 տանայ մը.— տէքոքիլէ բառը, որուն  
 Հայերէն ճշգրիտ քառը անբաւարար կը  
 թուի : Կը հրատարկեմ քառագրք քանա-  
 լի, Կ'ըսեմ — զո՛հացի՛ր զագրերէնովը  
 մա՛րդ. կարճ է կեանքը. ամէն ճամբայ  
 Հոտմ կը տանի : Վերջուներն ալ շինուի  
 են՝ մարդոց կարիքն ու պահանջը զոհա-  
 ցրելու :

Նուագարեան Մեթոնոյ, սուրբ եզան  
 է ամբողջ կեանքը. Հոտուար աղագարան  
 ինծի, կարծեմ ներքինի, (մայր վկայ),  
 Հատուարար և վիտ կարսով. (կարգուած  
 մարդիկ մեր մէջ, քառարան չեն գրած —  
 ն. Բիւզանդացի, Տէմիրնիպաշեան, Գա-  
 բուստեան, Վիհրան Արիկեան, եւ ...  
 Միլիթարեանը, եղած են ... անկարգ) :

ծ

Ըտի թէ Հայերէն կը խօսիմ, բայց  
 կը խորհիմ քառերէնի : Արդիւնք, կէս  
 դարու անփառուանկ յեղաշրջման : Ճե-  
 ղափոխութիւն, յեղաշրջում, կը տես-  
 նէք թէ ստահաւարան նայն բառերն են  
 դրչիս տակ միշտ :

Մեր մեծ թարգմաթիւնը, շեքս-  
 կա՛նը — թէ Հայերէն լեզուն Հարկ էր որ  
 ստանէինք Միլիթարեաններէ :

— Ինչո՞ւ Սոկրատի դարձն է պա-  
 տախտանի ամէն ինչն՝ ինչն է, մինչ եւ վեր-  
 չիկին կապի՛րն իսկո շեմ արժեք մեծ փ-  
 մաստասէրին :

Կը գիմեմ, երկու Հազար տարեկան  
 (չէ՞ որ երեւելի մարդիկ անմահ են),  
 բարեկամիս՝ Հարստին, կ'ընդօրինակեմ  
 իրմէ Հետեւապը —

« Un style, où se ecmbiuront les  
 deux langues, est plus doux. C'est com-  
 me un Faderue, melangé avec du Chios. »

Յիշու գինիներ ընտիր, մին փոսայ-  
 կան, միւր յունական, անհարթութիւն  
 լատիներէնի եւ յունարէնի, որոնք փոխ-  
 նիփոխ եւ Հառատարօրէն կը գործածուէին  
 Հոռմէական գրականութեան մէջ — Ճե՛ս՝

կիկեոսն, Մարկոս Աւրելիոս, Յուլիոս  
Կեսար, Բրուտոս եւ՝ ... Լուկուլլոս  
(մենք, անունները ծանրագնելու մեր չը-  
նաշխարհիկ ստաբիլութեամբը կ'ըսենք՝  
Լուկուլլոս) :

Թոյլ տուէք ներածել, խնդրե՛մ, ու-  
րի՛շ հատուած թը քաւ հեղինակէն, որ  
վստահ եմ, կ'ընայ Բանկազին օգտակա-  
րութիւն ունենալ մերայնոց դրասէրնե-  
րոււ՛ն :

« Si tu veux écrire des œuvres di-  
gnes qu'on les réalise, ne te mets pas en  
peine d'être admiré de la foule. »

Ընդգծումները թնձմէ, կանխելու  
համար անախորժ մալանքամտիւ մը :  
Անա վերջապէս, նախքան վերջաորու-  
թիւնն —

« Il me suffit, que les Chevaliers  
m'applaudissent. »

« Ասպետներ » կը փնտռե՛մ հայ հարի-  
զոնին վրայ, հինգերորդէն մինչեւ...  
քսաներորդ դար, ծափահարել տալու  
համար դրական պարծեր. զո՞վ պէտք է  
կոչե՛մ — Խորենացի՞, Շնորհալի՞, Եղի-  
շէ՞, Նարեկացի՞ : Ո՛ւր էր հայ մտաւո-  
րականը, թի՛շ մը կիկեոսն, թի՛շ մը Սե-  
նէք : Թեթի՞ էր լեզուն :

Անհրաժեշտ չէ՞ր պատրաստել մտա-  
ւորական էլիք մը, որ առաջնորդէր սե-  
րունդները լոյսի ճամբէն :

Թէ հայերէն գիրք չի ծախուիլ ըմ-  
փուտքի մէջ, մեղքը հայ գիրին պէտք չէ  
վերադրել, այլ հայ-գրող կոչուած կրճ-  
ղին, որուն գործը պէտք է ենթարկուի  
համազգային պոյթութի, որպէսզի հայ  
գիրը չենթարկուի Մարշի օ փիւսի :

Ամենապատիւ սրբազան մը դեռ ե-  
րէկ, օր-ցերեկով վարուածան բանագո-  
ղեց ապաշնորհ փոռասիրութեան մը  
զոհելով իր եւ ազգին դարաւոր սրբու-  
թիւնները :

— Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, մինչեւ  
ե՞րբ պիտի լռես ու ներես :

Մտայի՞ց հայ գիրը իր կոչումին,  
ծնունդէն մինչեւ մեր օրերը, այն համե-  
մատութեամբ որ ծառայեց լատիներէնը  
Հոռոմայեցիներուն :

Ազգային դժբախտութիւնն է՛ր — թի՛շ  
ունեցաւ Հոռոմ, իր եօթը դար սեւոզու-  
թեանը ընթացքին :

Ծածանակի պակաս — այլօն տոմի :  
Մուշուքիւն, մեղկութիւն, ոչ առաւել,  
ու նուազ : Կազմակերպութեան պակաս :  
Անիշխանութիւն, շունչի ոլմիպ'ս, մա-  
նուանդ :

Ի՞նչ գործ տեսան Մխիթարեանք,  
սկիզբէն մինչեւ մեր օրերը, բացի պա-  
րաստութենէ քանի մը նախակրթական  
ձեռնարկներու :

Գրաբարին արտաքսու՛մը : Ժյլ ա-  
ժօթ, ա՛՛՛՛ ռե՛ք :

Քեռ մինչեւ այսօր, ջերականու-  
թիւն չունին մեր գոյգ լեզունները — դը-  
րաբարը եւ աշխարհաբարը. Կղածին հե-  
ղինակներն ալ կը մնան վիճելի : Մոռ-  
ցա՞ք ԱՄԷ՛ն քառին ստեղծած փոթորիկը :



Վերջերս գրե՛ր էի քարեկամի մը, որ  
տարեքով ծոռէն կը հետեւի ինծի —

— ... « Պոլիսը, որ մեր Փաբիզն  
էր եւ մեր Սորպանը, մեր Աթէնքը եւ  
Հոռոմը, մեր մեղքն ու փեթակը, գորս  
երբե՛ք չեն կրցած երգել Հոռոմին ու  
Աթէնքին վայել շուքով ու եղանա-  
կովը Թէվֆիք Ֆիքրէթները, հաճինքը,  
կամ Ծուստ ու Զիյա գոյգ փաշաներ,  
վեց դար երկարող սիւնի մը վրայ : Աւ-  
փական էի փակադիժը, որ բացեր էի,  
կարճ կապելու համար տրտուցն, որ  
չունի հմայքը Դուրեանին, Փարիզի պա-  
րիսպներէն ներս :

Ո՛ւրտեղուանը հասած պիտի զըռ-  
նէինք այսօր այս ժողովուրդը, եթէ Շը-  
նորհալի մը կամ Նարեկացի մը չհա-  
նէին փրկելու զինքը, Հոգեկան ու Հոգե-  
ւորական տաճկութենէ մը : Հոգեկանն  
ու Հոգեւորականը, վերջին եղծմանի-  
նքը, աւա՛ղ, որ կը սպասեն դրան ե-  
տին... »

Ճ

Չեմ կրնար բարբառելի Պոլսէն, առանց որ յիշեմ սեւուրիկ եւ անշուք աշն տղան, որ պոլսեցի Մամբրէն էր, որուն կ'արժէր որ զծէի օր մը կենդանագիրը, զետեղելու համար հայ թանգարանի մը ցուցափեղկին մէջ, բայց ուրկէ՞ ճարնս իրաքանչիւր ցուցադրած ապրանքիդ զնորոյր, հիմա, որ վաճառողը դարձեր է առտա, զնորը հազուադէպ: Հայերէ՞ն.— ո՞ր կը ծախուի առանց մուրացկանութեան, եւ ի՞նչ հայերէն:

Մամբրէն, պատերազմի տարիներուն գուրթ ձայն ունէր, որ պարերարար կու գար հայոց սրճարան, թախիծը լա՞յն ժպիտներուն խառնած, Պոլիս վերադարձի հրա՛ջ մը փնտտելու հայոց սրճարանէն ներս.—

— Եթէ կարգուած շըլլայինք, Միւսի Սարգիս, դուն կ'ըլլայիր Երուսաղէմի պատրիարք, ես ալ Կոստանդնուպոլսոյ. հէ՛ն, ի՞նչ կ'ըսես.— այսպէս կը սկսէր ներածականը, պատրիարքական թեկնածուին:

— Հասակ պէտք է, փո՛ր պէտք է

Մամբրէ՛, դուն ոչ մէկը ունիս, ոչ միւսը, — կ'ըսէի, — Աւետարան կարդացե՛ր ես, քարո՛ւ պէտք է շինել...:

— Իրաւունք ունիս, թագ զննել, բուրձառ օրօրելով պատրիարքութիւն չ'ըլլար, անանկ չէ՞ Միւսի Սարգիս:

— Մէյ մըն ալ Ե՛րբ կ'երթանք Պոլիս, — կը հարցնէր յաճախ, կարծելով թէ պատերազմը տեղի կ'ունենար հեռուն, հայ ժողովուրդի ճակատագիրը բարելաւելու համար միայն: Հեքնա՛նք:

— Հայաստան չե՞ս ուզեր մեկնել, Մամբրէ՛, հիմա, որ երկիր ունինք, հայրենիք ունինք, — կը հարցնէի վստահ, որ բացասական էր ստանալիք պատասխանս:

— Երթամ որ անօթի՞ մնամ, ի՞մ Հայաստանս Պոլիս է, — կը պատասխանէր քիչ մը զայրոյթով:

— Էի ուի, իրաւունք ունիս. ի՞մ ալ Զմիւռնիան է, ես ու դուն, յաւիտենական վախապնտները երկրագունտին: Մեզմէ առաջ ու ետքը, դեռ ուրիշ մը եւս.— Գնչուները: Մնացե՛ր է երրորդ մը եւս:

ՍԱՐԳԻՍ ԶԻՉՄԷՃԻԱՆ

Լ. ՍԿՐՏՁԵԱՆ

**ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՍԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՆՁԸ**

Ճ.

Երբ բանաստեղծը այնքան յամաօրէն կառչում է իր բանաստեղծական անհատականութեանը եւ խանդով պաշտպանում նրա անձեռնմխելիութիւնը ու առհասարակ ոգու ազատութիւնը, իսկ սիրող իշխանութիւնը վարում է չենց ճիշդ այդ անհատականութիւնը քայքայելու, զիջողութիւնը եւ ստեղծագործական ուղին բանաւելու քաղաքականութիւն, ապա անխուսափելի է դառնում քացայայտ կամ խուչ բախումը: Բախումը տարբեր աստիճանի կարող է լինել եւ եզրակացութիւններն էլ՝ տարբեր քննութի: Քանի որ կոմունիստական իշխանութեան ներքոյ բանութեան ու ազատութեան ուժերի յարաբերակցութիւնը առաջինի օգտին էր, մանաւանդ 30-ական թուականներին, ապա որեւէ բանաստեղծի համար հնարաւոր միակ էլքը հարկադրական գոյակցութիւնն էր: Չարենցը օտար կամ գրեւէ մարդ չէր խորհրդային վարչակարգի համար: Նա իր ժամանակ միանգամայն անկեղծօրէն մեծ յոյսեր էր կապել նորահաստատ իշխանութեան հետ եւ, յամենայն դէպս, հակառակորդ չէր նրան: Բայց անկեղծ հաստատ տարբեր բան էր, իսկ դառն իրականութիւնը բոլորովին այլ բան:

«Չարենցի «Գիտի՛ր ՉԱՆԱՊԱՐԱՆՆԵՐ Ժողովարանն այդ բախման ու գաղափարական գոյակցութեան ցայտուն փաստաթուղթն է: Եւ առհասարակ այդ ժամանակ Չարենցի ստեղծագործութիւնը աւելի է՝ ամփոփուում ինքն իր մէջ, խտանում, ներքնապէս ճիւղաւորում, զար-

տուղի արտայայտածիւրի ձգտում: Հողեկան արտաշնչման ուղիների որոնումը յաւելեալ կարգով դառնում է ներազգայն մասնազոտութիւններից մէկը: Ձեւական ու կական, նորաստեղծ կամ յարութիւն առած արտասովոր արտայայտածիւրը այնքան քնորոշ են Չարենցի այդ շրջանի երկերին, որ առաջին հայեացքից թոււմ է, թէ այդ բոլորը միայն նրա դիտերն են եւ նրանից առաջ կամ նրանից բացի ոչ ոք չի դիմել այդ «բմաշան» միջոցներին: Կասկած չկայ, որ Չարենցը այդ ուղին է ընտրել ոչ թէ սոսկ իր վերջի հարտարութիւնը փորձելու, իրեն եւ ուրիշներին զարմացնելու անլուրջ նպատակով, այլ հարկադրաբար, իրերի ճնշման տակ: Հարկաւոր էր ամէն զնով ստեղծագործել, իսկ դա հնարաւոր էր միայն առաւելագոյն գրական հնարամտութեան պայմաններում:

Չարենցը շատ էր զգում արուեստի ասպարէզում առօրեայ ճշմտութիւնից բարձր մնալու եւ դարերի հետ շարժւելու, իր իօսքը անպայման դարերին հասցրելու պահանջը:

Դու գիտես, որ քա մատնանք այս վերջին Ո՛չ թէ օրերի համար ես գրել, Այլ տարիների՝ հետախայ ու ջիւղ, Եւ գուցէ, անգամ, դարերի՝ ճարեկ: - Քանզի քո դարում ի՛նչ որ կար գգաւտ, Եւ յուզումնաւոր, ե՛ւ յարունկ, ե՛ւ վեհ, - Դրել ես անմեռ մատնանք քո այս - Եւ այ՛ս է քեզ քափ օւ բարձր ունի: -

Չարենցն ինչի՞ մասին է, որ ուզում էր յատկապէս խօսել դարերի հետ:

ինչ ունեցել է ժողովուրդը քն  
 Հնում, անցելուով — լուսուար ու վեհ,  
 Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ —  
 Ո՛վքը հաւաքել եւ քեզ է տուել: —  
 Տուել է, որ դու այդ ամէնը այս  
 Օրերին խոսնած, խոր հարատեւ լի՝  
 Պարզես զալիքի ցնորքին ամհաս —  
 Եւ բնդսի՛շտ մնաս մեծ ու սիրելի: —

Հակառակ ամէն տեսակ տեսանելի  
 ու անտեսանելի խոչընդոտներին, Ձա-  
 րենցը խորապէս համոզուած էք, որ  
 Ըշտարտութեանը իսկապէս հետամուտ  
 բանաստեղծը ի վիճակի է համապատաս-  
 խան միջոցներ գտնելու՝ այդ նպատա-  
 կին հասնելու համար, քանզի՝

Ձի՛ շքաշաւտի մարդու ոգին ո՛չ մի  
 կապով արտաքին,  
 Եթէ զարի, ժամանակի գրուի ունի իր  
 հագին.  
 Կը բարձրամայ ու կը կանգնի նա  
 հաւատով անասան  
 Եւ կը մնայ գալիք կեանքում՝  
 անխորտակ ու անհազին:

Քարենցը չէր կարող չիմանալ, սա-  
 կա՞ն, որ զարի ու ժամանակի գրահ ու-  
 նենալ զնա ամենարոյժ երաշխիք չէ, որ-  
 ւո՞քսի բոլոր յղացումները մարմնաւոր-  
 ւեն ու վալիքին յղուեն: Ամէն դէպքում  
 էլ բանաստեղծը ոտիպուած է ինքում  
 գեղէն իր ստեղծելիքը, քանզի՝

Խոհն անդադրում է կուտակում,  
 անկշռելի ու անոնս,  
 Ձի՛ Երբարկտի նա հսկումի, որքան էլ  
 հուճը բանոնս. —  
 Բայց ինչքան էլ յախուռն զգաս,  
 դու կուտակումը ոգուդ —  
 Տրփորիք փերէք հնծնիս պէտք է դու  
 Ենդ կտրկանդես: —

Խնհականութիւնը, որն արտայայ-  
 տուել է Ձարենցի ստեղծագործութեան  
 տարբեր դրոշմում տարբեր բարեխառ-  
 նութեամբ, «ԷՊԻՔԱԿԱՆ ԱՌԱՒՈՏԻ»  
 զարթոնքից յետոյ «ԳԻՐԻՔ ԱՆՆԱՊԱՐ ՀԻ»  
 ժողովածուում ու հետագայում զստ-  
 նում է մի տեսակ ներքին հանդիմանակ:  
 Նա տուած էր ինքն կրկն՝

Այգը բացուեց աշխարհում, երբ դեռ  
 Գերբող էիր լուկ, —  
 Այժմ կէսօր է արդէն, — ժա՛մ է դառնաս  
 իմաստում: —  
 Նա դիտակցում էր նաեւ կենսա-  
 փորձի, արտաքին ազդակների դերը,  
 Երբ դրում էր՝  
 Ո՛վ միամիտ երգիչնե՛ր, որ կարծում  
 էիք, թէ դո՛ւք էք  
 Մեր կեանքում ուղիներ հարթում, —  
 Երբ կեանքն էր ձեզ տաշում  
 ու հարթում: —

Ձարենցը իր դեպքում անտա-  
 փոյական խորհրդածութիւնների ըն-  
 քանցում անդադրում էր նաեւ զբա-  
 կան ստեղծագործութեան երկարա-  
 կենսութեան, մշայունի եւ անցաւորի,  
 յարեթութեան եւ անհատի կենսից յա-  
 ռարեթակցութեան հարցերին: Ո՞նհար-  
 նութեան իմաստութիւնը, զիբնապէս,  
 մտայնի էր զառնում նաեւ նրան: —

Ով կամենում է, որ իր ծնունդից  
 սկսուի այս կեանքը —  
 Թող իմանայ, որ իր հետ — այն  
 կը մեռնի առշաւտ: —

Կամ՝  
 Հա՛ւ իմացիր, որ եթէ դու ազգում ես մի  
 օր չտուել —  
 Քեզ լուկ օգուկ համարիր, — եւ ո՛չ թէ  
 սիկոր կամ վախճան: —

Կամ էլ՝  
 Դարը մեզ մուրհակ է տալիս, — բայց  
 այդ փակ մուրհակի հատուցումը  
 Խերունդն՝նն են ճշդում ապագայ — Եւ  
 շատե՛րն են սնանկ հոշակուում: :

Պայտնով, քնարի եւ դարի բախու-  
 մը Ձարենցի ստեղծագործութեան մէջ,  
 դրոշմիւն ունեցող պտղամշակում, մե-  
 ծաղղորդ ու բացայայտ հակամարտու-  
 թիւն շղարձու, այլ շունչեց պարզ ու  
 անհատ գոյակցութեան: Ձարենցը ար-  
 տաքին՝ ուրիշներէ կողմից պարտազրա-  
 ղար հրամայուող նախադրւածները քողից  
 եւ անդատնախօրէն դեմուկից իր միակ՝  
 ներքին նախադրուող, ըստ աջնի էլ մշո-  
 կիտով ճնամարտութեան կոտորեններն ու



թանալու ուղղակի եւ անուղղակի կող-  
էր, սեփական տոկուն արժէքներ ստեղ-  
նելու յորդոր եւ վերին աղբարարութիւն  
գալիքի անունից: Այս ենթադրութիւնը  
ինքնաբերաբար համարձակ է դառնում,  
երբ բուհասարակ աչքի առջեւ ենք բե-  
րում նոյն գրքի նաեւ միւս երկերը: Նոյն  
վարձուներն է ցուցաբերում Չարենցը, օ-  
րինակ, նաեւ «Վասունցի Դաւիթը» պոէ-  
մում: Նա յատուկ միտումնաւորութեամբ  
ծաղրում ու խարանում է ամէն մի թէ-  
կուղ շափաւոր հաշտուողականութիւն օ-  
տար ուժերի չեւոյ, խտացնելով գոյնները  
եւ շափազանցելով շատ բան: Նշանա-  
կում է, Չարենցը հետեւողականորէն ո-  
րոշ դիժ էր առաջ տանում՝ նաեւ այդ՝  
ազգային կեանքի ու պատմութեան դե-  
նահատման հարցում: Իսկ թէ նա ինչու  
էր խօսքը տեղ հասցնելու կողմնակի ու-  
ղիների դիմում՝ դա էլ հասկանալի է:  
Չարենցը երեւի հաւատում էր, որ ապա-  
պայում, վաղ թէ ուշ, «հասկացողը կը  
հասկանայ...»:

Յ.

Չարենցի բեղուն եւ ուսանելի ստեղ-  
ծագործական ուղին այժմ, նրա եղբրա-  
կան մահից դրեթէ երեսուն տարի անց,  
զնահատում եւ ուսումնասիրում է մի  
քիչ այլ դիրքերից, քան նրա ողբութեան  
օրօք: Նա այն դէմքերից է, որի մասին  
ամէն մի սերունդ անպայման ասելիք  
կ'ունենայ: Եւ ամէն մարդ էլ իր կեան-  
քում թերեւս կարող է նրա նկատմամբ  
մի քանի անգամ կարծիք փոխել՝ ըստ իր  
հոսունութեան աստիճանի եւ կենսափոր-  
ձի: Չարենցը ներկայումս է նաեւ ոչ  
միայն որպէս պատմական արտասովոր  
ցայտուն երեսնամե, ահազեմիական խո-  
րագներն քննութեան հետաքրքիր նիւթ,  
այլեւ որպէս մշտասեւ մարդկային ներ-  
կայութիւն: Նա ստեղծագործողու եւ  
վարի բիրտ ուժի բախմուն կենդանի գը-  
կայութիւն է իր երկերով: Եւ քանի որ,  
անկուսակած, ապատութեան սէրն ու բո-  
ստեղծագործողու խոյանքները, ուղում  
ենք հաւատալ, ապրող մարդուն ուղեկ-

ցելու են միշտ, դարեր շարունակ, իսկ  
բունութեան ուժերը իրենց հերթին չեն  
զինաթափուելու մոգական զաւազանի  
չնորհիւ, - ուրեմն անհրաժեշտաբար կա-  
րիք է զգացուելու ժամանակ առ ժամա-  
նակ դիմել անցեալին, վերստին ծանօ-  
թանալ արժէքների պայքարի հոգեբա-  
նական սկզբունքներին:

Թերեւս Չարենցից առաջ եւ նրա օ-  
րօք բազմահազար այլեւայլ մարդիկ ու-  
նեցել են նոյն մտորումները, խոհերը,  
զիւցումները, յանպէլ նոյն կարողացու-  
թիւնները: Բայց գործնական առումով  
դրանք այլեւս նշանակութիւն չեն կարող  
ունենալ այժմ կամ երբեւէ: Մինչդեռ  
Չարենցի ինամքով փաստագրուած ըս-  
տեղծագործութիւնը թէ միակտուր բա-  
նաստեղծական անհատականութեան կեն-  
սագրութիւն է եւ թէ իր ժամանակի ի-  
րադարձութիւնների, տրամադրութիւն-  
ների ու մտահոգութիւնների խտացում  
արտացոլում, հաւաստի վաւերաթուղթ:  
Չարենցը ինքը ստեղծագործել է եւ այդ  
ստեղծագործութեան զնահատումը թո-  
ղել ուրիշներին: Բայց նա էլ չի ստեղ-  
ծագործել հենց այնպէս կուրօրէն, այլ  
չիտակցել է իր խօսքի ու գործի նշանա-  
կութիւնը, գեղը եւ արժանիքը: Նա իրեն  
անսխալական չի համարել:—

Ի հարկի, ունեմ մեղքեր ես,  
Ուրանալմ այդ - անշուշտ անհեթեթ է, -  
Բայց գիտեմ, որ քեքեւ եմ մեղքերս,  
Գնագի ես - պոէ'տ եմ:

Թէ ով ինչպէս է հասկանում այդ  
«մեղքերը»՝ դա տարբեր հարց է: Բայց  
չբազան երկերի արժէքը դարի յարու-  
ցած զժուարտութիւններից անկախ որո-  
շելու ճիշդ ապարգիւն կը լինի, եթէ  
չհաւատանք Չարենցին, թէ՛

Իմ օրերում ես ցամկացայ յիմել վսեմ  
եւ իմֆնտրոյն,  
Իմ օրերում ես ցամկացայ կեանքս  
գոհել դրա սիրոյն:

Ու «յոեմ եւ ինքնուրոյն» լինելու  
համար «կեանքը զոհելու» այդ պատ-  
բաստականութիւնը սին պարծենկոտու-



Քիւն չէր Չարենցի մօտ, ինչպէս լինում է շատ դէպքերում: Պատմութիւնը աւելի բան յայտնի է: Չարենցին հասկանալու, համար կարդանք եւ նրա «Մոնումենտը»:

Ես մոնումենտ կանգնեցի ինձ ետմար  
դժուար մի դարում,  
Երբ կործանում էր իմ շուրջը  
այն ամէնը, որ բազմաթիւ  
Տարիներ, դարեր էր կանգնել - եւ  
ամմա՛հ էր քուտմ աշխարհում:  
Իմ մոնումենտն հիւսեցի երգերից  
ես խոր ու խորքիմ,  
Խոհերից, որ բարբ են ու ճար,  
որ կեանքն են կրում իրենց մէջ, -  
Որ յորգորելով բլթեցին իմ դարի  
բարբառնն սրտից:

Չարենցը ջանաց բանաստեղծական փերագնահատման ենթարկել պատմութիւնը եւ մանաւանդ հայ ազգային պատմութիւնը, անկախ իր ձեռք բերած արդիւնքներից, ամենայն էութեամբ արժանազան էր օրերի դրական կամ բացասական իրադարձութիւններին, շարժում, ստեղծագործական եռանդ եւ մշտնօրէն գործունէութիւն հրահրեց իր անիջական մշակութային միջավայրում, ինչպէս եւ իր անժամանակ խոհերի հրթիռները յղեց դէպի Ապագան, ապագայի մարդիկ: Չարենցի գործունէութիւնը ամէնից առաջ ոչեկան էր եւ մարդկային, Ոչ ու ստեղծագործական ասպարէզում նրա ձեռք բերած փորձառութիւնը, անտարակոյս, արժէք ունի Ոչ ու՝ առհասարակ բոլոր ժամանակների սպասաւորների համար: Բանաստեղծական եսի, քնարի եւ ապրած ժամանակի արտաքին կաշկանդիչ ուժերի փոխադարձ պայքարն ու գոյակցելու ամէն մի փորձ՝ միշտ էլ ինքնին ուշուգրաւ են ամէն տեսակէտից: Ինչո՞ւ Ոչին, այդ ուղին կրող անհատների մահուան դեմով անկամ, անձնատուր չի լինում, իսկ բըռնութեան ուժերն էլ երբեք չեն հրաժարում իրենց անարդ եւ մահացու զինքներից: Ահա՛ մի հարց, որ կախուած ենք տեսնում մարդկութեան պատմութեան

բոլոր հորիզոններից: Այդ հարցը ուրիշներին նման տուել է իրեն եւ Չարենցը շատ անգամ ու ըստ երեւոյթին պատասխանը գտել իր համար: Այդ ընդհանուր պատասխանի արտայայտութիւններից մէկը տեսնում ենք արուեստի ստեղծագործութեան մասին նրա ունեցած պատկերացման մէջ: «Եօթը խորհուրդ գալիքի երգասաններին» բանաստեղծութեան մէջ Չարենցը գրում էր, ի միջի այլոց, նաեւ հետեւեալը.

Եւ իմացե՛ք ուրեմն, որ ո՛չ մի  
աշխատանք  
Տֆնաջան չե՛ր այնքան, որքան գգու  
հերկը. -  
Ի սկզբանէ էր բանը, եւ բանն էր  
ճիգ ու ջանք,  
Եւ ցանքին աւրբքեր էր - երգը:  
. . . . .  
Եւ ասում եմ անա - ձե՛զ, որ պիտի  
երգե՛ք՝

Կարդալով մատնանմ այս  
խորախորհուրդ. -  
Խորհուրդ չի ընդունում ապագայի  
երգը, -  
Եւ ա՛յս է իմ խորհուրդը եօթերորդ. . .

Յայտնի է, որ Չարենցն իր ստեղծագործական կեանքի ընթացքում ատրիբեր ժամանակ տարբեր ձեւով է ընկալել աշխարհն ու կեանքը, մարդու ճակատագիրը, տարբեր լեզուով է արձայանել շրջապատի պահանջներին: Երբեմն էլ լատատեսութեամբ, երբեմն էլ լատատեսութեամբ: Երբեմն ամէն ինչ մատանել է պատմութեան օրինակափութիւններից՝ մայրամանակաւ արժանաւորների տնօրինութեան ու ողորմածութեանը, երբեմն էլ լիովին ընդունելի գոյութիւն ունեցող իրաքանչիւր անհատի ներքին ազատութեան անկասկածելի իրաւունքները, եւ այսպէս շարունակ: Նա էլ, անշուշտ, շատ-շատերի նըման ապրել է լուսաւոր յոյսերի խորտակ, կոտորած, մաշուած սաշտակի առջեւ գտնուելու դառնութիւնը, անցել հիասթափութեան բոլոր տառապագին փուլերից: Բայց դա չի նշանակում, թէ

Պարենցը ճանապարհ է քննիչ առանց անհրաժեշտ կենսափորձի, անպայման է սփռանակ լիովին ու միամտորհն հաւատացել է ամէն մի պատահական խտառձան ու պատրանքի: Հաւատն ու կատարածը միաժամանակ են ուղեկցել նրան: Պարենցը վերջին հաշուով դատը ճակատագիր ունեցաւ, բայց ո՞վ մտաւորապէս այդպիսի ճակատագիր չունեցաւ նրա դասակիցներէն եւ սերնդակիցներէն: Նա հաւանաբար սկզբից եւեթ ըզզում էր վերասերումների պոստնյիւզ վտանգը եւ ամբողջ հոգով դիմադրում, միաժամանակ հաւատարմորէն ընթանում էր ճանապարհով: Այլապէս անբացատրելի կը մնար նրա՝ ինքն իր դատաւորը լինելու մնայուն նախանձախնդրութիւնը:

Եղիշէ Պարենցի եւ խորհրդային ժամանակաշրջանում ապրող բոլոր սուրբ Պարենցների ողբերգութիւնը սոսկ ինչոր միամիտ յոյսերի խորտակման կենցաղային ողբերգութիւն չէր, այլ անհատի ողու ինքնամուկ ազատասիրութեան եւ մարդկային յոփադանց անկատար հասարակութեան մէջ տիրող խաւար ուժերի բախման արդիւնք, ստեղծագործող ոգու եւ իրիտ ուժի բազմազարեան պայքարի ժամանակակից արարելիցի մէկը: Պարենցը էր կեանքով ու զործով էր հերթին մի անպամ եւս վկայեց, որ ոչ մի այսպէս կոչուած դասակարգ կամ գլխիննան դարձ չի կարող յաւակնել, թէ ի վիճակի է արմատապէս փոխելու մարդու եւ պատմութեան օրէնքները, երաշխաւորելու մարդու երջանկութիւնը եւ խափանելու մարդատեսաց ակերի գրգռ, երբ հենց ինքն է ուրանում մարդկային ազատութեան ամենատարրական նախադրեալները: Եւ պատմութիւնը շարունակուած է նորանոր ձեւերով, բայց հին հունով: Ոչ ճակատագրի պարզեւ բանաստեղծը կարող է կամովին դռնել իր անհատականութիւնը, համամայնուել ոչ ու ճորտութեան, ոչ էր գէնցի ու շղթայի աէրերը կարող են իրենց հլու եւ գիտնատարած կամակատարներէրէր վաւերական բանաստեղծներ կերտել:

Պարենցը զրական իսկապէս հարուստ ժառանգութիւն թողեց, որովհետեւ մեանգամայն գիտակցօրէն չհրաժարուեց իր բանաստեղծական անհատականութիւնից եւ հաւատարիմ մնաց մարդու եւ թողու ազատութեան մշտադողանջ պատուիրաններին: Ասենք, իսկապէս ուժեղ անհատականութիւն ունեցող բանաստեղծը ոչ մի գնով չի հրաժարուի նրանից, կամաւոր անմատուր եղողները սովորաբար նրանք են լինում, ովքեր կամ զօրիկ են ձեւաւորուած անհատականութիւնից, կամ էլ անուանական ու թոյլ կապերով են առնչուում զանհատականութիւնն աւաւած արտաքուստ անտեսանելի, բայց վերին աստիճանի անսասան երեւոյթի հետ, ուստի եւ անգտանելի հարատութիւն կորցնելու այրող մտահոգութիւնը անձանօթ է նրանց: Նա իր երկերում էր ժամանակի շունչը դրեց այն չափով, որքան որ դա ամբողջովին չէր վերացընում կեանքը իւրովի ընկալելու էր ազատութիւնը: Իսկ օրուայ տէրերի շունչը նա ջանաց ըստ հնարաւորին անտեսել ու շրջանցել՝ հասունութեան շրջանում անհրաժեշտաբար եւ հաւատարմօրէն կատարելով հարազատ հայրենական արժէքներին: Բաւական է որ Պարենցը նրկատելի չափով հրաժարուէր իրենից ու ամբողջովին կամ մեծ մասամբ բնական տէրերի շունչը արտայայտէր՝ նա, անտարակոյս, կը դառնար արգահատելի թէ էր եւ թէ ներկայ ու գալիք գիտակից սերունդների աչքում: Բարեբախտաբար այդ բանը տեղի չունեցաւ, թէեւ շատ ծանր գնով, բայց դրա փոխարէն Պարենցը մնաց, որպէս սիրոյ եւ հպարտութեան կենդանի յուշարձաններից մէկը՝ Հայրց պատմական երթի մեծ ճանապարհի վրայ, յեւելեայն կամ բարձրամայն խօսելով շարեշար անցնող սերունդների հետ, նրանց պատմելով էր եւ իր ժամանակի մասին:

(Շար. 3 եւ վերջ)

Լ. Մ.

11-2-1966 թ.

# ՖՐԱՆՑ ԲԱՓՔԱ



Մեր ժամանակի մեծագույն գրագէտներէն մէկը, անկասկած նաեւ՝ ամէնէն մտահոյիչը... Իր կեանքին տեւողութեան Քաֆքա հարուստէր էր և շնչին վարձատրութիւններ միայն ունեցած է, թէև իր բարեկամներէն ոմանք բաշխաբար չեն նկատած են դինք հանճար մը: Իր համարը յիս մահու է:

Իրեն համար գրելը իրերու երևութական ձեւերէն անդին թափանցելու կերպ մըն էր, անծանօթին մտանալու եղանակ մը: Մահէն առաջ, փափաք յայտնէր, որ իր բոլոր ձեռագրերէն իր՝ Տայուին, բայց բարեկամը՝ Մաքս Պրբոտ, որուն մտահան էր այդ պարտականութիւնը, չզօրեցրէր զայն: Այսպիսով փրկուեցան իր անուարտ մեծ վէպերը՝ «Եղիակը», «Իստավարութիւնը», «Ամերիկացին», որոնք լոյս աշխարհ բերին «Քաֆքա երեւոյթը»: Ողջութեան գրագէտը հրատարակած էր սակայն երկար նորավէպ մը՝ «Այլախոյանութիւնը», շատուցիչ պատմութիւնը մարդու մը, որ առաւուտ մը կ'արթննայ ողբալի միջատի մը վերածուած: Քաֆքա իր անծանօթութիւնները ստացած էր անբուժելի հիւանդութենէ մը, զոր իր մէջ կը կրէր և որ իրեն կու տար մարդոց մէջ օտարական մը ըլլալու զգացումը:

Երազական հանգիստներուն մէջ՝ յաճախ կը կարդամք գրական մեծահայտի դեմքերու նուիրուած գրութիւններ, որոնք ոչ կենսագրական չոր տեղեկութիւններու պարզ ամփոփումներ են, ոչ ծառայում վերլուծումներ և ոչ ալ ենթակային վերջնական արձեւումներ ընելու յաւակնութեամբ գրուած էջեր: Աւագ գիծեր մէկտեղելու եիմնական արժանիքով մը կը ներկայանան ամո՞ք, ինչպէս է պարզանք Քաֆքայի մասին կազմած մեր աշխատակիցին հետեւեալ համադրութիւնը:

Երազական հանգիստներուն օրինակով՝ մեծերուն նուիրուած գրութիւններ պարբերաբար պիտի ներկայացնենք «Բազմ» մէջ, այն համազումով, որ ամո՞ք պիտի կատարեն յուշարարի կենսական դեր մը...

## ՍԻԱԼ ԱՌԱՍՊՈՒՄՆԵՐ

Փրանց Քաֆքա մէկն էր անոնցմէ, որոնք կարծես ծնած են այրող կոշտամի մը համար: Ինչ որ գրականութիւն չէր, այն բացարձակ իմաստով զոր ինք կը հասկնար, չէր հետաքրքրէր զինք: «Ճակատագիրս շատ պարզ է, - ըսաւ օր մը... Իմ երազի կեանքս, ճիշդին կեանքս նկարագրելու ընդունակութիւնը երկրորդական գծի վրայ նետեց ամբէն ինչ և գոյն տեսար կերպով սպաննեց մէջս»:



զբառանքալից՝ պատմականներ, որոնք, ասանց իսկական՝ համարև մը տպանովը լու, պինք վանքընեն բարեկամներու սահմանափակ շրջանակի մը մէջը:

Այդ միջոցին, զարտաքար կ'աշխատի Կրեք միջոցառում վրայ (Երզնակը, Երասխայաբարձրը, Երասխայ) զորա երբեք պիտի չվերջացնէ: Բայց իրական նախնանք մէջ աջ զիրքերը եզրակացութեան պէտք չունին: Անոնք կը դնեն մարդկային ճակատագրին ինդիքը, որ, բոլոր Բաքրայի ըմբռնածին, լուծում չունի:

Այդ երեք վէպերուն հերոսը ինքը հեղինակն է: «Երասխայ» մէջ, մասն է մորթին մէջ երիտասարդի մը, որ կը փնտայնուի իրմէ խուսափող հարստութեան մը: «Երզնակ» մէջ կ'ապրէ ոչ նուազ անիրական հողագործ մը, ոմն Ք. Կր. զոր կը սպասէ զործի կոչուիլ, խորհրդաւոր զգեստի մը մէջ: Վերջապէս, «Երասխայ» մէջ կը մտնենք տանջաւոր անձը երիտասարդի մը, որ ինքզինք սմայտանաւոր կը զգայ յանցանքով մը, որուն էութիւնը ոչ ոք չի վիճակի է ճշտելու: Ընտանիքները ալ, որ Բաքրայ իր վրայ ծանրանալով կը զգայ մեկ յանցանք, այն՝ իր կը հոյժէ՝ «Ապրիլու մեղքը»: Զրկուած հասարակ մը, որ պիտի կարողանայ յուսաւորել իր ճամբան՝ Բաքրայի սիրտը կը խաբարէ անոյս անձկութեան մը զանաթով:

**ՅԵՏ ՄԱՀՈՒՄ ՓՆԱՌՔԸ**

Յրանց Բաքրայ մեռաւ 1924-ին) 41 տարեկան հասակին, պարտուած թռչախառնէ, Քիւրքիսի թուժարանին մէջ, վիճակ նայի մտ: Մարմինը կը փոխադրեն Փրփրայի եւ քաղաքական լուսնի մը կ'իջնէ իր կենսական եւ գործին վրայ: Միայն քանի մը յարեկամներ կը յիշեն զինք, սկստելով թէ՛ շատ քիչ գրած է: Ամէն ոք կ'անգիտանայ իր յուսովները՝ կարծուր ձեռագիրներն, զորն վստահած էր Մաքրայի մը: Կենսագրութիւն համար:

Ի վերջոյ ինչ որ կը վերաբերի Բաքրային՝ խորհրդաւոր է: Իր յետ մահու

համարը, զանդազ հասունացումէ մը ետք, զիր պայթիչ երկրորդ աշխարհամարտէն ետք միայն:

Արդարեւ, նացիները, մտնելով Փրփրայի անոր տունը, կրակի տուած էին հոն գտնուող ձեռագիրներուն ամբողջութիւնը: Անոր անունը ջնջածիս գործի ման գրականութեան զիրքերէն եւ ոչ ոք իրատուք ունէր ակնարկութիւն մը ընելու Բաքրային:

Եւ սակայն, անկարելի է ինդիքել եւ ամբողջովին քանդել զործը մարդու մը, որ գիտցաւ ձայն մը տալ մարդկութեան անդունդներին: Այդ պատճառով ալ, այսպէս ըսելով՝ Ծրանց Բաքրայ կը վերածնի վերջին պատերազմին մտիքներէն: Անոր անաւարտ մեծ վէպերը այսօր լոյս աշխարհ եկած են: Անկեղծ վկայութիւնները արդիական հոգիի մը՝ անոնք մեր գարուն անձկութեան ձեռագրերը ու յուսահատ հայելին են:

**ԳՈՐԾԻՆ ԱՐՓԵՔԸ**

Բաքրայի զիրքերուն մասին կարծի չէ յստակ ամփոփում մը տալ: Արժէքը կ'ընթացնէ մէջ չէլ այդ միջոցներին: Բաքրայ իր սեփական գաղափարները կ'ընէ, ինչպէս նաեւ կենսական: Անգաղար կը հարցնէ՝ Ինչո՞ւ ծնիլ: Ինչո՞ւ մեռիլ: Անդեական մը կա՞յ: Իր զործերուն մէջ, անձերը կ'ապրին անհեթեթ, անհամարժեք եւ սակայն տարբերակներէն իրական միջոցաւոր մը մէջ: Այս պատճառով ալ, այսօր, Բաքրայայական կը կոչուի ինչ որ սեղի կ'ունենայ խորհրդաւոր կերպով, ու մենք չենք կրնար այդ կատարուածին պատճառ սահմանել:

Բաքրայական հերոսը կարծէք պարտաւորուած է սպերտ ամբողջ մը ինչորտի մը ու մտքին մէջ: Զի գիտեր թէ ինչո՞ւ հոն գրուած է, չի գիտեր թէ ե՞րբ պիտի ելլէ: Կը տապալակի, կը պոռայ, բայց ոչ ոք կը պատասխանէ եւ իր անձկութիւնը կը մեծնայ, Եւ սակայն, «Յուսին քանստեղծը» խորապէս համոզուած էր անքանդելի բանի մը գոյութեան:

S. Ո.

**ԱՆՀԵՏԱՑՈՂ  
ԴԷՄՔԵՐ**

Այս տարի, Թայբիսի, երկու մեծարժէք ար-  
ւեստագետներ կարճացուց հայ իրականութիւնը,  
սէկը ճայնի ու գաղնակաւ քննարկեց, միւ-  
սը՝ գոյնի ու խորհուրդի բանաստեղծ:

Բարձրագ Կանաչեան, Յարութիւն կայեց:  
Առաջինը Սփիւռքի մէջ յայտնուեցաւ, յայտ-  
նագործեց ու մեռաւ Սփիւռքի մէջ, իսկ երկ-  
րորդը, Յոյն պայմաններուն ծնունդ քէնէ, բայց,  
երկուստարգութեան, հաստատուեցաւ Հայաստան,  
ստեղծագործեց հոն, ու մեռաւ հայրենի հողին  
վրայ:

Բայտաւոր Էզան ու դժբախտ, երկուքն ալ:  
Բարձրագ Կանաչեան բայտաւոր էր, որ Լա-  
հայրենի հողին վրայ մեռաւ, ու դժբախտ՝ որ  
օտար հողի վրայ մեռաւ:

Կայեց, ընդհակառակն, բայտաւոր էր, ոչ  
հայրենի հողին վրայ մեռաւ, ու դժբախտ՝ որ  
հաստատութեան տարիքին չհասաւ:

Թե՛ Կանաչեան, քե՛ր Կայեց ապրած էին ա-  
յնուտանայտութեան վիճակուած ոգերգութիւնը,  
սուգ կառ իրենց հոգիներուն մէջ, ճանտակ-  
ւած ընկերներու, ծնողներու, ազգի՛ն սուգը կար,  
կեանքին մէջ Բայեցին այս մղձաւակը, միմակ-  
որութեան վիշտով, բայց օրէնք է, ու մտեր,  
իրենց սնունդներուն հով, տնգամ մը նս պայ-  
տըցաւ, սպրեցան, մնացորդացը սպրեցուցին  
երգով, գոյնով, դարբերէն նկատ ձայներուն ա-  
կունքները պեղելով, դարբերու ընթացքին գեղին  
մուսնած գոյներուն հետ Օտարացուցի ինկող սրբ-  
օտարով երանգներով:

**ԲԱՂՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ**



**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԵՆՅ**

Բարձրագ Կանաչեան շարունակ յիշուեցաւ  
մեծն Կոմիտասի հետ, բայց վարպետին վարկը  
չմտնեց, իր օտեղծագործութիւններով ու ծաւա-  
լած երաժշտական գործունէութեամբ արդար  
համբաւի մը տէրն էր արդէն: Վաստակաւոր ու  
վաստակած մարդ մըն էր, երբ մեկնեցաւ, այդ-  
պէս չեղաւ, սակայն, Կայեցի պարագան: Կա-  
լեց, Հայրենիքի մէջ, ապրեցաւ երկրորդ ար-  
քայրիւն մը, յոյսերով եւ լուռ ոգրերգութեան  
երկարատեւ շրջան մը, ու մի՛շտ այն ատեն, երբ  
լի օճը պարտադրել սկսաւ, մտեր տարաւ նայ-  
կին որքէ, սուգի մատնելով իր օտեղծութիւնն ու  
անհատականութեան մասին մեծ համարում ա-  
նեցող հազարաւոր քե՛ր հայ եւ քէ օտար անձեր:

Հետագայ էջերուն կաւ տամք իրենց արտե-  
տին մուրրուած քանի մը ուղագրաւ վերաբերմ-  
նք:

## ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆԻ

### ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ

... 1908-ին Սահմանադրութիւն հրո-  
չակուած է Թուրքիոյ մէջ. շատերու պէս  
Կանաչեան Պուշկարիայէն Իսթանպուլ կը  
փութայ: Շատ երիտասարդ երաժիշտ է  
և Իսթանպուլի թաղերէն մէկուն մէջ  
ճանճառի կամ արմնիկ խումբ կը կազ-  
մէ: Այս «պարագան» զրեւ կու տայ Ի-  
րին փողերու եւ փայտափողերու համար  
Պարզ մը կտորներ - իտալական ոճով -  
որոնցմէ կը հրատարակուի «Մասիս  
Վարդ»: Բայց, արդէն համ մը կայ իր  
յօրինած մետոիի էլեւէջին մէջ:

Յետոյ պիտի ճանչնայ Մեծ Վարդա-  
պետը, երեք տարիով աչակերտելու հա-  
մար անոր, բացուելու՝ անով հայ երա-  
ժշտութեան Ոգւոյն ու կազմելու այս-  
պէս իր ճաշակը եւ իտէայը: Մեծ Պա-  
տերազմի աւարտումին, երբ Վարդապե-  
տը հիւանդացած է ու կը մեկնի Իսթան-  
պուլէն, Կանաչեան կը վերադառնայ  
Հոն՝ քայլերով մը հետք բերած: Կոմի-  
տտոի Հինգ սաները պիտի միանան եւ  
Իսթանպուլի մէջ երգչախումբերու սար-  
քաւորման եւ համերգներու կազմակեր-  
պութեան պիտի ձեռնարկեն մեծ խան-  
զով, ինչպէս երաժշտական Հրատարա-  
կութեան մը, «Հայ Գուսան»ի տետրակ-  
ներուն: Այս պարագան պիտի մղէ Կա-  
նաչեանը Իսթանպուլի մէջ վազուց ի վեր  
երգուած զազգային երգերը՝ դաշնաւո-  
րելու եւ հրատարակելու: Նախապէս  
տարիներով երգած էր Կոմիտասի մեծ  
խումբին մէջ ու Վարդապետին ալ ու-  
սուցումով սերտօրէն մտերմացած խմբ-  
բերպական բազմաձայնութեան արուես-  
տին: Այդպէսով իր այդ դաշնաւորում-  
ները կը յատկանշուին փայլուն, առողջ  
լստ պարագային ալ քաղցր հնչողու-  
թեամբ մը. անոնց գործադրութիւնը,  
ինչպէս անոնց ոճին մէջ կողով իր ծանօթ

քայլերով ժողովրդական յաջողութիւն  
կը գտնէ Իսթանպուլի մէջ՝ այն ատեն  
իր ընկերներուն հետ տուած համերգնե-  
րուն: Այս շարքին մէջ ու այս առիթով  
զաշնաւորած է «Բամ, փութսամ», «Մնիլ  
Հայրեմիէ», «Էլուսին չկար», «Յատազ  
ընթանան», «Նա լսեցի մի անուշ ձայն»,  
«Ահա ելալ լուսին», «Միծեռնակ» երգե-  
րը:

Ուրիշ «պարագայ»: Տարիներ ետք,  
Կանաչեան երաժշտութեան ուսուցիչ կ'ըլ-  
լայ Կիւպրոսի Մելլոնեան Հաստատու-  
թեան մէջ, ինչպէս աւելի վերջ պիտի  
ըլլար Պէյրութի Հայ Ճեմարանի եւ Ս.  
Նշանի մէջ. մանկական դաստարաններու  
ուսուցչուհիներ իրմէ կ'ուզեն մանուկ-  
ներու համար կամ փոքր տղոց՝ երգեր:  
Բարի երաժիշտ է Կանաչեան ու կը սիրէ  
ալ փոքրերը. ու կը զրէ սիրուն շարք մը  
մանկական երգերու, թիւով 13, որոնք  
փոքր տղոց հասկնալի են եւ ճաշակաւոր  
ալ սակտն իրենց պարզ ներդաշնակու-  
թեամբ ու աւելին՝ սահմիկ ոճով:

Ունինք յետոյ շարքը Բարեղ Կա-  
նաչեանի յօրինած մեներգներուն, ճա-  
շակով յարգարուած, «լու գրուած»  
դաշնակի ընկերակցութեամբ շրջանակ-  
ւած բոլորն ալ: Այս մեներգները եւս  
ծնած են պարագաներէ, բայց ասոնք  
թերեւ զուտ երաժշտական գործա-  
դրութեան մը պարագաները՝ ըլլան:  
Այս շարքին զլուին է - բացառապէս  
խումբի ընկերակցութեամբ - համբաւա-  
ւոր «Օրօք»- քիչ մը սլաւական ոճի մը  
մէջ - թէեւ բանաստեղծութեամբ տոհ-  
միկ - այս մեղեդին քաղցրօրէն հիւս-  
ւած՝ սրտատուշ շեշտ մը ունի: Պարզ ու  
յուսպ, բայց խորէն թախածաղին զգացու-  
մով բանուած եւ ասացական ոճով երգ  
է «Ուռեմի», Թումանեանի Հեքիաթին







Գրականության մասին հարցազրույցից հետո  
 ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ  
 (1889 - 1967)

### ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ

Երբ լսում ես Կանաչեանի հմայիչ մեղեդիները, որոնք յուզում են, գրտում, կեբոյարներ եւ ապրումներ են արթնացնում ունկնդրի մէջ, քեզից անկախ՝ աչքերիդ առջեւ կանկնում են հայրենի լեռների հպարտ բարձունքները, լսում ես առուակների խոխոջը, գլում ծաղիկների, անտասների, դաշտերի բոյրը... Դու հայ երգն է հնչում՝ հարագատ ու մօտիկ, ինքնախոյ ու գեղեցիկ, բայց եւ տխուր երանգով, թախիժ կտպոյտը վրան, որովհետեւ ստեղծուել է հայրենիքից հետո...

Կանաչեանի մանկութեան տարիներին առաջին տպաւորութիւններից մէկը կապուած է 1895 թ. ծանր ժամանակահատուածի հետ, երբ թողնելով ամէն ինչ, նրանց ընտանիքն ստիպուած էր հեռանալ Կոստանդնուպոլսից եւ գոխարուել Պուլկարիա: Այն ժամանակ Բարսեղ Կանաչեանը 10 տարեկան էր: Եւ միայն նոր տեղում հնարաւոր դարձաւ լրջօրէն դադարուել երաժշտութեամբ: Զութակի առաջին դասաւանդ եղաւ Կանաչեանի Բէկ-Ամիրխանեանը՝ մի շատ զարգացած երաժիշտ, որ աւարտել էր Պերլինի երաժշտանոցը եւ միաժամանակ Ղութակահար էր, դաշնակահար, երգահան եւ երգահոնահար: Կանաչեանի պատմածով՝ նա մեծ դեր է խաղացել Պուլկարիայի մշակոյթի զարգացման, պուլկարական օրերայի հիմնադրման գործում:

Բէկ-Ամիրխանեանի մօտ չորս տարի յաջողութեամբ պարապելուց յետոյ, Կանաչեանն իր ուժերը փորձում է բեմում: Առաջին իսկ ելոյթներն ամենաջերմ արձագանգն են գտնում. նրան անմիջապէս առաջարկում են համերգներով շրջել Պուլկարիայի զուղաքներում եւ ապա՝ Ռումանիայում: Որպէս Ղութա-



Բ. Կանաչեան եւ Ա. Տիցիկեան, Պաղատա, 1963

կահար էլ նա սկսում է իր ստեղծագործական ուղին:

Երբ առաջին անգամ արխիւային փաստաթղթերում եւ հանդիպեցի Կանաչեանի ազգանունը, նրա ելոյթների յիշատակութեանը, ինձ, որպէս Ղութակահարի, ամէնից շատ հետաքրքրեց նրա գործունէութեան այդ կողմը: Մակայն սեղեկութիւնները շատ ազգատ էին: Մտազուած Ղութակահարների անունների առաջին հրապարակման մէջ եւ մի քանի տողով յիշատակեցի եւ նրա մասին: Ի հարկէ, այն ժամանակ չէի կարող ենթադրել, որ շատ տարիներ յետոյ Պաղատաում կը հանդիպեմ նրան, եւ ինքը կը լրացնի իր կենսադրութիւնը: Ծատ բան եւ իմացայ նրա պատմածներէց, նրա մասին գրուած գրքից, բազմաթիւ յօդուածներից ու գրախօսու-

թիւններէն, ի՞նչ բազմակողմանի երաժիշտ է: Նա ոչ միայն ջութակահար է, այլև դաշնակահար, երգահան, երգչախմբի ղեկավար, խոշորագոյն մեծութիւն՝ երաժշտական երկնակամարում, Լիբանանի եւ Ֆրանսական ակադեմիայի բարձրագոյն շքանշաններէ ասպետ: Յտմտ աշխատանքն ու կատարելագործումն են նորոն հասցրել այդ վարպետութեանը: Այդ բանում նրան օգնել են փորձ Բույուլը Ռումանիայում, Կոմիտազը՝ Կոստանդնուպոլսում եւ Ռենէ Լէ Նորմանը՝ Փարիզում:

Իւրաքանչիւր դասատու նրան իւրօրի էր անախտաբար ոգնել երաժշտութեան դեղեցկութիւններէ անսահմանափակ արտայայտչականութիւնը: Քայլ առ քայլ նա տիրապետեց վարպետութեան միջոցներին՝ ստեղծելով տարբեր ժանրերի ստեղծագործութիւններ, այդ թւում նաեւ օրերս: Բայց, հաւանաբար, ամէնից շատ նրան սիրուած էին մարդկային ձայնի հրանալի յատկութիւնները, այդ ձայնի տարբեր տեմպերի ներդաշնակումը, հնչման ջերմութիւնն ու յուզականութիւնը: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ նրա ստեղծագործութեան մէջ (50 անունից աւելի գործեր) լաւագոյնները կարելի է համարել նրանք, որոնց մէջ հնչում է մարդկային ձայնը:

Երգեցիկ խմբի համար դրած նրա գործերն իսկական գոհարներ են: Դրանց մէջ Բ. Կանաչեանը լայնօրէն օգտագործում է հայկական նաեւ պարսկական, լիբանանեան, սուրիական ժողովրդական երգը: Այդ հիմքի վրայ են ստեղծուած նրա երգչախմբային գունեղ կտաւները՝ «Շոյ Նար», «Շուլօ», «Տալիս», «Ռորոցային», «Այա գալ ունա», «Նարօ ջան», «Դարակ-դարակ», «Գուրանի», «Նանոր» եւ շատ ուրիշներ:

Երգի միջոցով մարդկային սրտին դիմելու ճանապարհը Բ. Կանաչեանի արձեւած քայլից Կոմիտազը: Երիտասարդ, այն ժամանակ սկսնակ երգահանին, որ դեռեւս գրում էր արեւմտա-եւրոպական հեղինակների ոճով, Կոմիտազը

ցոյց տուեց հայ երաժշտութեան հմայքը, սովորեցրեց սիրել եւ գնահատել հայ երգը: Կանաչեանը ժողովից շփուեց Կոմիտազի հետ, սովորեց նրանից: Մինչեւ հիմա էլ նա իր հոգում պահել է մեծ Կոմիտասի կերպարի ընդ որ մանրամասները: Պաղտատում մեր հանդիպման ժամանակ, Կոմիտասի մասին նրա պատմածը իմ առջև կենդանացնում էր ո՛չ միայն ողելունը ստեղծագործով, այլ Կոմիտաս-մարդու կերպարը: Երբեմն այն տպաւորութիւն էր ստանում, թէ Կանաչեանը նրանից բաժանուել է ջիշ առաջ, որ հենց հիմա դասից է եկել, որի ժամանակ Կոմիտասը խիստ, յաճախ էլ սրամիտ կատարով ուղղութիւն է տուել իր աշակերտի երաժշտական ունակութիւններին: Լսելով Կանաչեանին, ես այն զրոյցողութիւնն ունեցայ, որ ամենայն մանրամասներով ինձ յայտնի մի նկար լուսաւորել են արեւի լոյսով, եւ զոյները յանկարծ դարձել են կուրացուցիչ պայծառ, կենդանի, շօշափելի:

Քիմ երաժշտական մասնադասութիւնը կտրուկ բեկում ապրեց 1911 թուականին, Պոլսում՝ պատմում էր Կանաչեանը: Այն ժամանակ ես ջութակի եւ դաշնամուրի դասատու էի, միաժամանակ ղեկավարում էի «Մասիս» երգչախումբը: Յիշում եմ Կոմիտասի առաջիկայ ելոյթների շուրջ ստեղծուած հասարակական յուզմունքը: Համերգի հրուէր ստանալով, ես, այն ժամանակ դեռեւս Կոմիտասի ստեղծագործութեան անձանօթ, չէի սպասում ինչ-որ անանձնայատուկ հետաքրքիր բան լսել վարպետից: Անսպասելի եւ ուժեղ էր տպաւորութիւնս, երբ համերգում մէկը միւսի ետեւից հնչեցին Կոմիտասի գոհար երգերը՝ 200 հոգանոց երգչախմբի կատարմամբ: Ինչպիսի՞ հմայք ու դեղեցկութիւն ունէր իւրաքանչիւր երգը, իւրաքանչիւր տողը, ձայնները: Ինչքան զգացմունք, հոգի էր գրուած նրանց կատարման մէջ, ի՞նչ վարպետութիւն: Համերգն ունեցաւ անսովոր յաջողութիւն: Լսածովս յուզուած, հա-

մեքդից չիտուի կս կոմիտասի մասը՝ րն-  
կան՝ բազակահեղիով: «Մի՞թէ այդ ա-  
մէնը դուք էք ստեղծել: Դուք իրօք հան-  
ճաղ էք»: «Ա՛յ, դու ի՞նչ մողես: փա-  
ղաքուշ կատակեց կոմիտասը՝ արուածի  
ունմիջակամութիւնից՝ զգացուած չ՝ դու  
կարծու՛մ եւ: Յիշէ՛ր, այդպիսին է մէկ  
չայիական մեղեդու, իրպէ՛ք թնոյթը, սի-  
չիբ արի: նա զեղեցիկ է»:

Մի անգամ կոմիտասին տասցին, որ  
նրա աշակերտը՝ Կանաչեանը, սկսել է  
չիտանալը կրթութիւնը զրկել: «Ին-  
չնական է՝ ասել է կոմիտասը: նա մեծ  
տագանդ ունի»: Տիպիկով, թէ ինչպէս  
Կանաչեանը չփոթուեց ու կարմրեց,  
կոմիտասն անպատեղիբէն խօսքն ա-  
ւարտել է բարբառազով: «Կանաչեանը  
(նա չէ՛տեղ է «կանաչ») արդէն հասել  
է եւ կարմրել, ինչպէս տեսնում էք»:

Ոչապատ եւ մամուլի եւ տասնմին  
կրթութիւն մասնագէտների կարծիքները  
Կանաչեանի մասին: Երգչախմբային  
արուեստի մէջ նա համարում է ամե-  
նապատեղի երգահանը՝ կոմիտասից  
յետոյ:

1955 թրւականի Փետրուարի 25-ին  
Մարտիկից ուղարկած մի նամակում Կո-  
միտասի աշակերտ Վարդան Վարդսեանը  
Կանաչեանին գրել է. «Եթէ հնարաւո-  
րութիւն ունենայիր արդելու եւ աշխա-  
տելու հայրենիքում, կասկած չկայ, որ  
դու կ'արժանանայիր ամենարարձր պար-  
գեւների, որովհետեւ քո արուեստը  
խելագէտ արժանի է ամենարարձր խրա-  
խուսանքի: Երգչախմբային արուեստում  
չկայ թե՛ղ հաւատարմ: Դու սոսկ չես  
կրկնել մեծ կոմիտասին, այլ դնալով  
նրա դժած ճանապարհով, ներդրել ես  
քոնը, նորը, հարստացրել ես մեր ար-  
ուեստը»:

Ձրացմունքի արտայայտման անմի-  
ջականութիւնը, անկեղծութիւնը, ապ-  
րումների եւ մտքի ներգաշակ միաւո-  
րութիւնը խմբավար Կանաչեանի զեղար-  
կեղանակն կատարման հազարդում են  
կենսական ուժ եւ ճշմարտութիւն: Բա-  
ւական է նրա ձեռքերի, դէմքի, յոնքերի

աննշան մի շարժումը, որպէսզի, երբ զա-  
կու մըը վազրկկոտարա, զգայ, ուղրու-  
նելքի, ամենաճարուղտ կրթչապկան  
ձայներանգների փոփոխութիւնը, հ-  
րանդներ, ուր Կանաչեանին զգտագործում  
է, շապի ծախսումով:

Եւ նոյնիսկ այն ժամանակ, երբ ու-  
նայր չիտանութիւնը նրան զրկեց տե-  
տրդութիւնից, նա երկար ժամանակ չէ  
յանձնում իւ դիմադրում չէր, ու այն  
անհասար պատգարում նրա կամքի է,  
դժի ապաւէնը, երաժշտութիւնն էք,  
Սրէ-օրէ աւելի զժգւար էր, զանուով  
ժարգկանց տեսելը, քայլելը, երգը շ-  
տութիւն ստեղծելը: նա զժուարու-  
թեամբ բեմայարգակ էր ելնում եւ  
ձեռքի փայտիկի մի շարժումով նորից  
յարութիւն տալիս կոմիտասի, Կարա -  
Մուրղայի, Սոփիկոտրեանի եւ միւս կը-  
զահանների ստեղծագործութիւններին,  
որոնք նրա ծրագրերի անփոփոխ մասն  
էին կազմում:

«Կարիք չկայ խօսելու ամէնքին  
յայտնի Բ. Կանաչեանի տաղանդի մա-  
սին: Իս կրկնողութիւն կը լինի, - գրում  
էին թերթերը երգահանի հողեկան  
ձնուածութեան դժուար օրերից տուած  
մի համերգից յետոյ: Կարեւորը որիւ  
րան է: Այսքան տարի լոյսից, տես-  
ղութիւնից զուրկ, նա կարողացաւ դի-  
մադրաւել ճակատադրի հարուածներին  
եւ միզ դերեց իր հոյակապ վարպետու-  
թեամբ: Դասուպարտուած լինելով ամ-  
րող կիտնքում ապրելու, խաւարի մէջ՝  
նա մարդկանց նուիրեց էր հոգու եւ  
մտքի, երաժշտութեան լոյսը»:

Այս սկիւնը վերջ չի ունենալու:  
Այն շարունակելու են Կանաչեանի մե-  
ղեգիտները, եւ նրանց յարձադանող լուե-  
լու է հարազատ երկրի բոլոր անկիւննե-  
րում, ուր բարձր լեռներ կան ու սասն  
աղբերներ, ուր հովիտների թաւիչ կա-  
նաչն է, ծաղիկների, անտառների, դաշ-  
տերի բոյբը:

ԱՆԱՀԻՑ ՏԻՑԻՎՈՒՆ  
1966 թ. Մարտ

### ՄԱՐԴԻԿ ԵՒ ԿՈՅՆԵՐ

Քննարկի՝ թուացող այս նկարիչը, ցարժանությունը ընդհանուր է։ Նրա ցարժի հակառակորդը զուգահեռաբար ստանալի հայտնաբերի մաշկեղան է իր նրբագրիչը, բայց չընկալի Երևանի սրտնչիլի փողոցները, հատկապես ես կաշկեղի մյու հակադրությունների թմայար, հակադրություններ, որոնք ստուգում են հայկական արևոյ։ Յարուբիան կաշկեղ արևին նայում է առանց աչքերը կնոցելու։

Սուրբ ժողովրդայնություն, սէր դեպի հարազատ հողն ու նրա մարգրիկ, համարժեշտ ձևեր ճշգրտություն, ազգային շքեղ երանդ, եւ դեռ շատ աւելին կարող է ստանալ արդի հայ պեղանկարչութեան հոգում ընթացող վարպետ դեզակարիչը։ Բայց կաշկեղը, այս բոլորով հանդերձ նաեւ մեծ պահանջարկով է իր շատ որոշակի աշխարհըրդանումը եւ երեւոյթները ընկալելու սեփական դրացողութեամբ։

Նրա բնանկարները, Հայաստանին ձծուած խանդավառ երգեր են՝ անկախանդ, վառ եւ զարմանալիորէն սրտաժող ու հարազատ։

«Չունդուն աշխարհ»՝ հակառակ ժողովրդը նկարն էն գրեւ զեւր կարկուտին, քննաչա՝ ծերունին է լուսւթ թոթոփորտա ժանկանր՝ մանկանայով։ Լեռները,՝ ստեղծող դէմ են արեւ Չանդունին, իոյ՝ նա թեթեւէր ոչորելով, ցոմ է նահապ աչք ուտրով՝ կապուտաչ, զուարձուտը Չանդուն Վրայի՝ հայտնի նկարիչը կարող է աղպէս տեսնել ու նկարել ջուրը՝ կենարար ու լուսուտը աչք տարերը։ Իհրում էս կաշկեղի ձեւնառնային Չանդունը ու թում է, որ նայն այս ջրից են կեանք առել «Մասունցի Գաթի» առաջին գիւցպուններ՝ Մանասուն ու Բաղդասարը։

«Չունդուն» կարծես ինչ, ինչ մալ ամառայն կիրաւուն ծառերով ու վարթամ կանաչով պատած, սիրահարի բանաստեղծական պատմութիւն է Հայաստանի հայկաժի մայրաքաղաքի մասին։ «Մեր այլին»՝ ծագիկներ եւ նրանց ստուերը պետի վրայ, լուսի արտացոլումները ստան սպիտակաւուն պատին։ Կարող են ստարիել, «բայց չէ՞ որ դու կամերային է»։ Այլ թերահաւատին ես կը պատասխանեմ. «Ոչ, դա քնքուչ է»։



Նորից աշխատային ալպոմից էջեր. վերջին ամիսների կտաներ։ «Բուսարանական այլին» լուս ու խիտ ծառուղի, աղմկում են ծառերը, ցածրիկ նըստարանին ոչ ոք չկայ։ Տպուտութեան այնպիսին է, որ ամառը չենց նոր գրքնուցաց, այրուեց ու անցաւ, եւ նա, ով գիտում էր այդ շքեղ ու երկար ամառը, եկաւ այստեղ հոգանմերին ու պարմացաւ, որ արդէն աշուն է։

Պայեկներ աշխարհին նայում է իր ընտրական Ներսի՝ նոր Հասարակարդի ներդրանով ու ներշնչուած անհատի աշքերով։ Պայեկներ կենսաբախ է ու ուսմանդիկ։ Թում է, նրա վրձինը թ փհհախի է հարցրելին ո՛չ միայն լուսն ու ձեւը, այլեւ հնչիւնը, բոլոր, շարժումը։

Գոյնը կաշկեղի մտա նախ՝ թում է տեղային, բայց ուշադիր նայէք ինչքան նրբերանգներ է օգտագործել նկարչը։

Գոյնը կաշկեղի մտա նախ՝ թում է տեղային, բայց ուշադիր նայէք ինչքան նրբերանգներ է օգտագործել նկարչը։

բիւլը, ստեղծելու համար այդ որոշակի, տեղային գոյնը: Յարութիւն Կալենցի գունային վարպետութիւնը կատարեալ է. դիտողին նա ի վիճակի է ցոյց տալու ծաղկման գերագոյն պահը, բնութեան այն վիճակը, երբ նա իր ստեղծածին տուել է տոյն ամէնը, ինչ կարող էր տալ: Եւ նկարչի հետ միասին մի կողմ քաշուած հիանում է իր եւ նրա արուեստով:

Բայց եւ այնպէս, վերոյիշեալ ժանրերը՝ բնանկարն ու նատյւրմորտը, ինչպիսի կատարելութեամբ էլ տիրապետում է դրանց վարպետը, ամբողջութեամբ չեն բնորոշում նրա արուեստը: Գլխաւորը նրա նկարչութեան մէջ դիմանկարն է: Նրա հերոսները անհանդիսա ընտանոթեան, մեծ մտքի ու ստեղծագործական այրման մարդիկ են: Բնանկարներում ու նատյւրմորտերում նկարիչը պատմում է իր սքանչելի կրկերէ մասին: Մարդիկը այդ կրկերի ուղին ու ծուծն են: Նրանց երազանքը, միտքն ու տաղանդն է, որ առաջ է մղում ժամանակը:

Նուրբ քնարերգու Կալենցը դիմանկարի արուեստում իմաստուն եւ խորաթափանց Հոգիբան է: Նա վաւերագրում է սոցիալիստական Հասարակարգի ստեղծած մարդկային նորագոյն տիպարը: Երիտասարդ ու ծեր, ուրախ ու տխուր, ինքնամփոփ եւ ալխարհի հետ շփուող կենսախինդ մարդիկ: Ահա թէ ինչքան թաղմզան են Կալենցի հերոսները:

Նրանցից իւրաքանչիւրի մէջ արուեստագէտը նկատել է այն առանձնայատուկը, որը բնորոշ է տուեալ անձնաւորութեանը եւ Հաղորդել բացառիկ պլաստիկայով: Երբ նայում ես Յարութիւն Կալենցի դիմանկարներին, զգում ես, որ դեղանկարիչը, քանդակագործի պէս, ձեւը գտնում ու առանձնացնում է աշխատանքի ընթացքում եւ որ նրա կերպարներն այնքան ծաւալային են ու ցցուն, որ ո՛ր որ է դուրս կը գան կտաւի Հարթ մակերեսից:

Յարութիւն Կալենցի հերոսներին դիտելիս, զգում ես նրա նորարարութիւնը այդ դժուարին ժանրում: Ձեւի «պրոկրոստենեան մահիճը», բնաւ, չի կաշկանդում նկարչին: Նա չի ելնում նորսպէս թելադրուած գեղանկարչական մաներայից: Բնորոշ է նրան յուշում մաներան: Կալենցի դիմանկարի կենտրոնը նրա հերոսի աչքերն են: Այստեղ է կտաւի մտքի եւ յոյզի շեշտը:

Կալենցի դիմանկարը, անպայմանորէն մարդկային ճակատագրին է, յաճախ դառը, սակայն իր մէջ պահպանած սէրը գէպի կենդանին, ծաղիկն ու մանուկը: «Ինչորպէ՛ս իմինք» դիմանկարը բանաստեղծի գծուարին ու զաժան կհանքի ուզու, միաժամանակ ողբերգական բանաստեղծի դիմանկար է: «Արտե՛մ Ալիխանեան»՝ դիմանկանի մարդասիրական ու լուսաւոր իմաստութիւն...

Կալենցի կտաններէ դամման իր բազմազանութեամբ տիեզերական է: Չնայած իր կառուցուածքի պարզութեանն ու շեշտուած ռազմապետներ եւ լուսազանցումների բացակայութեան, այդ դամման ստեղծում է բացառիկ յայտնուած, խելացի, խիստ կենսական ու համոզիչ, ազգու եւ գործուն Փոն:

Ամէն մի հասակում էլ ստեղծագործելը իր գեղեցկութիւնն ու հմայքն ունի: Մենք սքանչանում ենք երեսաների նկարներով ու երգերով: Հայաստանում ինձ վիճակուէց լսել մի առամատիկական արտասանութիւն: 90-ամեայ Գառգար Սարգսեանը կատարում էր ժողովրդական հերոսներին նուիրուած պատմական երգեր: Դա սքանչելի էր:

Բայց իսկական արուեստագէտի համար կայ մի յատուկ շրջան, մեծագոյն երջանկութիւն, բերքի ժամանակը: Յարութիւն Կալենցի համար այդ ժամանակը հասել է:

ԱԼԵՔՍԱՆԸԱ ՊԻՍՏՈՒՆՈՎԱ

### ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

1906 Նոյեմ. 13-ին, Եղ. Պոյանեանի ծաւալ, Հայ դրականութեան սահմարին մէջ, կանթեղ մը եւս կը մարէր:

Եղ. Պոյանեանի՝ զրոյի իւրաշատեւի վարդապետ եւ բացաւելի ինքնուսուցիչութեամբ սօսուած բանաստեղծ, իր լրումին չնայած, իր ըսելիքները յաւարտած, կը մեկնէ Երզնէս:

Մնաս է Պաշտպէկ (Մուսա-Տաշ) 1915-ին: Իր Հայրենակիցներու ծանօթ Հերոսամարտին ետք, ժամանակ մը մնալով Փորթ-Սալիս, շէնաղապարին՝ կը վերադառնայ Երզնէս: Աստուծոյ արտօն է շրջապատէն Պէյրուսի շայկան ձեռնարանին մէջ:

Երեսնամեջ ստորիքին կը նուիրուի գրական ասպարէզին: 1944-ին կը հրատարակէ «ԱՄԻ Եւ ՎԻՅԱ» հատորը, 1948-ին՝ «Հողը», 1961-ին՝ «Բուրբ Գաւակներու», 1963-ին՝ «Տօնաբ Տարաքիթ», 1964-ին՝ «Երկու Նամակներ», 1966-ին՝ «Իմ Երգ» հատորը: Անթիւ գրուածքներ ունի նաեւ Ափիւզի դանազան թերթերուն մէջ:

Եղ. Պոյանեանի քնարին վրայ, փոխի ի փոխ կը թրթոյն Երզնէս, սիրուածներ, մասուած, Հայրենիքին, տունին, զեղեցիկին, եւայլն: Մերթ՝ քնարի փոխան, գոտ շեփորով կը նշնցնէ Երզնէս պայտարի, արդարութեան, Աստուծոյ, հողին, դիւզին ու զեւազցիին:

Բացի իր անմեծական խաղաղաշուք ապրումներէն, որոնք հրակէզ որտէ՛ մը կը բխին, Եղ. Պոյանեանի ստեղծագործութիւններուն մէջ խոր արժանազան կայ իր ստուազած՝ յայտ հերոսականութիւնը: Անցեալի սնցեալին, զգացումներուն, ազատաշունչ հոգիին, տենչերուն:

Իր ստաղանդին, արտասո մտքին, տեսնած երեւանագրութեան եւ զգայուն հոգիին շնորհիւ, անիկա կրցաւ արտակարգորէն ինքնատիպ ու մը, յորդարուի գրելու մը ստեղծել:

Եղ. Պոյանեան յաղողած է անքան լճան ինքզինքը զենի իր զործերուն մէջ, անքան անճանաչող Նկարագիր տալ իր երկին, որ կարծես զրիշը իր արիւնին մէջ թաթխած է: Իր սօսէն մէկ տողին մէջէն, ամբողջ սիրտն է, որ կը արօքէ եւ խոտմակոծ հոգին կը սուսանք էլէ էլ:

Իր գրութիւններուն մէջ, ընդհանրապէս, անէլի բուն զգացում կայ քան մասնաձեռն խորութիւն:

բութիւն: Բայց, լաւագոյն կէտուն մէջ, դադար եւ զգացում ներշունակորէն ընդհարուած են:

Իմաստալից թան մը կայ իր խոսնուածքին մէջ: Մութ, անճանթ բաներու սիրահար, Հանգագործի մը նման, միշտ ետեւէ է պեղծու, թաքուն գոմէն երեւան հանելու: Սուրբ մըն է, որ մարդու հոգիին խորը եւ տիեզերքի զոտին մէջ խորասուզուելով կը տքնէ, մինչեւ օրս զգտնուած նորութիւններ յայտնարեցնու:

Աւշադար է իր լեզուն, որ հարազատ հանելին է իր մասնակիցներուն եւ իր անհանգստ հոգիին: Սովորական աշխարհաբարով պիտի չկարենար իր արտասովոր ըսելիքները յայտնել: Անկէ՛ նիւ մը, մասնաւոր աշխատանք մը՝ նորոտողի բառեր, նորածն ստութիւններ կերտելու, որոնք սպասուիչ զայտառութիւն մը կու տան իր նկարագրին եւ ինքնատիպ անհասարակութեան:

Հրաբխային պոթիւմներու հետեւեւեւով, իր ունի հասարակչութիւնը մերթ կը խախտի, իր գրութիւնը անբնական ծաւալ կը սասնայ եւ զարգացնեն արժանաւանկուն զնայտը իր ընկանտն ուղիքին կը շնչի:

Բայց, այդ ստորիքնայ զեղումներուն մէջ, վրո արտիկներ կայ իր արտին, հանելի լեռնութիւնը իր արիւնին եւ ուժգնութիւնը իր կրկին: Կարգալով Եղ. Պոյանեանի լաւագոյն էջերը, ընթերցողը ակամայ կը մտնայ ինքզինքը: Կը հմայուի եւ կը տարուի այդ բուն յորճանքին՝ նոր եւ սիրալի բաներ տեսնելու արժանազանութեամբ: Եւ քիչ անգամ է որ յուսախաբ կ'ըլլայ իր անկեղծութիւններուն մէջ:

Իր զործը գրուելէ զարմնող սուրաններէն մէկն է նաեւ իր անխաբար, անկաշտ նկարագիրը, ըմբոստ եւ ազատատենչ Հայու ոգին, որ միշտ ներկայ է իր գրուածքներուն մէջ:

Եղ. Պոյանեան մարդիկ պէս յայտնուեցաւ, մասն ամպերու մէջէն փայլատակեց եւ յանկարծ աներեւութացաւ Հայ դրականութեան հորիզոնին մէջ: Անիկա, մեր արդի դրականութեան վրայ աւելցուց, նոր շողերով լուսաւոր, նոր երանգով նոր եւ նոր աւելով զեղուն էջեր:

Հ. ԵՓԻՄ ՏՆՐ ՂԱԶԱՐԵԱՆ



### ԱՐԱՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆ

«Գրական Քերթ»ի 14 Յուլիսի քի-  
ւին մէջ, կսկիծով կարգացրին Հայաս-  
տանի Երիտասարդ բանաստեղծներէն  
Արարատ Այվազեանի վաղածամ մտա-  
ւան գոյծը:

Ուճքըրցող լայն հասարակութեան  
չստ ճանօք անուն մը չէր Այվազեան.  
Ֆիոթարկալի իրագործումներ կատարած  
չէին իր անունին, բանաստեղծ էր սա-  
կայն, ու իր մանը անասարտ բանի մը  
տիրութիւնը կը ձգէ:

Վստիզմն Գաւթեանի եւ Պարոյր  
Սեւակի սերունդին կրտսեր բանաս-  
տեղծներէն էր ստարաբարտ այս երի-  
տասարդը, քը ստեղծումի բացառիկ ու  
բախտաւոր վայրկեանի մը՝ բացառիկ  
ու բախտաւոր անակնկալի մը առջեւ.  
կրնար դնել ըմբերօղը, բայց ասկէ  
առաջ եկաւ միւս անակնկալը, ոն'ըր,  
սիստ'ս:

Պարզ բաներու, պարզ մարդոց  
պարզ բանաստեղծի էր Արարատ Այ-  
վազեան եւ իր կտակած էմբռումները,  
սովն ըմբերները, սովն քարգութեան  
ընչտաւած, լատկանիշները՝ անկնոյթ են  
ու անխիչակոն:

Իր վանուան տարբով, կաւ տանի  
Հայաստանի գրողներու, վարչութիւնի  
խօսքը եւ քանի մը քերթումներ վեր-  
ստի ինքնարթնի: Ա Վ Վ

Անժամանակ Պաշտ մը շարքերից  
իչեց սովետահայ բանաստեղծ Արարատ  
Այվազեանի կեանքը:

Արարատ Լեւոնի Այվազեանը ծնունդ  
է 1923 թուականին, Էջմիածնի շրջանի  
Ներքին Ջեյմս գետում, ուր աշխատել  
է միջնակարգ դպրոցն աւարտելուց յե-  
տոյ, Ապա սովորել է Երեւանի պետա-  
կան համալսարանի բանասիրական ֆա-  
կուլտետում, որն աւարտելուց շուտ  
տարից վերադարձել է գետը՝ սրպէս  
մուշկերի լեզուի եւ գրականութեան ու-  
սուցիչ: 1957 թուականից Արարատ Այ-  
վազեան աշխատում էր Էջմիածնի շր-  
ջանային Քերթում՝ որպէս խմբագիր,  
պատասխանատու քարտուղար:

Այվազեանը նաեւ ու սրտածո թս-  
նադրողութիւններ էր գրում հայերէնի  
ընդէ պոէզիաներ, աքորիք ու Արարատ-  
եան դաշտի աշխարհագրական մասին,  
իւր գանձաստեղծական խորհրդածրէք էր-  
նեւիւմ՝ ցանքածայն, բայց հողով ին-  
սում էր իր ժողովրդի ճասին:

Նա Քարմ արտադրութիւններ է  
ընել մէջ պոէզիաներ իր «Քոյլանք»,  
«Գրողի առաւել», «Արաքսի այն պ-  
փին» եւ վերջերս, մահաց ընդամենը  
մէ կրկու ամիս առաջ, լայն տեսած  
«Նշոյթ ու խաղողի երգեր» գրքերով:  
Նրա «Գրողի սրտածո» պիտի Քարդ-  
մանու է որակներէն:

Արարատ Այվազեանը համեստ ըն-  
տելի ժողովրդային էր, բարեհամբար ըն-  
դէք, տղնի քաղաքացի էր անուշ  
մարդ, ուր լայնած էր ժողովրդի սրտ-  
մտաւիտերը, եւ կոնքի նման սովոր  
էր երեւում, կոնքի նման հաստատու  
բայց հեանդութեան քաղաքացի նրան:

Արարատ Այվազեանի պաշտօն իր  
չպտակը նրա լատկանի երգիչով վաւ  
իւ մտայ իրեն ճանաչողներէ, իր երգե-  
թը տիրողներ ու յարգողները պտե-  
րում:

ԱՅՎԱԶՏԱՆԻ ԿՐՈՂՆԵՐԸ ՄԻՈՒԹԵԱՆ  
Ա Վ Վ



Հնձուտրները վերադարձան,  
հազարաթիւն իջաւ արտին,  
նւ մնացինք դաշտում արձակ  
Մէկ ես, մէկ հա, մէկ էլ բարդին:

Կրա դէմքին ես ճայեցի,  
Սիրտս տուած խոյս տնուրջին,  
Ցուգումս ձայնով թոթովեցի  
Եւ անբնօր սէրն տուային:

Իսկ հա այնքա՛ն, այնքա՛ն շիկնեց  
նւ քնիշաքար ինձ մտեցաւ,  
-Որ վերջապէս արտերի մէջ  
էլ աւելի գեղեցկացաւ:

Շողաց լուսնի մանգաղն արծաթ,  
հրկուներ իջաւ արտին,  
Դանգնէլ էինք դաշտում արձակ  
Մէկ ես, մէկ հա, մէկ էլ բարդին:

Ես գիտեմ ինչու շողաց պարտեզում  
Կարծ ծաղիկներն են գլշերը լացել,  
Ես իսկականում եմ տոխակի լեզուն,  
Սիրուց է հոգիս իմաստուն դարձել:

Ես գիտեմ կանաչ գետափի ուռին  
Ինչու է այդքան ջրին կաացել,  
Կա սեղանում է քով հաւրայրը ջրի,  
Սիրուց է հոգիս իմաստուն դարձել:

Պայծառ արեւը սիրով է շողում,  
Սիրուց է լուսինն այսքան գաղկացել,  
Սիրով են սերմեր ծլում մայր հողում,  
Սիրուց է հոգիս իմաստուն դարձել:

Թէ՛ գեղեցիկ մահ, թէ՛ անմահութիւն  
Մէրն է պարգեւում մարդուն լիանում,  
Եւ սիրեցերքը սիրով է լեցում,  
Սիրուց է հոգիս իմաստուն դարձել:

ԱՐԱՐԱՍ ԱՅՎԱԶԵԱՆ

### ՅԱՆԿԱՊԱՏԸ

Մի փոքրիկ պարտէզ, մի փոքրիկ տնակ,  
Մեր բակից գտնուած մի ցանկապատով,  
Ինչպէս հեշիարի հետաւայ դգեակ,  
Լցնում էր հագիս անուս կարտած:

Ակրում էր այնտեղ իմ սէրը պայծառ,  
Աչքերը գուլով, ճիծողը զնգուն,  
Ես երգում էի նրան անդադար,  
Ցերեկ՝ անհամգիտս, գիշերը՝ անքուն:

Երագում էի կեանքում լինել քաջ,  
Լինել անուանի ա նշանաւոր,  
Կա միայն նրա հայեացքի առաջ  
Բացել իմ սիրոյ ցազանհենք խոր:

Երագում էի լագթել բշմամուն,  
Եւ ուսն վաստակից կոչում հերթի,  
Եւ այն ժամանակ կարտով անուս  
Ցանկապատն անցնել փոքրիկ պարտէզի:

Կուում էի ես մարտում բացարտ,  
Որտեղ քաղաքներ Կամքիս ազատում,  
Որ փոքրում լինեն կեանքում ինձ համար  
Մի հողէ խրճիթ, մի սղջիկ ժպտուն:

Քնցայ փշուրք սահմաններ բազում,  
Անգայ օդաբկումս քանի խրճումս,  
Որպէսզի նեոս հայրենի գիւղում  
Հեշտորեն անցնեմ կի հին ցանկապատ:

Հեոուրց եկայ տուն եր մի ասպետ,  
Տեսայ հայրենի պարտերը կանաչ,  
Մաղխունքով շաքար, աչքերով շաղար  
Ոչն ազիկը ինձ կու ընդառաջ:

Կա կարտայ տուց շիկնած բերկրահից,  
Կա սիրտը տուց ջերմ ա սիրտաւոր,  
Կրտեց պարտեզ մեր փոքրիկ բակից  
Եւ շի բլծանում ոչ մի ցանկապատ:

ԱՐԱՐԱՍ ԱՅՎԱԶԵԱՆ



**«ՄԱՌԱՍ ԼԵՐԱՆ ՔԱՌԱՍՅԱՆՈՒ ՕՐԵՐԸ»  
ԱՐԱՅԻՆԻՆԻ ՔԱՐՊՄԱՆՈՒՄ**

Ծանօթ տրաքազտ Աւերիս իսպնեմամ ա-  
բարերէնի քարգմանամ է Ֆրանց Վերֆելի «Մու-  
նա Լիբան Քառասուն Օրերը»:  
Միջազգային գրական շքանակներէն գնա-  
նատուած եւ լայն ընդունելութիւն գտած այս  
գիրքը, տարակոյտ չկայ թէ հետաքրքրութեամբ  
պիտի կարդացուի նաեւ արաբական աշխարհի  
ընթերցատէր ժողովուրդին կողմէ:  
Գրական մաճուր լեզուով արաբերէնի քարգ-  
մանուած «Մուսա Լիբան Քառասուն Օրերը»,  
լոյս պիտի տեսնէ այս ամսաւ, 1930 էջերով եւ  
ներկայանալի տպագրութեամբ:

**ՃԱԲՈՆԱԿԱՆ ԵՐԳՁԱՅՈՒՄԻ ՄԸ  
«ՆՈՒՄԵՐՆԱԿԱՆ ԵՐԳՁՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐԷՆՈՎ»**

Աշխարհաւոչակ երգչուհի Գոնար Գասպար-  
եան, որ վերջէրս փայտն շրջապտոյտ մը կա-  
տարած էր Ամերիկաներու մէջ, ամերիկացի  
Քոնալիկի մը յայտարարած է, թէ ցարգ շուրջ  
1900 երգահանդէս տուած է զանազան երկերե-  
րու մէջ: «Անտանայի յիշատակ մը կը պահեմ  
ձափանէն, - ըսած է երգչուհին, - ինչպէս երկ-  
օտն հովիտներէ կողմուած երգչախումբ մը,  
«Նիմեանկը» երգեց հայերէնով»:

**ՔԻՐՄԱՆԵՐԷՆԷ - ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՒԱՐԱՆԵՆԻՄ**

Քիրմաներէնէ - հայերէն անուրա-  
ծուալ եւ արժէքաւոր բառարանը՝ լոյս տեսած  
է Վիեննա, 1889-ին. Միխայիլովսկիի շնորհիւ  
վանդին մէջ, ուխտաւան կրօնատրի մը տֆնա-  
չան աշխատանքով:  
Եւ այն լեզուներու երկրորդ քառաբանը յօրի-  
նած է Ե. Ֆրանկեան: Լոյս տեսած է Քիֆիս,  
1913-ին: Սրբորդը՝ աշխատասիրած Տիրայր Ֆը-  
րուսեան: Լոյս տեսած է Միւնխէն, 1862 թուին:  
Զարթոյցը յօրինած եւ հրատարակած են Գրիգոր  
Անդրեանեան եւ Արտաշէս Տիրացեան (երկուսն  
այ կը դասախօսեմ վաւերի Բրիտով լեզուագի-  
տական ռուսամասնին մէջ):

Նոր քառաբանը կը համապատասխանէ այդի  
պահանջներուն:  
Լոյս պիտի տեսնէ նաեւ գերմաներէն-հայե-  
րէն անօճոն քառաբան մը Քի պետս զպրոցակա-  
նացս:

**ԵՐԳՁՈՒՆԻ ԱՆՈՎ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ  
ՅԱՋԱՂՈՒԹԻՒՆԸ**

Միջազգային մրցումի մը ժամանակցելու հա-  
մար տանել մը ի վեր Սոֆիա գտնուող պոլսա-  
հայ երգչուհի (սովետացի) Ալիս Մանուկեան կա-  
րէն որ յաջողութեամբ արժանացած ու բարձր  
գնահատանքին արժանացած է:

Տիկին Մանուկեան անաջին աւարտականին  
մասցած եւ 70 ժամանակցողներու մէջէն յաջողած  
է մաս կողմէ ընտրուած 16 երգիչներուն, 24-ի  
վրայ համադրելով 10 կէտ, արժանազորուած ան-  
տանկազոյն 21.70 կէտի վրայ:

Միւս կողմէ, պոլսահայ երգչուհին պուլ-  
կարական երգերը լաւագոյնս մեկնարանող երեք  
երգչուհիներէն մէկը հանդիսացած եւ 500 լեզա  
մրցանակ-պարգևելին արժանացած է:

Տիկին Մանուկեան յատմիկայ տարուան  
համար հրատարակուած է Սիլեպի եւ Պուրքէշի  
օրերաներէն՝ ժամանակցելու համար զանազան օ-  
րերաներու ներկայացումներուն, անդանաւ օւ-  
ժերու խաղակցումներու:

**ԶՈՐՍ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՅՈՒՑԱԿԱՆԿԵԱՆ**

Վերջերս, Խաւիտոյ Փարւսա Հազարին մէջ,  
չորս հայ նկարիչներ միասնաբար կազմակերպած  
են ցուցահանդէս մը, որ բացառիկ յաջողութիւն  
գտած եւ արժանացած է խաղաղի արուեստա-  
ւերններու անվերապահ զնահատումէին:  
Զորս նկարիչներն են Սուրբն Երեցեան, Վե-  
նետիկի Գեղարուեստից վարժարանի երկրորդ  
տարուան ուսանող, ներկայացուցած է հայկա-  
կան ներշնչումի գիծերով Տանթի ամբողջ «Աւ-  
տուածային կատակերգութիւնը»:  
Կարապետ Տէմիրճեան, խմբակին երրորդը-  
նը, արդէն իսկ ամուսնացած եւ Խաւիտա հա-  
տատուած է:  
Երուանդ Ճանիկեան, կը յաճախ գարուա-  
րայնութեան համալսարանը:  
Լիւիսան Պերեմիկեան խմբակին ամենէն ն-  
քիտաւարդն է:

## **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ**

ԵՐԿԵՐ Ա. (Գիւղը եւ Անճրիւք), Համաստեղ, Պէյրուք, 1967:

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆՆԵՐՈՎ (դէպքեր, դէմքեր, ապրումներ), Ս Վրաց-  
եան, Պէյրուք, 1967:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐՈՖԵՍՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԴԷՄ ԴԻՄԱՑ (տպատարու-  
թիւններ), Ղ. Ժիրայր, Թեհրան, 1967:

ՄՈՆԻՐՆԵՐ ԵՒ ԿԱՅՄԵՐ (բանաստեղծութիւններ), Եղիա Երուանդ  
Մէլէքեան, Պէյրուք, 1967:

ԿԵԱՆՔԻ ՀԵՏ (բանաստեղծութիւններ), Ժորժ Բաբայեան, Թեհ-  
րան, 1967:

ԿՐԱԿԷ ՇԱՊԻԿԸ (վէպ), Կ. Փօլատեան, Պէյրուք, 1966:

ԱՐՏԱՒԱԶԳԻ ԱՆԴՈՒՆՈՒՆԷՆ ԴԷՊԻ ԳԱԳԱԹ (վիպակ), Գուտգի Պ.  
Միքայէլեան, Պէյրուք, 1967:

### **ՄԱՄՈՒԼԻ ՏՅԿ Է**

ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԷ

Ա. ԱՐՓԻՆԷ

**ԿԵԱՆՔԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒՆՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@